1201
հայերեն

Vh.

2004

Printed in Turkey

# ԴՈՒՌՆ

# ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

## ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԼԵԶՈՒԻ



Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՂԱԶԱՐՈՒ
ՅԱՄԻ 1833 ՌՄՁԲ

491.99-5

ԵԿ ՄՈՒՏ, ՀԱՄԲԱԿ ՑՈԳՆԱՀԱՆՃԱՐ,



ԸՆԴ ԴՈՒՌՆ ՈՐ ԶՔԵԶ ՑԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԱԾԷ ՏԱՃԱՐ ։

Printed in Turkey

# ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Թէպէտ գրաբառ սորվել ուզողին՝ քերականութիւն պակաս չէ, բայց շատերը կան որ խիստ խորունկ սորվիլ չեն ուզեր, հապա այնչափ որ գրաբառ հասկընան, ու պարզ կերպով շարադրեն։ Ասանկները տեսնելով եղած քերականութիւններուն մենծութիւնը, ու երկան բարակ մեկնած կանոնները, կըյուսահատին ու սիրտերնին առաջ չերթար գրաբառ սորվելու։ Անոր համար Տ. Միքայէլ վարդապետը Չամչեան, որ մեր ազգին մէջը առջի կարգաւորեալ քերականութիւն շինօղը եղաւ, գիտնալով ասոր հարկաւոր ըլլալը ան՝ ըսկսաւ համառօտիկ քերականութիւն մը շինելու. բայց չիկրցաւ լըմընցընել, մահը՝ վրայ հասնելով։ Ուստի հիմայ մենք իրեն մտածածը ընելով, աս կարճ քերականութիւնը շինեցինք՝ իր շինած մենծին կարգովը ու պարզ ոճովը։

Թէ որ աւելի բանմընալ կար գիտնալու՝ Պ. Գաբրիէլ Աւետիքեան վարդապետին քերականութենը մէջը, կամ՝ աւելի դիւրուն մը-նալ կրնար ըլլալ սորվողին նէ, եւելցուցինք։ Անանկ որ՝ աս պզտի գրքուկս սորվողը կրնայ աղէկ գրաբառ հասկընալ, ու առանց սխալի շարադրել։ Խրթին շարադրութին ընել ուզողին ալ՝ կըլլայ աս գրքուկը դուռի մը պէս, որ նախ ասիկայ սորվե-լով՝ ետքը մէկալ մեծ քերականութիւնները դիւրաւ կրնայ սորվիլ։



# ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

Հց. Ի՞նչ է քերականութիւնը.

Պտ. Քերականութիւնը գիտութիւն մընէ, որ շիտակ խօսիլ ու գրել կըսորվեցընէ:

Հց. Խօսքը քանի՞ բանէ կըձևանայ.

Պտ. Չորս բանէ, որ ասոնք են. գիր, վանկ, բառ, բան:

Հց. Ի՞նչ է գիրը.

Պտ. Գիրն է գիծ մը, որ հնչմունքի մը նշան է. Օր. ա:

Հց. Ի՞նչ է վանկը.

Պտ. Ձայնաւոր գիր մը մինակ կամ բաղաձայնի հետ կըպած, որ կըհնչուի. Օր. աբ:

Հց. Ի՞նչ է բառը.

Պտ. Վանկ մը կամ շատ վանկեր քովէ քով դրած, որ բան մը կընշանակեն. Օր. այբ կմ աբբայ:

Հց. Ի՞նչ է բանը.

Պտ. Բառ բառի քով դրած, որ մարդուս միտքը կըյայտնեն. Օր. այբն է գիր:

Հց. Քանի՞ կերպ բառ կայ, կամ մասունք բանի քանի՞ են.

Պտ. Ութը. անուն, դերանուն, բայ, ընդունելութիւն, նախադրութիւն, մակբայ, շաղկապ, միջարկութիւն:

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## Անուանին վրայ։

Հց. Ի՞նչ է անունը.

Պտ. Անունն է մասն բանի, որ իրմը կմ՟ բանիմը ի՛նչպէս ըլլալը կըցուցունէ։

Հց. Քանի՞ տեսակ անուն կայ.

Պտ. Երկու. մէյմը գոյական՝ որ իրմը կըցուցունէ. օր. մարդ, հաց. մէյմընալ ածական՝ որ բանիմը ի՛նչպէս ըլլալը կըցուցունէ. օր. սուրբ, բարի։

Հց. Անունին պարագաները քանի են.

Պտ. Գլխաւորները երկուք են. թիւ ու հոլով։

Հց. Թիւը ի՞նչ է, ու քանի՞ է.

Պտ. Թիւը բանիմը համրանքը կըցուցունէ. թէ որ մէկ հատ է՝ կըսուի եզակի, օր. արքայ թագաւոր, իսկ թէ որ երկու կամ շատ են՝ կըսուի յոգնակի, օր. արքայք թագաւորներ։

Հց. Հոլովը ի՞նչ է, ու քանի՞ է.

Պտ. Հոլովն է անունի մը կերպ կերպ փոխուիլը սկիզբէն կմ՟ վերջէն, որ տասը կերպով

կըլլայ, ու աս տասը հոլովներուն անունը ասոնք են. ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, պատմական, գործիական, պարառական, ներգոյական, կոչական։

Հր. Ամեն անուններուն հոլովները մէկ կերպով կըլլան.

Պխ. Չէ. այլ տասնըմէկ կերպ հոլովումն կայ։

Հր. Ըսէ ինծի առջի կերպ հոլովումը.

Եղակի.

| | | |
|---|---|---|
| Պխ. Ուղղական. | Բառ. | Լուղէթ. |
| Սեռական. | Բառի. | Լուղէթին. |
| Տրական. | Բառի. 'ի բառ. | Լուղէթէ. |
| Հայցական. | զԲառ. | Լուղէթի. |
| Բացառական. | 'ի Բառէ. | Լուղէթտէն. |
| Պատմական. | զԲառէ. | Լուղէթտէն էօթիւրի. |
| Գործիական. | Բառիւ. | Լուղէթ իլէ. |
| Պարառական. | զԲառիւ. | Լուղէթ էթրաֆընտա. |
| Ներգոյական. | 'ի Բառի. 'ի բառ. | Լուղէթտէ. |
| Կոչական. | ով Բառ։ | էյ Լուղէթ։ |

Յոգնակի ։

| | | |
|---|---|---|
| Ուղղական․ | Բառք․ | Լուղէթլէր․ |
| Սեռական․ | Բառից․ | Լուղէթլէրին․ |
| Տրական․ | Բառից․ 'ի բառս․ | Լուղէթլէրէ․ |
| Հայցական․ | զբառս․ | Լուղէթլէրի․ |
| Բացառական․ | 'ի բառից․ | Լուղէթլէրտէն․ |
| Պատմական․ | զբառից․ | Լուղէթլէրտէն էօթիւրիւ․ |
| Գործիական․ | բառիւք․ | Լուղէթլէր իլէ․ |
| Պարառական․ | զբառիւք․ | Լուղէթլէր էթրաֆընտա․ |
| Ներգոյական․ | 'ի բառս․ | Լուղէթլէրտէ․ |
| Կոչական․ | ով բառք ։ | Էյ Լուղէթլէր ։ |

Որչափ բառեր՝ որ սեռականը ի, ու գործիականը իւ կվերջանան նէ, աս հոլովման տակը կերթան․ զք

Սիրտ, սրտի, սրտիւ․ սիրտ․ եիւրէք ։
Մատեան, մատենի, մատենիւ․ գիրք․ քիթապ ։
Հէն, հինի, հինիւ․ գող, աւազակ․ ղուրսանտ, չէթէճի ։

Հր․ Աս սկիզբը աւելցուցած գիրերդ ի՞նչ կըսուին․

Պա․ Նախդիր․ ուստի երկու տրականին մէկը կըսուի նախդրիւ տրական, ինչու որ

ուղղականին վրայ նախդիր մը դնելով կըշինուի. որպ 'ի բառ. Իսկ մէկալը կըսուի վերջահոլով տրական, բառին վերջը փոխուելուն համար. որպ բառի:

Հ. Ամէն անուններու ալ ա՞ն նախդիրները կըդրուին.

Պ. Չէ. այլ թէ որ անունին ձայնաւոր տառով սկըսի նէ՝ Ի տառին տեղը յ կըդրըուի, որպ յարքայ. երբեմն ալ երկու նախդիրը մէկտեղ կըդրըուի, որպ 'ի յարքայ: Իսկ նախդրին տրականին Ի տառին տեղը կըդրըուին նաև ց, առ, ընդ. թէ՛ բաղաձայնով և թէ ձայնաւորով ըսկսած բառերուն: Իսկ կոչականը առանց ովի ալ կըլլայ:

Հ. Ըսէ ինծի երկրորդ կերպ հոլովումը.

| | | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|---|
| Պա. | Ուղ. | քաղաք. | քաղաքք. |
| | Սեռ. | քաղաքի. | քաղաքաց. |
| | Տրա. | քաղաքի. 'ի քաղաք. | քաղաքաց. 'ի քաղաքս. |
| | Հայց. | զքաղաք. | զքաղաքս. |
| | Բաց. | 'ի քաղաքէ. | 'ի քաղաքաց. |
| | Պատմ. | զքաղաքէ. | զքաղաքաց. |
| | Գործ. | քաղաքաւ. | քաղաքօք. |
| | Պար. | զքաղաքաւ. | զքաղաքօք. |
| | Ներգ. | 'ի քաղաքի. 'ի քաղաք. | 'ի քաղաքս. |
| | Կոչ. | ով քաղաք: | ով քաղաքք: |

Որ բառերուն որ սեռականը ի ու գործիականը ՈՎ կըլլայ նէ, ասանկ կըհոլովին մը

Պարիսպ, պարսպի, պարսպաւ. ՏԱՃ. ՀԻՍԱՐ :
Ազնուակ, ազնուի, ազնուաւ. ԽՐԱՐԱՆՑԱՄ. ՉԷԼԷՊԻ :
Վարագոյր, վարագուրի, վարագուրաւ. ՃԱՐԱԳՈՒՐ. ՓԷՐՏԷ :

Շատ բառեր կան, որ թէպէտ առջի հոլովման տակը կերթան՝ բայց երբեմն ասոր պէս ալ կըհոլովին. մանաւանդ յոգնակի սեռականնին. ինչպէս խօղ բառին՝ թէ խօղին կըլլայ և թէ խօղաց :

ՀՑ. Ո՞ր է երրորդ կերպ հոլովումը.

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| ՊԽ. ՈՒՂ. | գետ. | գետք. |
| ՍԵՌ. | գետոյ. | գետոց. |
| ՏՐԱ. | գետոյ. 'ի գետ. | գետոց. 'ի գետս. |
| ՀԱՅՑ. | զգետ. | զգետս. |
| ԲԱՑ. | 'ի գետոյ. | 'ի գետոց. |
| ՊԱՏՄ. | զգետոյ. | զգետոց. |
| ԳՈՐԾ. | գետով. | գետովք. |
| ՊԱՐ. | զգետով. | զգետովք. |
| ՆԵՐԳ. | 'ի գետ. | 'ի գետս. |
| ԿՈՉ. | ով գետ : | ով գետք : |

Որչափ բառեր՝ որ ուղղականը ու, ու գործիականը ով կվերջանայ նէ, աս հոլովման տակը կերթան. զոր

| | |
|---|---|
| Քաղցու, քաղցուոյ, քաղցուով. | Նոր գինի. շըրա: |
| Անասուն, անասնոյ, անասնով. | Կենդանի. հայվան, ջանավար: |
| Կնիք, կնքոյ, կնքով. | Անուանի նշան. մէօհիւր, թամղայ: |
| Ցուպ, ցպոյ, ցպով. | Գաւազան. դէյէնէք: |
| Բոյս, բուսոյ, բուսով. | Կանանչեղէն. օթլաք: |
| Ունդ, ընդոյ, ընդով. | Ընդեղէն: |
| Սեամ, սեմոյ, սեմով. | Դրան վերի դին. չէմ, էշիկ: |
| Սէր, սիրոյ, սիրով. | Սէր. մուհապպէթ: |

Աս հոլովմանս պէս հոլոված բառերուն շատին տրականը ու ներգոյականը ում կվերջանայ. մանաւանդ ան բառերունը՝ որոնց վերջի վանկը ին կամ եալ կվերջանայ. զոր Վերին, վերնում՚ի վերնում. Ասացեալ, ասացելում էն: Ոմանց բացառականն ալ մէ կվերջանայ. զոր Աջ, յաջոյ կամ յաջմէ. Հին, ՚ի հնոյ կամ ՚ի հնմէ. Խոր, ՚ի խորոյ կամ ՚ի խորմէ. Առաջին, յառաջնոյ կամ յառաջնմէ:

Շատ բառեր ալ թէպէտ աս հոլովմանս տակը կերթան, բայց եզակի սեռականնին ու բացառականնին առջի հոլովմանը պէս ալ կըլլայ. ինչպէս Բան բառին սեռականը ու բացառականը՝ որ կըլլայ բանոյ, ՚ի բանոյ, կըլլայ նաեւ բանի, ՚ի բանէ:

Հջ. Ըստ ինծի չորրորդ կերպ հոլովումը.

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Պխ. Ուղ. | Եկեղեցի. | Եկեղեցիք. |
| Սեռ. | Եկեղեցւոյ. | Եկեղեցեաց. |
| Տր. | Եկեղեցւոյ. յԵկեղեցի. | Եկեղեցեաց. յԵկեղեցիս. |
| Հայց. | զԵկեղեցի. | զԵկեղեցիս. |
| Բաց. | յԵկեղեցւոյ. | յԵկեղեցեաց. |
| Պատմ. | զԵկեղեցւոյ. | զԵկեղեցեաց. |
| Գործ. | Եկեղեցեաւ. | Եկեղեցեօք. |
| Պար. | զԵկեղեցեաւ. | զԵկեղեցեօք. |
| Ներգ. | յԵկեղեցի. յԵկեղեցւոջ. | յԵկեղեցիս. |
| Կոչ. | ով Եկեղեցի: | ով Եկեղեցիք: |

Որչափ բառեր՝ որ սեռականը ւոյ, ու գործիականը եաւ կվերջանայ նէ, աս հո֊ լովման տակը կերթան. ինչ

Կղզի, կղզւոյ, կղզեաւ. — ՆՂՂԻ. ԱՏԱ:

Գործի, գործւոյ, գործեաւ. — ԳՈՐԾԻՔ. ԱՒԱՏԱՆԸԼԸՔ, ՔՈՒՍԱՏ:

Վկայուհի, վկայուհւոյ, վկայուհեաւ. — ՄԱՐՏԻՐՈՍ ԷՂԱԾ ԷԻՆ:

Աս հոլովմանս տակը դնացող բառերէն ոմանց յոգնակի սեռականը ու գործիա-կանը երրորդ հոլովմանը պէս ալ կըլլայ · Օր · Քաղաքացի , քաղաքացեաց կամ քա-ղաքացւոց , քաղաքացեօք կմ քաղաքացւովք · Սնոտի , սնոտեաց կմ սնոտւոց , սնո-տեօք կամ սնոտւովք ։

Հջ · Ըսէ ինծի հինգերորդ կերպ հոլովումը ·

| | Եզակի · | Յոգնակի · |
|---|---|---|
| Պխ · Ուղ · | Աղեղն · | Աղեղունք · |
| Սեռ · | Աղեղան · | Աղեղանց · |
| Տրա · | Աղեղան · յԱղեղն · | Աղեղանց · յԱղեղունս · |
| Հայց · | զԱղեղն · | զԱղեղունս · |
| Բաց · | յԱղեղանէ · | յԱղեղանց · |
| Պատմ · | զԱղեղանէ · | զԱղեղանց · |
| Գործ · | Աղեղամբ · | Աղեղամբք · |
| Պար · | զԱղեղամբ · | զԱղեղամբք · |
| Ներգ · | յԱղեղան · յԱղեղն · | յԱղեղունս · |
| Կոչ · | ո՛վ Աղեղն ։ | ո՛վ Աղեղունք ։ |

Ամմէն բառ՝ որ սեռականնին ան կամ եան , բացառականնին անէ կմ եանէ , ու գոր-ծիականնին ամբ կամ եամբ կըվերջանայ նէ , աս հոլովման տակը կերթան · Օր

Անուն , անուան , անուամբ ․ — անուն ․ ատ ; իսմ ։
Փայծաղն , փայծեղան , փայծեղամբ ․ — ճայծաղ ․ փալախ ։
Պոյտն , պուտան , պուտամբ ․ — պտուկ ․ չէօմլէկ ։

Այն բառերը որ իւն կամ ուն կվերջանան , յոքնակի ուղղականնին ու հայցականնին մէկ + ու ․ տառը ելեցընելով կըլլայ ․ ինչպէս Սիւն , սիւնք ․ Տուն , տունք ։

Հց ․ Ըսէ ինծի վեցերորդ կերպ հոլովումը ․

| | Եզակի ․ | Յոգնակի ․ |
|---|---|---|
| Պխ ․ Ուղ ․ | Նեղութիւն ․ | Նեղութիւնք ․ |
| Սեռ ․ | Նեղութեան ․ | Նեղութեանց ․ |
| Տրա ․ | Նեղութեան ․ ՚ի Նեղութիւն ․ | Նեղութեանց ․ ՚ի Նեղութիւնս ․ |
| Հայց ․ | զՆեղութիւն ․ | զՆեղութիւնս ․ |
| Բաց ․ | ՚ի Նեղութենէ ․ | ՚ի Նեղութեանց ․ |
| Պատմ ․ | զՆեղութենէ ․ | զՆեղութեանց ․ |
| Գործ ․ | Նեղութեամբ ․ | Նեղութեամբք ․ |
| Պար ․ | զՆեղութեամբ ․ | զՆեղութեամբք ․ |
| Ներգ ․ | ՚ի Նեղութեան ․ | ՚ի Նեղութիւնս ․ |
| Կոչ ․ | ով Նեղութիւն ։ | ով Նեղութիւնք ։ |

Այնքն բառեր՝ որ սեռականնին եան, բացառականնին ենէ, ու գործիականնին եամբ կըվերջանայ, աս հոլովման տակը կերթան. ինչ

Տեսիլ, տեսլեան, տեսլեամբ. Փէտ. Երազ:

Կորուստ, կորստեան, կորստեամբ. Կորուսթիւն. Խայտ ըլլալը:

Տիւ, տուընջեան, տուընջեամբ. Ցորէկ:

Հյ. Ըստ ինծի եօթներորդ կերպ հոլովումը.

| | | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|---|
| Պր. | Ուղ. | գառն. | գառինք. |
| | Սեռ. | գառին. | գառանց. |
| | Տրա. | գառին. 'ի գառն. | գառանց. 'ի գառինս. |
| | Հայց. | զգառն. | զգառինս. |
| | Բաց. | 'ի գառանէ. | 'ի գառանց. |
| | Պատմ. | զգառանէ. | զգառանց. |
| | Գործ. | գառամբ. | գառամբք. |
| | Պար. | զգառամբ. | զգառամբք. |
| | Ներգ. | 'ի գառին. 'ի գառն. | 'ի գառինս. |
| | Կոչ. | ով գառն: | ով գառինք: |

Ամէն բառ՝ որ սեռականը ին ու գործիականը ամբ կվերջանայ, աս հոլովման տա-կը կերթան. զր

Խաշն, խաշին, խաշամբ. ոչխարներու խումբ:
Մասն, մասին, 'ի մասնէ, մասամբ. մաս. փայ, հիսսէ:
Լեառն, լերին, 'ի լեռնէ, լերամբ. լեռ. տաղ:
Ձեռն, ձեռին, ձեռք, ձեռաց. ձեռք. էլ:

Հ9. Ըստ ինծի ութերորդ կերպ հոլովումը.

| | Եզակի. | Յոգնակի. |
|---|---|---|
| Պի. Ուղ. | Զգեստ. | Զգեստք. |
| Սեռ. | Զգեստու. | Զգեստուց. |
| Տրա. | Զգեստու. 'ի Զգեստ. | Զգեստուց. 'ի Զգեստս. |
| Հայց. | զԶգեստ. | զԶգեստս. |
| Բաց. | 'իԶգեստէ. | 'իԶգեստուց. |
| Պատմ. | զԶգեստէ. | զԶգեստուց. |
| Գործ. | Զգեստու. | Զգեստուք. |
| Պար. | զԶգեստու. | զԶգեստուք. |
| Ներգ. | 'իԶգեստ. 'ի Զգեստու. | 'իԶգեստս. |
| Կոչ. | ովԶգեստ: | ովԶգեստք: |

9190-57

Այն ամէն բառերը՝ որ եզակի սեռականնին ու , իսկ յոգնակի սեռականնին ուց կը վերջանայ նէ , աս հոլովման տակը կերթան . զ՞ր

Գանձ , գանձու , գանձուց , — գանջ . խազինա :
Զէն , զինու , զինուց . — զէնք . սիլահ :
Ցուլ , ցլու , ցլուց . — պուղա :

Աս հոլովմանս պէս հոլոված բառերէն ոմանց սեռականը ու գործիականը՝ առջի երեք հոլովմունքներուն պէս ալ կըլլայ . զ՞ր Նաւ , նաւու կամ նաւի , նաւու կամ նաւաւ . Դաս , դասու կամ դասի , դասու կամ դասիւ . Սոլ , սոլու կամ սոլոյ , սոլու կամ սոլով . Զգեստու կամ զգեստով , ևն ։
Իսկ ոմանց բացառականն ալ ետևի դրած իններորդ հոլովմանըս պէս կըլլայ . զ՞ր

Խրատ , խրատու , 'ի խրատուէ . — խրատ . էօյիւտ :
Զօր , զօրու , 'ի զօրուէ . — զօրք . ասքէր :
Սպաս , սպասու , 'ի սպասուէ . — ծառայութիւն . խըզմէթ , րիայէթ :
Այգ , այգու , յայգուէ . — առաւօտ . սապահ :
Աւր , աւու , յաւուէ . — օր . կիւն :
Ծաղր , ծաղու , 'ի ծաղուէ . — ծիծաղ . խնտում . կիւլիւշ :
Համար , համարու , 'ի համարուէ . — համրանք . հէսապ :

Հջ · Ըստ ինծի իններորդ կերպ հոլովումը ·

| | | Եզակի · | Յոգնակի : |
|---|---|---|---|
| Պէ · | Ուղ · | փոքր · | փոքունք · |
| | Սեռ · | փոքու · | փոքունց · |
| | Տր · | փոքու · 'ի փոքր · | փոքունց · 'ի փոքունս · |
| | Հայց · | զփոքր · | զփոքունս · |
| | Բաց · | 'իփոքուէ · | 'իփոքունց · |
| | Պատմ · | զփոքուէ · | զփոքունց · |
| | Գործ · | փոքու · փոքումբ · | փոքումբք · |
| | Պար · | զփոքու · զփոքումբ · | զփոքումբք · |
| | Ներգ · | 'իփոքր · 'ի փոքու · | 'իփոքունս · |
| | Կոչ · | ով փոքր : | ով փոքունք : |

Այն ամէն բառերը՝ որոնց եզակի սեռականը ու, իսկ յոգնակի սեռականը ունց կը վերջանայ, աս հոլովման տակը կերթան · Օր

Ծանր, ծանու, ծանունց · ծանըր · աղըր :
Մանր, մանու, մանունց · մանըր · ուֆագ :
Թանձր, Թանձու, Թանձունց · թանըձր · գալըն :

Հշ. Ըսէ ինծի տասներորդ կերպ հոլովումը.

| | | Եզակի. | Յոգնակի: |
|---|---|---|---|
| Պէ. | Ուղ. | Համր. | Համերք. |
| | Սեռ. | Համեր. | Համերաց. Համերց. |
| | Տր. | Համեր. ՚ի Համր. | Համերաց. Համերց. ՚ի Համերս. |
| | Հայց. | զՀամր. | զՀամերս. |
| | Բաց. | ՚իՀամերէ. | ՚իՀամերաց. ՚ի Համերց. |
| | Պատմ. | զՀամերէ. | զՀամերաց. զՀամերց. |
| | Գործ. | Համերբ. Համերաւ. | Համերօք. Համերբք. |
| | Պար. | զՀամերբ. զՀամերաւ. | զՀամերօք. զՀամերբք. |
| | Ներգ. | ՚իՀամեր. ՚ի Համր. | ՚իՀամերս. |
| | Կոչ. | ով Համր: | ով Համերք: |

Ան ամմէն բառերը, որոնց սեռականը եր, ու գործիականը երբ կամ երաւ կըվերջանայ, աս հոլովման տակը կերթան. օր

Կայսր, կայսեր, կայսերբ. Ճէնձ Բագաւոր:
Տարր, տարեր, ՚ի տարրէ, տարերբ. փարէէրք. էօնսնէր:

Ալիւր, ալեր, ալերը ·　　տըլուր · ուն ։

Դուստր, դստեր, դստերը ·　　աղջիկ զաւակ · քըզ ։

Իւր վերջացած բառերուն, ինչպէս աղբիւր եղջիւր եւն, յոքնակին Թէ՛ աղբերք կըլլայ և Թէ՛ աղբիւրք, Թէ՛ եղջերք և Թէ՛ եղջիւրք ։

Հ. Ըսէ ինծի մետասաներորդ կերպ հոլովումը ·

Պ. Ամենեւին տասներորդ հոլովմանը նման է · բայց վերջի տառը ղ ըլլալով հոլովելու ատենն ալ ը տառին տեղը միշտ ղ կըդրըւի · Օր. Ասղ, ասեղ, յասեղէ, ասեղը, ասեղաւ · ասեղք, ասեղաց, ասեղց, զասեղս, ասեղքը, ասեղօք, եւն ։

Ասանկ կըհոլովուին աս բառերս ալ ·

Անգղ, անգեղ, անգեղը ·　　անգղ Թռչունը · աքպապա ։

Արկղ, արկեղ, արկեղը ·　　սընտուկ · սանտըգ ։

Սկուտեղ կամ սկտեղ, սկուտեղ, սկուտեղը ·　　փափակ ամամ, պնակ · Թապախ ·

Հ. Ամէն անունները աս տասնըմէկ հոլովմունքներուն տա՞կը կերթան ·

Պ. Չէ · այլ յատուկ անունները մարդու, քաղքի, եւն, Թէպէտ շատ անգամ ասոնց պէս ալ կըհոլովուին, բայց իրէք կերպ մասնաւոր հոլովմունք ալ կան յատուկ անուններու, որ ասոնք են ·

### Եղակի .

| | |
|---|---|
| Ա . Ուղ . | Տրդատ . |
| Սեռ . | Տրդատայ . |
| Տրա . | Տրդատայ . 'ի Տրդատ . ցՏրդատ . առ Տրդատ . |
| Հայց . | զՏրդատ . |
| Բաց . | 'ի Տրդատայ . |
| Պատմ . | զՏրդատայ . |
| Գործ . | Տրդատաւ . |
| Պար . | զՏրդատաւ . |
| Ներգ . | 'ի Տրդատ . |
| Կոչ . | ով Տրդատ : |

Ասանկ կըհոլովվին ետեւի գրած անուններս ալ .

| | |
|---|---|
| Անահիտ , անահտայ . | որսորդներու պաշտպան կուռքը : |
| Դիոս , դիսայ . | հեթանոսներուն առջի մեծ կուռքը : |
| Սափիրա , սափիրայ . | Անանիայի կինը՝ որ պատժուեցաւ : |
| Անակ , անակայ . | սուրբ Գրիգոր Լուսաւորչայ հայրը : |

Եղակի.

| | | |
|---|---|---|
| Բ. | Ուղ. | Եսայի. |
| | Սեռ. | Եսայեայ. |
| | Տրա. | Եսայեայ. յԵսայի. ցԵսայի. առ Եսայի. |
| | Հայց. | զԵսայի. |
| | Բաց. | յԵսայեայ. |
| | Պատմ. | զԵսայեայ. |
| | Գործ. | Եսայեաւ. |
| | Պար. | զԵսայեաւ. |
| | Ներգ. | յԵսայի. |
| | Կոչ. | ով Եսայի։ |

Ասոնց յոգնակին պէտք ըլլայ նէ, կամ հասարակ անուններուն պէս կըհոլովին, կամ եան+ մասնիկը աւելցընելով վըրանին. զի Տրդատեանք, Տրդատեանց. Եսայեանք, Եսայեանց. Ներսիսեանք, Ներսիսեանց, եւն։

Յոգնակի.

Գ. Ուղ. Հայաստանեայք.
Սեռ. Հայաստանեայց. Հայաստանեաց.
Տր. Հայաստանեայց. Հայաստանեաց. 'ի Հայաստանեայս. ցՀայաստանեայս.
Հայց. զՀայաստանեայս.
Բաց. 'իՀայաստանեայց. 'ի Հայաստանեաց.
Պատմ. զՀայաստանեայց. զՀայաստանեաց.
Գործ. Հայաստանեօք.
Պար. զՀայաստանեօք.
Ներգ. 'իՀայաստանեայս.
Կոչ. ով Հայաստանեայք։

Ասոր եզակին բանեցընել պէտք ըլլայ նէ, առջի հոլովումին պէս կըհոլովի. Հայաստանեայ, հայաստանէի, ևն։
Կայ մասնաւոր կոչական մընալ, որ ոս վերջացած յատուկ անուններուն միայն անանկ կըլլայ. իբր Պօղոս, Պօղէ. Աղէքսանդրոս, Աղէքսանդրէ։
Մէկ կերպ սեռականմընալ կայ յատուկ անուններու, ասանկ. Աբրահամ, Աբրահամու. Յակոբ, Յակոբու. Մարիամ, Մարիամու. ևն։

Իսկ յատուկ անունները՝ որ ՈՓՍ կամ ՈՎՍ կըվերջանան, սեռականնին երբեմն կը-փոխուի, ու կըլլայ այսանկ. ԿԷԿՐՈՓՍ, ԿԷԿՐՈՊԱՅ. ՄԻՆՈՎՍ, ՄԻՆՈՎԱՅ. ևն:

Հց. Ուրիշ բառեր ալ կա՞ն, որ ատոնց պէս խոտորին տասնըմէկ կերպ հոլովմունքներէն։

Պխ. Կան ուրիշ վեց կերպ մասնաւոր հոլովմունքներ ալ, որ անոնց պէս խնտաքինչ բառ կըհոլովի. որ են ատոնք.

| | | |
|---|---|---|
| | ԵԶԱԿԻ. | ՅՈԳՆԱԿԻ: |
| Ա. ՈՒՂ. | Տէր. | Տեարք. |
| ՍԵՌ. | Տեառն. | Տեարց. Տերանց. |
| ՏՐԱ. | Տեառն. 'ի Տէր. ցՏէր. | Տեարց. 'ի Տեարս. ցՏեարս. |
| ՀԱՅՑ. | զՏէր. | զՏեարս. |
| ԲԱՑ. | 'ի Տեառնէ. | 'ի Տեարց. 'ի Տերանց. |
| ՊԱՏՄ. | զՏեառնէ. | զՏեարց. զՏերանց. |
| ԳՈՐԾ. | Տերամբ. | Տերամբք. |
| ՊԱՐ. | զՏերամբ. | զՏերամբք. |
| ՆԵՐԳ. | 'ի Տեառն. 'ի Տէր. | 'ի Տեարս. |
| ԿՈՉ. | ո՛վ Տէր: | ո՛վ Տեարք: |

Այսանկ կըհոլովի նաև Այր, տուն. ու ատոնցմէ բարդած անունները. ինչ կոչնա-տէր, կոչնատեառն. Քեռայր, քեռառն, ևն:

| | Եզակի · | Յոգնակի ։ |
|---|---|---|
| Բ · Ուղ · | Մայր · | Մարք · |
| Սեռ · | Մօր · | Մարց · |
| Տրա · | Մօր · 'ի Մայր · ցՄայր · | Մարց · 'ի Մարս · ցՄարս · |
| Հայց · | զՄայր · | զՄարս · |
| Բաց · | 'ի Մօրէ · | 'ի Մարց · |
| Պատմ · | զՄօրէ · | զՄարց · |
| Գործ · | Մարբ · | Մարբք · |
| Պար · | զՄարբ · | զՄարբք · |
| Ներգ · | 'ի Մօր · 'ի Մայր · | 'ի Մարս · |
| Կոչ · | ով Մայր ։ | ով Մարք ։ |

Ասանկ կըհոլովվին ետեւի գրած բառերս ալ ·

Հայր , հօր , հարց կամ հարանց · — հայր · պապա ։
Եղբայր , եղբօր , եղբարց · — աղբար · գարտաշ ։
Նախահայր , նախահօր , նախահարց · — պապ · տէտէ ։
Հօրեղբայր , հօրեղբօր , հօրեղբարց · — հօրէղբար · ամուճա ։

| | Եզակի. | Յոգնակի։ |
|---|---|---|
| Գ. Ուղ. | քոյր. | քորք. |
| Սեռ. | քեռ. | քերց. |
| Տրա. | քեռ. 'ի քոյր. ցքոյր. | քերց. 'ի քորս. ցքորս. |
| Հայց. | զքոյր. | զքորս. |
| Բաց. | 'ի քեռէ. | 'ի քերց. |
| Պատմ. | զքեռէ. | զքերց. |
| Գործ. | քերբ. | քերբք. |
| Պար. | զքերբ. | զքերբք. |
| Ներգ. | 'ի քեռ. 'ի քոյր. | 'ի քորս. |
| Կոչ. | ով քոյր։ | ով քորք։ |

Նման կը հոլովին ասկէց բարդած անուններն ալ. զոր

Հօրաքոյր, հօրաքեռ. — Հօրքուր. հալա։
Մօրաքոյր, մօրաքեռ. — Մօրքուր. Թէյզէ։

| | Եզակի. | Յոգնակի ։ |
|---|---|---|
| Դ. Ուղ. | կին. | կանայք. |
| Սեռ. | կնոջ. | կանանց. կանաց. |
| Տր. | կնոջ. 'ի կին. ցկին. | կանանց. 'ի կանայս. ցկանայս. |
| Հայց. | զկին. | զկանայս. |
| Բաց. | 'ի կնոջէ. | 'ի կանանց. 'ի կանաց. |
| Պատմ. | զկնոջէ. | զկանանց. զկանաց. |
| Գործ. | կանամբ. կնաւ. | կանամբք. |
| Պար. | զկանամբ. զկնաւ. | զկանամբք. |
| Ներգ. | 'ի կնոջ. 'ի կին. | 'ի կանայս. |
| Կոչ. | ով կին ։ | ով կանայք ։ |

Ասանկ կըհոլովին ասկէց բարդած անուններնալ. որ

Տիկին, տիկնոջ, տիկնանց կամ տիկնաց. — խաթըն. գատըն ։
Տանտիկին, տանտիկնոջ, տանտիկնանց. — փանփըրէն, փանը խաթունը ։
Առնակին, առնակնոջ, առնականանց. — էրէն ունեցող. էրլի ։

| | | Եզակի. | Յոգնակի: |
|---|---|---|---|
| Ե. | Ուղ. | գիւղ. | գիւղք. |
| | Սեռ. | գեղջ. | գիւղից. |
| | Տրա. | գեղջ. 'ի գիւղ. ցգիւղ. | գիւղից. 'ի գիւղս. ցգիւղս. |
| | Հայց. | զգիւղ. | զգիւղս. |
| | Բաց. | 'ի գեղջէ. | 'ի գիւղից. |
| | Պատմ. | զգեղջէ. | զգիւղից. |
| | Գործ. | գիւղիւ. | գիւղօք. |
| | Պար. | զգիւղիւ. | զգիւղօք. |
| | Ներգ. | 'ի գեղջ. 'ի գիւղ. | 'ի գիւղս. |
| | Կոչ. | ով գիւղ: | ով գիւղք: |

Այսանկ կըհոլովին ասկէց բարդած անուններն ալ. ինչ

| | |
|---|---|
| Քաղաքագիւղ, քաղաքագեղջ. | Մէնծ գեղ. խասապայ: |
| Ձորագիւղ, ձորագեղջ. եւն: | Էրկու լէռան կամ ձորու մէջ էղած գեղ. |
| Նորագիւղ, Նորագեղջ. | Նոր գեղ. եէնի քէօյ: |

| | Եզակի. | Յոգնակի։ |
|---|---|---|
| Դ՟. Ուղ. | Օր. | Աւուրք. |
| Սեռ. | Աւուր. | Աւուրց. |
| Տր. | Աւուր. յՕր. ցՕր. | Աւուրց. յԱւուրս. ցԱւուրս. |
| Հայց. | զՕր. | զԱւուրս. |
| Բաց. | յՕրէ. | յԱւուրց. |
| Պատմ. | զՕրէ. | զԱւուրց. |
| Գործ. | Աւուրբ. | Աւուրբք. |
| Պար. | զԱւուրբ. | զԱւուրբք. |
| Ներգ. | յԱւուր. յՕր. | յԱւուրս. |
| Կոչ. | ով Օր։ | ով Աւուրք։ |

Աս քսան հոլովին տակը կերթան ամմէն հասարակ ու յատուկ անուններ. բայց շատին սեռականը գտնելու համար՝ պէտք է բառգիրքին մէջը փնտռել, ինչու որ շատ անգամ վերջի ձայնաւորնին ալ դուրս կիյնի կամ կըփոխուի հոլովելով։
Նաև շատ բառեր կան՝ որ կամ եզակի կամ յոգնակի չունին, կամ նախդիրով հոլովները միայն ունին. շատերն ալ այլևայլ հոլովման տակը կերթան. աս ամմէն բանը՝ կէամը վարժութեամբ, կէամն ալ բառգիրքով կըսորվուի։

Հց. Միջական անունները որո՞նք են, ու քանի՞ տեսակ են։

Պտ. Միջական անուն կըսուին անոնք, որ որոշ բանմը չեն ցուցըներ, և ոչ կատարեալ ածականի պէս բանի մը՝ ինչպէս ըլլալը, և ոչ դէմք մը կըցուցընեն. ինչպէս ով, ինչ, որ ըսել է՝ մէկմը, բանմը։ Ասոնք հինգ տեսակ են. Մասնական, Հարցական, Վերբերական, Հանրական, Թուական։

Հց. Որո՞նք են մասնականները, ու ի՞նչպէս կըհոլովին.

Պտ. Մասնական կըսուին անոնք, որ մէկ կամ մէկ քանի հոգի մը, կամ մէկ քանի բան մը կըցուցընեն. ու ասանկ կըհոլովին.

| | Եզակի. | Եզակի. | Յոգնակի։ |
|---|---|---|---|
| Ուղ. | Ոմն. | Ոք. | Ոմանք. |
| Սեռ. | Ուրումն. | Ուրուք. | Ոմանց. |
| Տրա. | Ումեմն. յՈմն. | Ումեք. յՈք. | Ոմանց. յՈմանս. |
| Հայց. | զՈմն. | զՈք. | զՈմանս. |
| Բաց. | յՈւմեմնէ. | յՈւմեքէ. | յՈմանց. |
| Պատմ. | զՈւմեմնէ. | զՈւմեքէ. | զՈմանց. |
| Գործ. | Ոմամբ. | Ոմամբ. | Ոմամբք. |
| Պար. | զՈմամբ. | զՈմամբ. | զՈմամբք. |
| Ներգ. | յՈւմեմն. յՈմն։ | յՈւմեք. յՈք։ | յՈմանս։ |

Ո՛ր եր գործիականը ու պարառականը ու ամբողջ յոգնակին ամէն կառնէ . բայց միայն ուղղականը ու երբեմն յոգնակի ամանքի տեղ կըբանեցուի :

| | | | |
|---|---|---|---|
| Եզ . | Ուղ . | իմն . | Յոգնակի չունի : |
| | Սեռ . | իրիք . | |
| | Տրա . | իմիք . յիմն . ցիմն . առ իմն . | |
| | Հայց . | զիմն . | |
| | Բաց . | յիմեքէ . | |
| | Պատմ . | զիմեքէ . | |
| | Գործ . | իւիք . | |
| | Պար . | զիւիք . | |
| | Ներգ . | յիմիք . յիմն : | |

Կան ուրիշ մասնական անուններ ալ, Միւս, Այլ, Անձնիւր, Իւրաքանչիւր, Երկաքանչիւր, որ Գէտ Գէտոյին պէս կըհոլովուին . զի

Միւս , միւսոյ , միւսոյ կամ միւսում , ցմիւս . զմիւս , ՚ի միւսմէ կամ ՚ի միւսոյ , միւսով , են : Յոգնակին գրեթէ չիբանեցուիր :

Կայ մասնական անունմընալ Ինչ, որ խիստ քիչ կըհոլովուի՝ առջի հոլովման պէս ըլլալով Ինչ, Ընչի . բայց նախդրիւ հոլովները զԻնչ, առ Ինչ, ՚ի Ինչ, շատ կըբանեցուին , մանաւանդ հարցականի տեղ :

Միմեանց, Իրերաց, ասոնք ալ մասնական անուն են, բայց եզակի չունին, յոգնակի-նին ալ ուղղական չունի. իսկ մէկալ հոլովերը ասանկ կըլլան ։

| | Յոգնակի ։ | Յոգնակի ։ |
|---|---|---|
| Սեռ. | Միմեանց. | Իրերաց. |
| Տր. | Միմեանց. 'ի Միմեանս. | Իրերաց. յիրեար. յիրար. յիրեարս. |
| Հայց. | զՄիմեանս. | զիրեար. զիրար. զիրեարս ։ |
| Բաց. | 'ի Միմեանց. | յիրերաց. |
| Պատմ. | զՄիմեանց. | զիրերաց. |
| Գործ. | Միմեամբք. | Իրերօք. |
| Պար. | զՄիմեամբք. | զիրերօք. |
| Ներգ. | 'ի Միմեանս ։ | յիրեար. յիրար. յիրեարս ։ |

Հց. Որո՞նք են հարցական անունները.

Պտ. Մասնականներուն նշանակութիւնը ունին, բայց հարցմունքի մէջ կըբանեցուին. իրենց հոլովը ասանկ է.

| | Եզակի: | Յոգնակի: |
|---|---|---|
| Ուղ. | Ո՞վ. Ո՞. | Ո՞յք. |
| Սեռ. | Ո՞յր. | Ո՞յց. |
| Տրա. | Ո՞ւմ. յՈ՞. յՈ՞վ. ցՈ՞. ցՈ՞վ. | Ո՞յց. յՈ՞յս. ցՈ՞յս. |
| Հայց. | զՈ՞վ. զՈ՞. | զՈ՞յս. |
| Բաց. | յՈւմմէ՞. յՈւմէ՞. | յՈ՞յց. |
| Պատմ. | զՈւմմէ՞. զՈւմէ՞. | զՈ՞յց. |
| Գործ. | Որո՞վ. | Որո՞վք. |
| Պար. | զՈրո՞վ. | զՈրո՞վք. |
| Ներգ. | յՈ՞ւմ. յՈ՞վ. յՈ՞: | յՈ՞յս: |

Իսկ հարցական անունը Քանի՞, չորրորդ հոլովմանը պէս կը հոլովի:
Քանի՞, քանւո՞յ կամ քանո՞յ, 'ի քանւո՞յ կամ 'ի քանո՞յ.
Քանի՞ք, քանեա՞ց, 'ի քանի՞ս, քանեօ՞ք. ևն.
Կայ մէկ ուրիշ հարցական անուն մըն ալ Ի կամ Հի, որ ուղղականը բարդ բառերու մէջ միայն կը գրուի, ի՞նչ հիբար, հիկեն, զհիկեն, անի. բայց իր հոլովները շատ կը բանեցուին, ու ասանկ կը հոլովի.

| | | |
|---|---|---|
| Եզ. Սեռ. | Էր՞. | Ինչու՞, ի՞նչ բանի. |
| Տրա. | Ի՞մ. Հի՞մ. ընդ Էր՞. | Ինչու՞, ի՞նչ բանի. |
| Հայց. | զի՞. | Ի՞նչ, ի՞նչ բան. |
| Բաց. | առ'իմէ՞. | Ինչէ՞ն, ի՞նչ բանէն. |
| Պատմ. | զմէ՞. | Ինչու՞ համար, ի՞նչ բանի համար. |
| Գործ. | Իւ՞. | Ինչո՞վ, ի՞նչ բանով. |
| Պար. | զիւ՞. | Ի՞նչ բանի վըրա. |
| Ներգ. | յի՞մ: | Ի՞նչ բանի մէջ: |

Հց. Որո՞նք են վէրբէրական անունները.

Պխ. Վէրբէրական կըսուին ան միջական անունները, որ համեմատութիւն մը կամ նմանութիւն մը կըցուցընեն. ու ասանկ կըհոլովին.

| | | |
|---|---|---|
| Եզ. Ուղ. | Այքան. | Յոգ. Այքանիք. Այքանք. |
| Սեռ. | Այքանոյ. | Այքանեաց. Այքանից. |
| Տրա. | Այքանոյ. յԱյքան. | Այքանեաց. յԱյքանս. |
| Հայց. | զԱյքան. | զԱյքանս. |
| Բաց. | յԱյքանոյ. | յԱյքանեաց. |
| Պատմ. | զԱյքանոյ. | զԱյքանեաց. |
| Գործ. | Այքանեաւ. Այքանով. | Այքանեօք. |
| Պար. | զԱյքանեաւ. զԱյքանով. | զԱյքանեօք. |
| Ներգ. | յԱյքան: | յԱյքանս: |

Այսպէս, Որպէս, Որչափ, ու ուրիշ ասոնց նման բարդած բառերն ալ ասոր պէս կը հոլովուին. ու ասոնք հարցականի տեղ ալ կը բանին:

Հր. Որո՞նք են հանրական անուանները.

Պտ. Հանրական կըսուին անոնք, որ մասնականներուն ներհակ՝ ամէնքը կը ցուցընեն, դուրս բան չեն թողուր. ու ասանկ կը հոլովուին.

| | | |
|---|---|---|
| Յոգ. | Ուղ. | Ամենեքեան. Ամենեքին. |
| | Սեռ. | Ամենեցուն. Ամենեցունց. |
| | Տր. | Ամենեցուն. Ամենեցունց. յԱմենեսեան. ցԱմենեսեան. առ Ամենեսին. |
| | Հայց. | զԱմենեսեան. զԱմենեսին. |
| | Բաց. | յԱմենեցունց. |
| | Պատմ. | զԱմենեցունց. |
| | Գործ. | Ամենեքումբք. |
| | Պար. | զԱմենեքումբք. |
| | Ներգ. | յԱմենեսեան. յԱմենեսին. |
| | Կոչ. | ով Ամենեքեան. ով Ամենեքին: |

Ասանկ կը հոլովուի Բոլորեքեանն ալ: Իսկ հանրական անուանները Ամէն, Ամենայն, Համայն, Բոլոր, Բնաւ, առջի հոլովման տակը կ'երթան: Կան ուրիշ երկու հանրական անուններ ալ Համակ ու Ողջոյն, որ չեն հոլովուիր:

Հր. Ո՞րնք են Թուական անունները.

Պտ. Թուական կըսուին անոնք, որ Թիւ մը կըցուցընեն։ Ասոնք հինգ տեսակ են. Բացարձակ, Դասական, Զատական, Մակբաշխ, Կրկնական։

Հր. Ո՞րն է բացարձակը.

Պտ. Բացարձակը պարզ Թիւմը կըցուցընէ. զր Մի, երկու, երեք, տասն, հարիւր, հազար, բիւր, ևն։ Ասոնք այլևայլ հոլովներու տակ կերթան. միայն Մի Թուականը քիչմը տարբեր կըհոլովի.

| | | |
|---|---|---|
| Եզ. Ուղ. | Մի. | |
| Սեռ. | Միոյ. Միոջ. | |
| Տրա. | Միում. Միոյ. 'ի Մի. ցՄի. | |
| Հայց. | զՄի. | |
| Բաց. | 'ի Միոյ. 'ի Միոջէ. | Յոգնակին չունի։ |
| Պատմ. | զՄիոյ. զՄիոջէ. | |
| Գործ. | Միով. | |
| Պար. | զՄիով. | |
| Ներգ. | 'ի Միում. 'ի Մի. 'ի Միոջ. | |
| Կոչ. | ով Մի։ | |

Հց․ Ո՞րն է դասականը․

Պխ․ Դասականը կարգմը կամ քանիերորդ ըլլալը կցուցընէ․ թ. Առաջին պիր․ երկրորդ, իքինճի․ տասներորդ, օնունճու․ ևն։

Հց․ Ո՞րն է զատականը․

Պխ․ Զատականը համրած բանը ուրիշներէն որոշելով մը կցուցընէ․ թ. Մեկ, երկեակ կամ երկակ, երրեակ, քառեակ, ևն․ թ. պիր տանէ մը, իքիշէր տանէ, իւչէր տանէ, տէօրտէր տանէ․ ևն։

Հց․ Մակբաշխը ո՞րն է․

Պխ․ Մակբաշխները համրած բաներնին բոլորնալ կամ բոլորը մէկ տեղ կցուցընեն․ թ. Երկոքեան կամ երկոքին, իքիսի տէ․ եօթանեքեան, եէտիսի տէ․ տասնեքեան, օնու տէ․ ևն։ Ասոնք Ամենեքեանին պէս կը հոլովին։

Հց․ Որո՞նք են կրկնականները․

Պխ․ Կրկնական կըսուին անոնք՝ որ մէկ թիւի մը կամ մէկ չափի մը քանի անգամ կրկնըւիլը կցուցընեն․ թ. Երկպատիկ, տասնպատիկ, բիւրապատիկ․ թ. իքի քաթ էսէլ, օն քաթ էսէլ, օն հազար քաթ էսէլ։

Ասոնք ամմէննալ հասարակ անուններուն պէս կը հոլովին․ ուստի որուն վրայ կը տարակուսիս՝ որ ի՛նչպէս կը հոլովի նէ, բառգիրք նայէ՝ հոն կը գտնաս սեռականը ու գործիականը, անկէց կիմանաս որ հոլովին տակը կերթայ։

## ԴԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### Դերանուններ վրայ:

Հր. Ի՞նչ է դերանունը.

Պտ. Է մասն բանի, որ անունին տեղը կդրըուի, ու դէմք մը կցուցընէ. կամ խօսօղինը, որ Ես. կամ լսօղինը, որ Դու. կամ որուն վրայ որ կըխօսուի, որ Ինքն. կմ կարգ մը կցուցընէ, առաջին երկրորդ ու երրորդ. որ Այս, Այդ, Այն:

Հր. Քանի՞ տեսակ դերանուն կայ.

Պտ. Հինգ տեսակ. Էական, Ցուցական, Ստացական, Յարաբերական, Դիմորոշական:

Հր. Ըսէ ինծի էական դերանունները.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Պտ. Եզ. | Ուղ. | Ես. | Յոգ. | Մէք. |
| | Սեռ. | Իմ. | | Մեր. |
| | Տրա. | Ինձ. յիս. ցիս. | | Մեզ. 'ի Մեզ. ցՄեզ. |
| | Հայց. | զիս. | | զՄեզ. |
| | Բաց. | յինէն. | | 'ի Մէնջ. |
| | Պատմ. | զինէն. | | զՄէնջ. |
| | Գործ. | ինև. | | Մեօք. |
| | Պար. | զինև. | | զՄեօք. |
| | Ներգ. | յիս: | | 'ի Մեզ: |

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. Ուղ. | Դու. | Յոգ. | Դուք. |
| Սեռ. | Քո. | | Ձեր. |
| Տրա. | Քեզ. 'ի քեզ. ցքեզ. | | Ձեզ. 'ի Ձեզ. ցՁեզ. |
| Հայց. | զՔեզ. | | զՁեզ. |
| Բաց. | 'ի Քէն. | | 'ի Ձէնջ. |
| Պատմ. | զՔէն. | | զՁէնջ. |
| Գործ. | Քև. | | Ձեօք. |
| Պար. | զՔև. | | զՁեօք. |
| Ներգ. | 'ի Քեզ. | | 'ի Ձեզ. |
| Կոչ. | ով Դու: | | ով Դուք: |

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. Ուղ. | Ինքն. | Յոգ. | Ինքեանք. |
| Սեռ. | Ինքեան. | | Ինքեանց. |
| Տրա. | Ինքեան. յինքն. ցինքն. | | Ինքեանց. յինքեանս. ցինքեանս. |
| Հայց. | զինքն. | | զինքեանս. |
| Բաց. | յինքենէ. | | յինքեանց. |
| Պատմ. | զինքենէ. | | զինքեանց. |
| Գործ. | Ինքեամբ. | | Ինքեամբք. |
| Պար. | զինքեամբ. | | զինքեամբք. |
| Ներգ. | յինքեան. յինքն: | | յինքեանս: |

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. Ուղ. | ( չունի ) | Յոգ. | իւրեանք. |
| Սեռ. | իւր. իւրեան. | | իւրեանց. |
| Տրա. | իւր. իւրեան. առ իւր. | | իւրեանց. առ իւրեանս. |
| Հայց. | ( չունի ) | | զիւրեանս. |
| Բաց. | յիւրմէ. | | յիւրեանց. |
| Պատմ. | զիւրմէ. | | զիւրեանց. |
| Գործ. | իւրև. իւրեամբ. իւրեաւ. | | իւրեամբք. |
| Պար. | զիւրև. զիւրեամբ. զիւրեաւ. | | զիւրեամբք. |
| Ներգ. | յիւր. յիւրեան: | | յիւրեանս: |

Հց. Ըսէ՛ ինծի ցուցական դերանունները որո՞նք են.

| | | | |
|---|---|---|---|
| Պտ. Եզ. Ուղ. | նա. | Յոգ. | նոքա. |
| Սեռ. | նորա. | | նոցա. |
| Տրա. | նմա. ՚ի նա. ցնա. | | նոցա. ՚ի նոսա. ցնոսա. |
| Հայց. | զնա. | | զնոսա. |
| Բաց. | ՚ի նմանէ. | | ՚ի նոցանէ. |
| Պատմ. | զնմանէ. | | զնոցանէ. |
| Գործ. | նովաւ. | | նոքօք. |
| Պար. | զնովաւ. | | զնոքօք. |
| Ներգ. | ՚ի նմա. ՚ի նա: | | ՚ի նոսա: |

Ասանկ կըհոլովին նաև Սա, Դա։ Բայց այն յոքնակին խիստ քիչ տեղ՝ կըլլայ Սայք, Սայց, 'ի Սայց, ևն։

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. | Ուղ. | Նոյն. | Յոգ. Նոյնք. Նոքին. |
| | Սեռ. | Նորին. | Նոցին. Նոցուն. Նոցունց. |
| | Տրա. | Նմին. 'ի Նոյն. | Նոցին. 'ի Նոյնս. 'ի Նոսին. |
| | Հայց. | զՆոյն. | զՆոյնս. զՆոսին. |
| | Բաց. | ( չունի ) | 'ի Նոցունց. |
| | Պատմ. | ( չունի ) | զՆոցունց. |
| | Գործ. | Նովիմբ. Նովին. | Նոքիմբք. Նոքումբք. |
| | Պար. | զՆովիմբ. զՆովին. | զՆոքիմբք. զՆոքումբք. |
| | Ներգ. | 'ի Նոյն։ | 'ի Նոյնս. 'ի Նոսին։ |

Սոյն, Դոյն, ցուցականներն ալ ասոր պէս կըհոլովին։

Ասոնց եզակի բացառականը ու պատմականը պէտք ըլլայ բանեցընել նէ, ասանկ կըսուի. 'ի սոյն օրէ. 'ի սմին տեղւոջէ. զսոյն կնոջէ. զսմին տանէ։

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. | Ուղ. | Այն. | Յոգ. Այնոքիկ. Այնք. |
| | Սեռ. | Այնր. Այնորիկ. | Այնոցիկ. Այնց: |
| | Տր. | Այնմ. Այնմիկ. յԱյն. | Այնոցիկ. Այնց. յԱյնոսիկ. |
| | Հայց. | զԱյն. | զԱյնոսիկ. զԱյնս. |
| | Բաց. | յԱյնմանէ. | յԱյնցանէ. յԱյնց. |
| | Պատմ. | զԱյնմանէ. | զԱյնցանէ. զԱյնց. |
| | Գործ. | Այնու. Այնուիկ. | Այնոքիւք. Այնոքիմբք. |
| | Պար. | զԱյնու. զԱյնուիկ. | զԱյնոքիւք. զԱյնոքիմբք. |
| | Ներգ. | յԱյնմ. յԱյնմիկ. յԱյն: | յԱյնոսիկ. յԱյնս: |

*Ասանկ կըհոլովին նաև Այս, Այդ. բայց ասոնց յոքնակի տրականը, հայցականը, ու ներգոյականը չըլլար ըսել յայդս, զայդս. յայսս, զայսս. հապա մինակ յայդոսիկ, զայդոսիկ. յայսոսիկ, զայսոսիկ. են:*

*Հց. Ըսէ ինծի ստացական դերանունները որո՞նք են, ու ի՞նչպէս կըհոլովին.*
*Պտ. Ամէնքն ալ Գետ Գետոյին պէս կըհոլովին, ու ասոնք են.*

| | | | |
|---|---|---|---|
| Պխ. Եզ. | Ուղ. | քոյ. | Յոգ. քոյք. |
| | Սեռ. | քոյոյ. քոյ. | քոյոց. քոց. |
| | Տր. | քոում. քոյոյ. քոյ. 'ի քոյ. | քոյոց. քոց. 'ի քոյս. |
| | Հայց. | զքոյ. | զքոյս. |
| | Բաց. | 'իքոումմէ. 'ի քոյոյ. | 'իքոյոց. 'ի քոց. |
| | Պատմ. | զքոումմէ. զքոյոյ. | զքոյոց. զքոց. |
| | Գործ. | քոյով. քով. | քոյովք. քովք. |
| | Պար. | զքոյով. զքով. | զքոյովք. զքովք. |
| | Ներգ. | 'իքոում. 'ի քոյ։ | 'իքոյս։ |

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. | Ուղ. | իմ. | Յոգ. իմք. |
| | Սեռ. | իմոյ. | իմոց. |
| | Տր. | իմում. իմոյ. առ իմ. | իմոց. առ իմս. |
| | Հայց. | զիմ. | զիմս. |
| | Բաց. | յիմմէ. յիմոյ. | յիմոց. |
| | Պատմ. | զիմմէ. զիմոյ. | զիմոց. |
| | Գործ. | իմով. | իմովք. |
| | Պար. | զիմով. | զիմովք. |
| | Ներգ. | յիմում. յիմ. | յիմս. |
| | Կոչ. | ով իմ։ | ով իմք։ |

Ասանկ կըհոլովին նաև ասոնք .

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Մեր , | մերոյ , | մերում , | 'ի մերմէ , | մերով , | 'ի մերում : |
| Ձեր , | ձերոյ , | ձերում , | 'ի ձերմէ , | ձերով , | 'ի ձերում : |
| Իւր , | իւրոյ , | իւրում , | յիւրմէ , | իւրով , | յիւրում : |

| | Եզ. | Յոգ. |
|---|---|---|
| Ուղ. | Նորայ . | Նորայք . |
| Սեռ. | Նորայոյ . | Նորայոց . |
| Տր. | Նորայում . 'ի Նորայ . | Նորայոց . 'ի Նորայս . |
| Հայց. | զՆորայ . | զՆորայս . |
| Բաց. | 'ի Նորայոյ . | 'ի Նորայոց . |
| Պատմ. | զՆորայոյ . | զՆորայոց . |
| Գործ. | Նորայով . | Նորայովք . |
| Պար. | զՆորայով . | զՆորայովք . |
| Ներգ. | 'ի Նորայում . 'ի Նորայ . | 'ի Նորայս . |
| Կոչ. | ով Նորայ : | ով Նորայք : |

Ասանկ կըհոլովին նաև Սորայ . սորայոյ : Դորայ . դորայոյ :
Սոցայ . սոցայոյ : Դոցայ . դոցայոյ : Նոցայ . նոցայոյ :
Իմային . իմայնոյ կամ իմայոյ : Իւրային . իւրայնոյ կամ իւրայոյ :
Մերային . մերայնոյ կամ մերայոյ : Ձերային . ձերայնոյ կամ ձերայոյ : Նորային . նորայնոյ :
Իսկ Իմային , Քոյին , Իւրային , Մերային , Ձերային . նախդիրով միայն կըհոլովին :

Հց. Ըսէ՛ ինծի յարաբերական դերանունը ո՞րն է.

| | | | |
|---|---|---|---|
| Պտ. Եզ. | Ուղ. | Որ. | Յոգ. Որք. |
| | Սեռ. | Որոյ. | Որոց. |
| | Տր. | Որում. յՈր. | Որոց. յՈրս. |
| | Հայց. | զՈր. | զՈրս. |
| | Բաց. | յՈրմէ. | յՈրոց. |
| | Պատմ. | զՈրմէ. | զՈրոց. |
| | Գործ. | Որով. | Որովք. |
| | Պար. | զՈրով. | զՈրովք. |
| | Ներգ. | յՈրում. յՈր: | յՈրս: |

Անիկայ հարցական անունի տեղ ալ կըբանեցուի, ինչպէս հարցական անունը Ո՞վ, Ո՞, ու իր հոլովներն ալ շատ անգամ յարաբերականի տեղ կըբանին:

Հց. Դիմորոշական դերանունը ի՞նչ է, ու որո՞նք են.

Պտ. Դիմորոշական դերանուն կըսուին աս իրեք տառերը՝ ս, դ, ն. որ բառերուն ետքը կըպչելով, դէմք մը կա՛մ կարգմը կըցուցընեն. ու ասոնք են արմատ ուրիշ գրեթէ ամէն դերանուններուն. ինչ Հողս, հողդ, հողն. ըսել է, ես՝ որ հողեմ, դուն՝ որ հողես, ան՝ որ հող է: Զոր ասեմս, զոր ասեսդ, զոր ասէն. ըսել է, որն որ կըսեմ, որն որ կըսես, որն որ կըսէ:

# ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

## Բային Վրայ :

Հց. Ի՞նչ է բայը.

Պտ. Բայն է մասն բանի, որ գործք մը կամ կիրք մը կըցուցընէ ժամանակովը, թիւովը, ու դէմքովը:

Հց. Բային պարագաները քանի՞ են.

Պտ. Հարկաւորները վեց են. Սեռ, Ժամանակ, Եղանակ, Թիւ, Դէմք, Խոնարհումն:

Հց. Բայերուն սեռը քանի՞ է, ու որո՞նք են.

Պտ. Վեց է. Ա. Նական՝ որ ըլլալը միայն կըցուցընէ, ու ուրիշ բայերը անկէց կը-շինուին. Օր. Եմ, Գոմ:

Բ. Ներգործական՝ որ ուրիշի վրայ բան մը ընելը կըցուցընէ. Օր. Գործեմ:

Գ. Կրաւորական՝ որ ըլլալը կըցուցընէ. Օր. Գործիմ:

Դ. Չէզոքական՝ որ ոչ ընելը և ոչ ըլլալը կըցուցընէ, այլ ինքնիր վրայ կըլլայ մէկ գործք մը. Օր. Գնամ, Աշխատիմ:

Ե. Հասարակ՝ որ թէ՛ ընելը ու թէ՛ ըլլալը կըցուցընէ. Օր. Համարիմ, Խոստանամ:

Է. Անցողական՝ որ մէկ բան մը ուրիշի ընել տալը կամ ըլլուել տալը կցուցընէ. զի գնացուցանէմ, հասուցանէմ:

Հր. Բայերուն ժամանակը քանի՞ է.

Պտ. Իրեք. Ներկայ, Անցեալ, Ապառնի:

Հր. Բայերուն եղանակը քանի՞ է.

Պտ. Չորս. Սահմանական, Հրամայական, Ստորադասական, Աներևոյթ:

Հր. Բայերուն թիւը քանի՞ է.

Պտ. Անուններուն թիւին պէս երկու:

Հր. Բայերուն դէմքը քանի՞ է.

Պտ. Դերանուններուն դէմքին պէս իրեք:

Հր. Բայերուն խոնարհումը ի՞նչ է.

Պտ. Հոլովներուն պէս վերջերնին կերպ կերպ փոխելն է:

Հր. Ամէն բայերը մէկ կերպ խոնարհում ունի՞ն.

Պտ. Չէ. այլ չորս կերպ գլխաւոր խոնարհմունք կան, որոնց տակը կերթան ուրիշ ամէն բայերը. ու աս չորս տեսակը կորոշէ բայերուն չորս կերպ վերջաւորութենէն, որ են էմ, իմ, ամ, ում. զի Գործեմ, Գործիմ, Աղամ, Թողում:

Հր. Էական բայերը քանի՞ են, ու ի՞նչպէս կըխոնարհին.

Պտ. Չորս են. Եմ, Լինիմ, Եղանիմ, Գոմ. ու աստանկ կըխոնարհին.

### Սահմանական եղանակի Ներկայ :

| | | |
|---|---|---|
| Ա. եզ. Եմ, էս էմ, | ես, դուն էս, | է, ան է. |
| յոգ. եմք, մէնք էնք, | էք, դուք էք, | են, անոնք էն : |
| | Անկատար: | |
| եզ. Էի, էս էի ըն., | էիր, | էր. |
| յոգ. էաք, | էիք, | էին : |
| | Կատարեալ: | |
| եզ. Եղէ, էղայ ըն., | եղեր, | եղև. |
| յոգ. եղաք կամ եղեաք, | եղէք, | եղեն : |
| | Յարակատար : | |
| եզ. Եղեալ եմ, էղած էմ ըն., | եղեալ ես, | եղեալ է. |
| յոգ. եղեալ եմք, | եղեալ էք, | եղեալ են : |
| | Գերակատար : | |
| եզ. Եղեալ էի, էղած էի ըն., | եղեալ էիր, | եղեալ էր. |
| յոգ. եղեալ էաք, | եղեալ էիք, | եղեալ էին : |
| | Ապառնի. | |
| եզ. Եղէց, ըլլամ պիտի ըն., | եղիցիս կամ եղիցես, | եղիցի. |
| յոգ. եղիցուք, | եղիջիք, | եղիցին : |

Հրամայական եղանակի ներկայ։

Եզ. (չունի) Ե՛ր, եղիր. (փխ. ո՛ղջ եր). (չունի)

Յոգ. (չունի) Ե՛ք կամ երո՛ւք, եղէք. (փխ. ո՛ղջ էք, ո՛ղջ երուք։) (չունի)

Ապառնի։

Եզ. (չունի) Եղիջի՛ր, ըլլաս եւն. եղիցի.

Յոգ. եղիցո՛ւք, եղիջի՛ք, եղիցի՛ն։

Ստորադասական եղանակի ապառնի։

Եզ. Իցեմ, ըլլամ նէ եւն. իցես, իցէ.

Յոգ. իցեմք, իցէք, իցեն։

Ստորադ. անցեալ։

Եզ. Եղեալ իցեմ, Եղած ըլլամ նէ եւն. եղեալ իցես, եղեալ իցէ.

Յոգ. եղեալ իցեմք, եղեալ իցէք, եղեալ իցեն։

Աներեւոյթ եղանակ. Ել, ըլլալ. կը հոլովուի՝ ելոյ, ելով։

Ընդունելութիւն ներկայ. Եղեալ. Եղօղ. կը հոլովուի՝ եղելոյ, եղելով։

Ընդունելութիւն անցեալ. Եղեալ. Եղած։

Ընդունելութիւն ապառնի. Լինելոց կամ լինելի, ըլլալու։

---

Սահմանական եղանակի ներկայ։

Բ. Եզ. Լինիմ, լինիս, լինի.

Յոգ. լինիմք, լինիք, լինին։

Անկատար ։

| | | | |
|---|---|---|---|
| եզ. | Լինէի , | լինէիր , | լինէր . |
| յոգ. | լինէաք , | լինէիք , | լինէին ։ |

Կատարեալ ։

| | | | |
|---|---|---|---|
| եզ. | Եղէ , | եղեր , | եղև . |
| յոգ. | եղաք կամ եղեաք , | եղէք , | եղեն ։ |

Յարակատար և Գերակատար ։

Լեալ եմ , լեալ ես , լեալ է . ևն ։ Լեալ էի , լեալ էիր , լեալ էր . ևն ։

Ապառնի ։

| | | | |
|---|---|---|---|
| եզ. | Լիցիմ , | լիցիս , | լիցի . |
| յոգ. | լիցուք , | լիջիք կամ լինիջիք , | լիցին ։ |

Հրամայական եղանակի ներկայ ։

| | | | |
|---|---|---|---|
| եզ. | . . . | Լեր , մի՛ լինիր , | . . . |
| յոգ. | . . . | լերո՛ւք կամ լէք , մի՛ լինիք . | . . . |

Հրամ . Ապառնի ։

| | | | |
|---|---|---|---|
| եզ. | . . . | Լիջի՛ր կամ լինիջի՛ր կամ լիցի՛ս , | լիցի՛ . |
| յոգ. | լիցո՛ւք , | լիջիք կամ լինիջիք , | լիցի՛ն ։ |

Ստորադասական եղանակի ապառնի ։

| | | | |
|---|---|---|---|
| եզ. | Լինիցիմ , | լինիցիս , | լինիցի . |
| յոգ. | լինիցիմք , | լինիցէք , | լինիցին ։ |

Ստորադ. անցեալ.

եզ. Լեալ իցեմ, լեալ իցես, լեալ իցէ.
յոգ. լեալ իցեմք, լեալ իցէք, լեալ իցեն:

Աներեւոյթ եղանակ. Լինել, լինելոյ, լինելով. եւն:
Ընդունելութիւն ներկայ. Լինօղ:
Ընդուն. անցեալ. Լեալ կամ լիեալ:
Ընդուն. ապառնի. Լինելոց կամ լինելի:

---

Սահմանական եղանակի ներկայ:

Գ. եզ. Եղանիմ, եղանիս, եղանի.
յոգ. եղանիմք, եղանիք, եղանին:

Անկատար:

եզ. Եղանէի, եղանէիր, եղանէր.
յոգ. եղանէաք, եղանէիք, եղանէին:

Կատարեալ:

եզ. Եղէ, եղեր, եղև.
յոգ. Եղաք կամ եղեաք, եղէք, եղեն:

Յարակատար և Գերակատար:

Եղեալ եմ, ես, է, եւն: Եղեալ էի, էիր, էր եւն:

Ապառնի :

| | | |
|---|---|---|
| եզ. Եղէց կ՟ եղիցիմ կ՟ եղիցեմ | եղիցիս կամ եղիցես , | եղիցի . |
| յոգ. եղիցուք . | եղիջիք կամ եղանիջիք , | եղիցին : |

Հրամայական եղանակի ներկայ :

| | | |
|---|---|---|
| եզ. . . . | Եղի՛ր , մի՛ եղանիր . | . . . |
| յոգ. . . . . | Եղերո՛ւք , մի՛ եղանիք : | . . . |

Հրամ. ապառնի :

| | | |
|---|---|---|
| եզ. . . . | Եղիջի՛ր կամ եղանիջի՛ր , | եղիցի՛ . |
| յոգ. եղիցո՛ւք , | եղիջի՛ք կամ եղանիջի՛ք , | եղիցի՛ն : |

Ստորադասական եղանակի ապառնի :

| | | |
|---|---|---|
| եզ. Եղանիցիմ , | եղանիցիս , | եղանիցի . |
| յոգ. Եղանիցիմք , | եղանիցիք , | եղանիցին : |

Ստորադ. անցեալ :

Եղեալ լիցիմ , լիցիս , լիցի . ևն :

Աներևոյթ եղանակ . Եղանել կամ եղանիլ , եղանելոյ , եղանելով :

Ընդունելութիւն ներկ . և անց . Եղեալ : Ապառնի . Եղանելոց կամ եղանելի :

Կը տեսնես որ աս իրեք էական բայերուն մէկ քանի եղանակները մէկզմէկու հետ նոյն են , ինչու որ՝ մէկզմէկէ փոխ կառնուն :

Իսկ չորրորդին , որ է գոմ բայը , շատ եղանակները ու դէմքերը չեն գործածուիր . ասոր գործածուածները ասոնք են .

Դ. Սահմ. ներկայ: Եզ. Գոմ, գոս, գոյ.
Յոգ. գոմք. գոյք, գոն:

Անկատար: Եզ. . . . գոյիր, գոյր.
Յոգ. . . . . . . գոյին:

Ստորադաս. ապառնի: Եզ. . . . . . . գուցէ.
Յոգ. . . . . . . գուցեն:

Աներեւոյթ եղանակ. Գոլ, գոլոյ, գոլով.

Ընդունելութիւն ներկայ. Գոյօղ:

---

Հց. Ըստ նմին եմ վերջացած բայերը ի՞նչպէս կըխոնարհին.

Սահմանական եղանակի ներկայ:

Պտ. Եզ. Գործեմ, Եղւէրիմ. գործես, գործէ.
Յոգ. գործեմք, գործէք, գործեն:

Անկատար:

Եզ. Գործէի, գործէիր, գործէր.
Յոգ. գործէաք, գործէիք, գործէին:

Կատարեալ:

Եզ. Գործեցի, գործեցեր, գործեաց.
Յոգ. գործեցաք, գործեցիք կամ գործեցէք, գործեցին:

| | | | |
|---|---|---|---|
| | | Յարակատար : | |
| Եզ. | գործեալ եմ, | գործեալ ես, | գործեալ է. |
| յոգ. | գործեալ եմք, | գործեալ էք, | գործեալ են : |
| | | Գերակատար : | |
| Եզ. | գործեալ էի, | գործեալ էիր, | գործեալ էր. |
| յոգ. | գործեալ էաք, | գործեալ էիք, | գործեալ էին : |
| | | Ապառնի : | |
| Եզ. | գործեցից, | գործեսցես, | գործեսցէ. |
| յոգ. | գործեսցուք, | գործեսջիք, | գործեսցեն : |
| | | Հրամայական եղանակի ներկայ : | |
| Եզ. | . . . | Գործեա՛, մի՛ գործեր. | . . . |
| յոգ. | . . . | գործեցէ՛ք, մի՛ գործէք : | . . . |
| | | Ապառնի : | |
| Եզ. | . . . | Գործեսջի՛ր կ̃ գործեսցե՛ս, | գործեսցէ՛. |
| յոգ. | գործեսցո՛ւք, | գործեսջի՛ք, | գործեսցե՛ն : |
| | | Ստորադասական եղանակի ապառնի : | |
| Եզ. | Գործիցեմ, | գործիցես, | գործիցէ, |
| յոգ. | գործիցեմք, | գործիցէք, | գործիցեն : |

Ստորադ. անցեալ:

| | | | |
|---|---|---|---|
| Եզ. | Գործեալ լիցիմ, | գործեալ լիցիս, | գործեալ լիցի. |
| Յոգ. | գործեալ լիցիմք, | գործեալ լիցիք, | գործեալ լիցին: |

Աներևոյթ եղանակ. Գործել, գործելոյ, 'ի գործել. ևն:
Ընդունելութիւն ներկայ. Գործօղ:
Ընդուն. անցեալ. Գործեալ:
Ընդուն. ապառնի. Գործելոց:

Գործօղին ու գործեալին տեղը՝ գործեցօղ ու գործեցեալ ալ կըսուի: Այսանկ կըլլան ուրիշ ամմէն բայերունն ալ, որոնց որ կատարեալին մէջը եց մասնիկ կայ:

Ասոր պէս կը խոնարհին ուրիշ ամմէն էմ վերջացած բայերնալ որոնց որ կատարեալը էցի կըլլայ նէ. օր.

Բժշկեմ, բժշկեցի. — բժշկընել:
Մերժեմ, մերժեցի. — վռընտել. քովմաք:
Սերմանեմ, սերմանեցի. — ցանել. էքմէք:

Ասոր տակը կերթան էմ վերջացած չէզոքական բայերն ալ, որ սովորաբար կրաւո-
րական չունին. օր.

Ննջեմ, ննջեցի. — քնանալ. ույումաք:
Ամաչեմ, ամաչեցի. — ամչնալ. ութանմաք:
Զանգիտեմ, զանգիտեցի. — վախնալ. գօրգմաք:
Բնակեմ, բնակեցի. — տեղմը կենալ. սաքին օլմաք:

Հ. Ըսէ ինծի իմ վերջացած բայերը ինչպէս կըխոնարհին ։

Սահմանական եղանակի ներկայ ։

| | | |
|---|---|---|
| Պր. եզ. Գործիմ, չալըշըրըմ. | գործիս, | գործի. |
| յոգ. գործիմք, | գործիք, | գործին ։ |
| | Անկատար ։ | |
| եզ. Գործէի, | գործէիր, | գործէր կամ գործիւր. |
| յոգ. գործէաք, | գործէիք, | գործէին. |
| | Կատարեալ ։ | |
| եզ. Գործեցայ, | գործեցար, | գործեցաւ. |
| յոգ. գործեցաք, | գործեցայք կամ գործեցարուք, | գործեցան ։ |
| | Յարակատար. | |
| եզ. Գործեալ եմ, | գործեալ ես, | գործեալ է. |
| յոգ. գործեալ եմք, | գործեալ էք, | գործեալ են ։ |
| | Գերակատար ։ | |
| եզ. Գործեալ էի, | գործեալ էիր, | գործեալ էր. |
| յոգ. գործեալ էաք, | գործեալ էիք, | գործեալ էին ։ |
| | Ապառնի ։ | |
| եզ. Գործեցայց, | գործեսցիս, | գործեսցի. |
| յոգ. գործեսցուք, | գործեսջիք կամ գործիջիք, | գործեսցին ։ |

Հրամայական եղանակի ներկայ։

| | | |
|---|---|---|
| եզ. . . . . | Գործեա՛ց * կամ գործեցի՛ր, մի՛ գործեր . . . | |
| յոգ. . . . . | գործեցարո՛ւք, մի՛ գործէք։ | |

Հրամ. ապառնի։

| | | |
|---|---|---|
| եզ. . . . . | Գործեսջի՛ր կամ ծիջի՛ր կամ ծեսցի՛ս, | գործեսցի՛ . |
| յոգ. գործեսցո՛ւք, | գործեսջի՛ք կամ գործիջի՛ք, | գործեսցի՛ն ։ |

Ստորադասական եղանակի ապառնի։

| | | |
|---|---|---|
| եզ. Գործիցեմ, | գործիցես, | գործիցի . |
| յոգ. գործիցեմք, | գործիցէք, | գործիցին ։ |

Ստորադ. անցեալ։

| | | |
|---|---|---|
| եզ. Գործեալ իցեմ, | գործեալ իցես, | գործեալ իցէ . |
| յոգ. գործեալ իցեմք, | գործեալ իցէք, | գործեալ իցեն ։ |

Աներեւոյթ եղանակ. Գործել կամ գործիլ, գործելոյ, գործելով. եւն ։

Ընդունելութ̅ ներկայ. Գործեալ կամ գործեցեալ.

Ընդունելութ̅ անցեալ. Գործեալ կամ գործեցեալ ։

Ընդուն. ապառնի. Գործելոց կամ գործելի ։

---

* Չեզոքական ու հասարակ բայերանը առանց ց տառին ալ կըլլայ, ողորմեա՛, խօսեա՛, եւն. Իսկ ողորմեցի՛ր, խօսեցի՛ր, ըլլար ։

Ասոր պէս կըխոնարհին ամմէն իմ վերջացած կրաւորական, չէզոքական, ու հասարակ բայերը, որոնց որ կատարեալը եցայ կըլլայ նէ. օր.

| | |
|---|---|
| Աշխատիմ, աշխատեցայ. . . . . . | յոգնիլ. եօրուլմաք: |
| Բարբառիմ, բարբառեցայ. . . . . | ըսել. խօսել: |
| Խորհիմ, խորհեցայ. . . . . . | մըռմըռալ. փըսըլտամաք: |

Շատ բայեր կան եմ ու իմ վերջացած, որ թէպէտ ասոնց պէս կըխոնարհին՝ բայց կատարեալին մէջը եց մասնիկին տեղը՝ աց կառնեն. Նմանապէս ապառնիին հրամայականին ու ներկայ և անցեալ ընդունելութիններուն՝ որ գրեթէ միշտ կատարեալէն կըշինուին. օր. Ասեմ, ասացի, ասացից, ասացէք, ասացեալ. չըլլար ըսել ասեալ:
Ուրիշ բայեր ալ կան, որ ոչ եց և ոչ աց մասնիկ կառնեն. օր. Հանեմ, հանի, հանից:
Ուրիշ բայեր ալ կան, որ չէ թէ միայն աց կամ եց չեն առներ, հապա իրենց ան մասնիկն ալ դուրս կըձգեն. օր. Հատանեմ, հատի, հատից, հատեալ, հատօղ կամ հատանօղ:
Ասանկ կըխոնարհին նաև ամմէն Անցողական բայերը, որ ուցանեմ կամ ուսանեմ կամ ուզանեմ կըվերջանան. օր. Անցուցանեմ, Կորուսանեմ, Ելուզանեմ:
Հիմայ աս եմ ու իմ վերջացած բայերուն կատարեալները տակէ տակ գրենք կարգաւ, տարբերութիւններնին աւելի որոշ իմանալու համար.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ոմանց | եմը, | եցի կըփոխուի. օր. | Գործեմ, | Գործեցի. |
| Կրաւորականը | իմ, | եցայ. օր. | Գործիմ, | Գործեցայ: |
| Ոմանց | եմը, | ացի կըփոխուի. օր. | Ասեմ, | Ասացի. |
| Կրաւորականը | իմ, | ացայ. օր. | Ասիմ, | Ասացայ: |

Ոմանց եմը, ի կը փոխուի. զոր Հանեմ, Հանի.
Կրաւորականը իմ, այ. զոր Հանիմ, Հանայ.
Ոմանց անեմը ի կը փոխուի. զոր Հատանեմ, Հատի.
Կրաւորականը անիմ, այ. զոր Հատանիմ, Հատայ:

Աս վերջինին պէս կըլլան անցողականներն ալ. Մատուցանեմ, Մատուցի.
Մատուցանիմ, Մատուցայ:

Աս կատարեալներէն կըշինուին իրենց ապառնին, հրամայականը, ու ներկայ և անցեալ ընդունելութիւնները. զոր

Գործեցի, գործեցից, գործեցէք, գործեցող կամ գործող, գործեցեալ կամ գործեալ
Ասացի, ասացից, ասացէք, ասացող կամ ասող, ասացեալ:
Հանի, հանից, հանէք, հանող, հանեալ:
Հատի, հատից, հատէք, հատող կամ հատանող, հատեալ:
Մատուցի, մատուցից, մատուցէք, մատուցող կամ մատուցանող. մատուցեալ:

Բայց աս ամէն բայերն ալ երկու տեղ կըտարբերին. մէյմը կատարեալին եզակի երրորդ դէմքը, որ կըլլայ

Ասեմին՝ ասաց:
Հանեմին՝ հան կամ եհան:
Հատանեմին՝ հատ կամ եհատ:
Անցուցանեմին՝ անցոյց:

Մէյ մըն ալ հրամայական ներկային եզակի երկրորդ դէմքը, որ կըլլայ

Ասեմինը՝ աս · կրաւորականը ասուէր ։

Հանեմինը՝ հա՛ն · կրաւորականը հանուէր ։

Հափանեմինը՝ հա՛փ · կրաւորականը հափուէր ։

Անցուցանեմինը՝ անցո՛ · իր ւիւնէն սկսեալ մինչեւ վերջը ձգելով · իր ղեկուցանեմ, ղեկո՛ · կորուսանեմ, կորո՛ · ելուղանեմ, ելո՛ · եւն ։

Որոշ իմանալու համար, աս բայերուն ալ խոնարհմունքը համառօտ մը դնենք ։

| | |
|---|---|
| Սահմանական ներկայ · | Ասեմ, ասես, ասէ · ասեմք, ասէք, ասեն ։ |
| Անկատար · | Ասէի, ասէիր, ասէր · ասէաք, ասէիք, ասէին ։ |
| Կատարեալ · | Ասացի, ասացեր, ասաց · ասացաք, ասացիք, կամ ցէք, ասացին ։ |
| Յարակ · եւ Գերակ · | Ասացեալ եմ, ես, է, եւն ։ Ասացեալ էի, էիր, էր, եւն ։ |
| Ապառնի · | Ասացից, ասասցես, ասասցէ · ասասցուք, ասասջիք, ասասցեն ։ |
| Հրամայական ներկայ · | Աս, մի՛ ասեր · ասացէք, մի՛ ասէք ։ |
| Հրամ · ապառնի · | Ասասջիր, ասասցես, ասասցէ · ասասցուք, ասասջիք, եւն ։ |
| Ստորադասական ալ · | Ասիցեմ, ցես, ցէ · ցեմք, ցէք, ցեն ։ |
| Ստորադ · անցեալ · | Ասացեալ իցեմ, իցես, իցէ · իցեմք, իցէք, իցեն ։ |
| Աներեւոյթ եղանակ · | Ասել, ասելոյ, ասելով, յասել ։ |
| Ընդունելութ՟ ներկայ · | Ասօղ կամ ասացօղ ։ Անցեալ · Ասացեալ ։ Ապառնի · Ասելոց ։ |

Կրաւորական ։

| | |
|---|---|
| Սահմանական ներկայ · | Ասիմ, ասիս, ասի · ասիմք, ասիք, ասին ։ |
| Անկատար · | Ասէի, ասէիր, ասէր կամ ասիւր · էաք, էիք, էին ։ |
| Կատարեալ · | Ասացայ, ցար, ցաւ · ցաք, ցայք կամ ցարուք, ասացան ։ |
| Յարակ · և Գերակ ։ | Ասացեալ եմ, ե՟ն ։ Ասացեալ էի ե՟ն ։ |
| Ապառնի · | Ասացայց, ասասցիս, ցի · ցուք, ասասջիք կամ ասիջիք, ասասցին ։ |
| Հրամ · եղ · ներկ · | Ասացիր, մի՛ ասիր, ասացարուք կամ ասացայք, մի՛ ասիք ։ |
| Հրամ · ապառնի | Ասասջիր կամ ասիջիր կամ ասասցի՛ս, ասասցի՛ · ասասցո՛ւք, ե՟ն ։ |
| Ստոր · եղ · ապ · | Ասիցիմ, ցիս, ցի · ցիմք, ցիք, ցին ։ |
| Ստորադասական · | Ասացեալ լիցիմ · ե՟ն ։ |
| Աներևոյթ եղ · | Ասել կամ ասիլ, ասելոյ, ասելով ։ |
| Ընդուն · ներկ և անց · | Ասացեալ ։ Ապառնի · Ասելոց կամ ասելի ։ |

---

| | |
|---|---|
| Սահմ · եղ · ներկ · | Հանեմ, հանես, հանէ · հանեմք, հանէք, հանեն ։ |
| Անկատար · | Հանէի, հանէիր, հանէր · հանէաք, հանէիք, հանէին ։ |
| Կատարեալ · | Հանի, հաներ, հան կամ եհան*, հանաք, հանիք կ՟նէք, հանին ։ |

* Թէ որ բայը յայնաւոր գիրով սկսի նէ, ե գիրէն տեղը՝ է կըդըրուի · զ՟ Ածեմ, ածի, ածեր, ած կամ էած ։ Ասանկ կըլլայ շատ անգամ հ կամ յ գիրով սկսած բառերուն ալ · զ՟ Հանեմ, եհան կամ էհան · Յարկանեմ, եյարկ կամ էյարկ ։

| | |
|---|---|
| Յարակ. և Գերակ. | Հանեալ եմ, ե՟ն։ Հանեալ էի, ե՟ն։ |
| Ապառնի. | Հանից, հանցես, ցէ. ցուք, հանջիք կ՟ հանիջիք, հանցեն։ |
| Հրամ. եղ. ներկ. | Հա՛ն, մի՛ հաներ. հանէ՛ք, մի՛ հանէք։ |
| Հրամ. ապառնի. | Հանջի՛ր կամ հանիջի՛ր, հանցէ՛. հանցո՛ւք, հանջի՛ք կամ հանի-ջի՛ք, հանցե՛ն։ |
| Ստոր. եղ. ապ. | Հանիցեմ, ցես, ցէ. ցեմք, ցէք, ցեն։ |
| Ստորադ. անցեալ. | Հանեալ իցեմ, ե՟ն։ |
| Աներևոյթ եղ. | Հանել, հանելոյ, հանելով։ |
| Ընդունել. ներկ. | Հանօղ։ Անցեալ. Հանեալ։ Ապառնի. Հանելոց։ |

---

Կրաւորական։

| | |
|---|---|
| Սահմ. եղ. ներկ. | Հանիմ, հանիս, հանի. հանիմք, հանիք, հանին։ |
| Անկատար. | Հանէի, հանէիր, հանէր կամ հանիւր. նէաք, նէիք, նէին։ |
| Կատարեալ. | Հանայ, նար, նաւ. նաք, հանայք, կ՟ հանարուք, հանան։ |
| Յարակ. և Գերակ. | Հանեալ եմ, ե՟ն։ Հանեալ էի, ե՟ն։ |
| Ապառնի. | Հանայց, հանցիս, հանցի. հանցուք, հանջիք կամ հանիջիք, հանցին։ |
| Հրամ. եղ. ներկ. | Հանի՛ր, մի՛ հանիր. հանարո՛ւք կամ հանա՛յք, մի՛ հանիք։ |
| Հրամ. ապառնի. | Հանջի՛ր կամ հանիջի՛ր կամ հանցի՛ս, հանցի՛. հանցո՛ւք, հան-ջի՛ք կամ հանիջի՛ք, հանցի՛ն։ |

ՍՏՈՐ. ԵՂ. ՆԵՐԿ. Հանիցիմ, ցիս, ցի. ցիմք, ցիք, ցին:
ՍՏՈՐ. ԱՆՑԵԱԼ. Հանեալ իցեմ, են:
ԱՆԵՐԵՒՈՅԹ ԵՂ. Հանել կամ նիլ, հանելոյ, հանելով:
ԸՆԴՈՒՆ. ՆԵՐԿ ԵՒ ԱՆՑ. Հանեալ: ԱՊԱՌՆԻ. Հանելոց կամ հանելի:

---

ՍԱՀՄ. ԵՂ. ՆԵՐԿ. Հատանեմ, հատանես, հատանէ. նեմք, նէք, նեն:
ԱՆԿԱՏԱՐ. Հատանէի, հատանէիր, հատանէր. նէաք, նէիք, նէին:
ԿԱՏԱՐԵԱԼ. Հատի, հատեր, հատ կամ եհատ. հատաք, հատիք կամ հատէք, հատին:
ՅԱՐԱԿ. ԵՒ ԳԵՐԱԿ. Հատեալ եմ, են: Հատեալ էի, էին:
ԱՊԱՌՆԻ. Հատից, հատցես, հատցէ. հատցուք, հատջիք կամ հատանիջիք, հատցեն:
ՀՐԱՄ. ԵՂ. ՆԵՐԿ. Հա՛տ, մի՛ հատաներ. հատէ՛ք, մի՛ հատանէք:
ՀՐԱՄ. ԱՊԱՌՆԻ. Հատջի՛ր կամ հատանիջի՛ր կամ հատցե՛ս, հատցէ՛. հատցո՛ւք, հատջի՛ք կամ հատանիջի՛ք, հատցե՛ն:
ՍՏՈՐ. ԵՂ. ԱՊ. Հատանիցեմ, ցես, ցէ. ցեմք, ցէք, ցեն:
ՍՏՈՐԱԴ. ԱՆՑԵԱԼ. Հատեալ իցեմ, են:
ԱՆԵՐԵՒՈՅԹ ԵՂ. Հատանել, հատանելոյ, հատանելով:
ԸՆԴՈՒՆ. ՆԵՐԿ. Հատող կամ հատանող: ԱՆՑԵԱԼ. Հատեալ:
ԱՊԱՌՆԻ. Հատանելոց կամ հատանելի:

Կրաւորական.

| | |
|---|---|
| Սահմ. եղ. ներկ. | Հատանիմ, հատանիս, հատանի. հատանիմք, նիք, նին ։ |
| Անկատար. | Հատանէի, նէիր, նէր կամ նիւր. նէաք, նէիք, նէին ։ |
| Կատարեալ. | Հատայ, տար, տաւ. տաք, հատայք կ՟ հատարուք, հատան ։ |
| Յարակ. և Գերակ. | Հատեալ եմ, են ։ Հատեալ էի, էն ։ |
| Ապառնի. | Հատայց, հատցիս, հատցի. հատցուք, հատջիք կամ հատանիջիք, հատցին ։ |
| Հրամ. եղ. ներկ. | Հատի՛ր, մի՛ հատանիր. հատարո՛ւք կ՟ հատա՛յք, մի՛ հատանիք ։ |
| Հրամ. ապառնի. | Հատջի՛ր կամ հատանիջի՛ր կամ հատցի՛ս, հատցի. հատցուք, հատջի՛ք կամ հատանիջի՛ք, հատցին ։ |
| Ստոր. եղ. ներկ. | Հատանիցիմ, ցիս, ցի. ցիմք, ցիք, ցին ։ |
| Ստոր. անցեալ. | Հատեալ իցեմ, են ։ |
| Աներևոյթ եղ. | Հատանել կամ հատանիլ, հատանելոյ, հատանելով ։ |
| Ընդուն. ներկ և անց. | Հատեալ ։ Ապառնի. Հատանելոց կամ հատանելի ։ |

---

| | |
|---|---|
| Սահմ. եղ. ներկ. | Մատուցանեմ, մատուցանես, մատուցանէ. նեմք, նէք, նեն ։ |
| Անկատար. | Մատուցանէի, մատուցանէիր, նէր. նէաք, նէիք, նէին ։ |
| Կատարեալ. | Մատուցի, մատուցեր, մատոյց. մատուցաք, ցիք, կ՟ ցէք, ցին ։ |
| Յարակ. և Գերակ. | Մատուցեալ եմ, են ։ Մատուցեալ էի, էն ։ |

Ապառնի . Մատուցից , մատուսցես , մատուսցէ . մատուսցուք , մատուսջիք կամ մատուցանիջիք , մատուսցեն :

Հրամ . եղ . ներկ . Մատո՛ , մի՛ մատուցաներ . մատուցէ՛ք , մի՛ մատուցանէք :

Ապառնի . Մատուսջի՛ր կամ մատուցանիջի՛ր , մատուսցե՛ս , մատուսցէ՛ . մատուսցո՛ւք , մատուսջի՛ք կամ տուցանիջի՛ք , տուսցե՛ն :

Ստոր . եղ . ապ . Մատուցանիցեմ , ցես , ցէ . ցեմք , ցէք , ցեն :

Անցեալ . Մատուցեալ իցեմ , ե՛ն :

Աներևոյթ եղ . Մատուցանել , մատուցանելոյ , մատուցանելով :

Ընդունել . ներկ . Մատուցող կամ մատուցանող : Անցեալ . Մատուցեալ :

Ընդուն . ապառնի . Մատուցանելոց :

Կրաւորական :

Սահմ . եղ . ներկ . Մատուցանիմ , մատուցանիս , մատուցանի , նիմք , նիք , նին :

Անկատար . Մատուցանէի , նէիր , նէր կամ նիւր . նէաք , նէիք , նէին :

Կատարեալ . Մատուցայ , ցար , ցաւ . մատուցաք , ցարուք կամ ցայք , ցան :

Յարակ . և Գերակ . Մատուցեալ եմ , ե՛ն : Մատուցեալ էի , ե՛ն :

Ապառնի . Մատուցայց , մատուսցիս , մատուսցի . մատուսցուք , մատուսջիք կամ մատուցանիջիք , մատուսցին :

Հրամ . եղ . ներկ . Մատուցի՛ր , մի՛ մատուցանիր . մատուցարո՛ւք կամ մատուցա՛յք , մի՛ մատուցանիք :

Հրամ. ապառնի. Մատուսջի՛ր կամ մատուսցե՛ս, մատուսցէ՛. մատուսցո՛ւք, մա-տուսջի՛ք կամ մատուցանիջի՛ք, մատուսցե՛ն :

Ստոր. եղ. ապ. Մատուցանիցեմ, ցես, ցէ. ցեմք, ցէք, ցեն :

Ստոր. անցեալ. Մատուցեալ իցեմ, ևն :

Աներևոյթ եղ. Մատուցանել կամ նիլ, մատուցանելոյ, մատուցանելով:

Ընդուն. ներկ. և անց. Մատուցեալ: Ապառնի. Մատուցանելոց :

Բայց շատ անգամ աս անցողական բայերուն կրաւորականին տեղը կըբանեցուի իրենց արմատը՝ ուսկից որ իրենք կելլեն նէ. օր Մատչիմ կըսուի, մատուցանիմ ըսելու տեղը :

Աս դրած կրաւորականներէս 'ի զատ, ամէն ներգործական բայերուն անցեալը էական բայով կրաւորական կըլլայ. օր. Գործեմ, գործեալ լինիմ: Առնեմ, առեալ լինիմ: Մատուցանեմ, մատուցեալ լինիմ. ևն :

Չիմ վերջացած բայերը աս տարբերութիւնը ունին որ, կատարեալին մէջը մէկ է գիր մը կաւելցունեն, հրամայականին երուք կըլլայ, անցեալ ընդունելութիւնին ալ ուցեալ կըլլայ. օր Մատչիմ, մատեաւ, մատիք կամ մատերուք, մատուցեալ. Երկնչիմ, Երկեաւ, երկերուք, երկուցեալ, ևն :

Հշ. Ըսէ ինծի ան բայերը՝ որ ամ կըվերջանան, ինչպէս կըխոնարհին.

| | | |
|---|---|---|
| | Սահմանական եղանակի ներկայ: | |
| Պր. եզ. Աղամ, | աղաս, | աղայ. |
| յոգ. աղամք, | աղայք, | աղան: |
| | Անկատար: | |
| եզ. Աղայի, | աղայիր, | աղայր. |
| յոգ. աղայաք, | աղայիք, | աղային: |
| | Կատարեալ: | |
| եզ. Աղացի, | աղացեր, | աղաց. |
| յոգ. աղացաք, | աղացիք կամ աղացէք, | աղացին: |
| | Յարակատար: | |
| | Աղացեալ եմ, ես, է. աղացեալ եմք, էք, են: | |
| | Գերակատար: | |
| | Աղացեալ էի, էիր, էր. աղացեալ էաք, էիք, էին: | |
| | Ապառնի: | |
| եզ. Աղացից, | աղասցես, | աղասցէ. |
| յոգ. աղասցուք, | աղասջիք, | աղասցեն: |
| | Հրամայական եղանակի ներկայ: | |
| եզ. . . . | Աղա՛, մի՛ աղար. | . . . |
| յոգ. . . . | աղացէ՛ք, մի՛ աղայք: | . . . |

Հրամ. ապառնի:

| | | |
|---|---|---|
| Եզ. . . . | Աղասջի՛ր կամ աղասցե՛ս, | աղասցէ՛. |
| յոգ. աղասցո՛ւք, | աղասջի՛ք, | աղասցե՛ն: |

Ստորադասական եղանակի ապառնի:

| | | |
|---|---|---|
| Եզ. Աղայցեմ, | աղայցես, | աղայցէ. |
| յոգ. աղայցեմք, | աղայցէք, | աղայցեն: |

Ստոր. անցեալ:

Աղացեալ լիցեմ, լիցես, լիցէ. աղացեալ լիցեմք, լիցէք, լիցեն:

Աներևոյթ եղանակ. Աղալ, աղալոյ, աղալով, յաղալ:

Ընդունելութ՟ ներկայ. Աղացող: Անցեալ. Աղացեալ: Ապառնի. Աղալոց:

---

Կրաւորական:

| | |
|---|---|
| Սահմ. եզ. ներկ. | Աղամ, աղաս, աղայ, աղամք, ևն. կ՟մ Աղացեալ լինիմ, ևն: |
| Անկատար. | Աղայի, աղայիր, աղայր. ևն. կամ Աղացեալ լինէի, ևն. |
| Կատարեալ. | Աղացայ, աղացար, աղացաւ. ցաք, ցայք կ՟մ ցարուք, ցան: |
| Յարակ. և Գերակ. | Աղացեալ եմ, ևն: Աղացեալ էի, ևն: |
| Ապառնի. | Աղացայց, աղասցիս, ցի. աղասցուք, աղասջիք, աղասցին: |
| Հրամ. եզ. ներկ. | Աղացի՛ր, մի՛ աղար. աղացարո՛ւք կամ աղացա՛յք, մի՛ աղայք: |
| Հրամ. ապառնի. | Աղասջիր կամ աղասցիս, սցի. սցուք, աղասջիք, աղասցին: |

Ստոր. եղ. առ. Աղայցեմ, աղայցես, աղայցէ. եւն. կ՚ Աղացեալ ըլլայցեմ, եւն։
Ստոր. անցեալ. Աղացեալ լիցիմ, եւն։
Աներեւոյթ եղ. Աղալ կամ աղացեալ լինել։
Ընդուն. ներկ. եւ անց. Աղացեալ։ Ապառնի. Աղալոց կամ աղալի։

Ասոր պէս կը խոնարհին ամէն ամ վերջացած բայերը, որոնց որ կատարեալը ացի կըլլայ նէ. զր.

Լամ, լացի . . . . Լալ. աղլամաք։
Թանամ, թացի . . . . Թրջել. ըսլաթմաք։
Գնամ, գնացի . . . . Երթալ. կիթմէք։

Կան բայեր՝ որ թէպէտ ասոր տակը կերթան, բայց կատարեալնին ու ապառնինին նմ վերջաւորած բառերուն պէս կըլլայ. զր. Խոստանամ, խոստացայ, խոստացայց։

Աս երրորդ խոնարհման տակը գնացող բայերէն ոմանց կրաւորականնին սահմ. ներկայն ուրիշ կերպմընալ կըլլայ ասանկ. Լուանամ, լուանիմ. Բառնամ, բառնիմ. Ստանամ, ստացանիմ։

Հց. Ըսէ ինծի ան բայերը՝ որ ում կը վերջանան, ինչպէս կը խոնարհին.

Սահմանական եղանակի ներկայ։

Պր. եզ. Թողում, Թողուս, Թողու.
յոգ. Թողումք, Թողուք, Թողուն։

Անկատար:

եզ. Թողուի, Թողուիր, Թողոյր.

յոգ. Թողուաք, Թողուիք, Թողուին:

Կատարեալ:

եզ. Թողի, Թողեր, եԹող կամ Թող.

յոգ. Թողաք, Թողէք կամ Թողէք, Թողին:

Յարակատար:

Թողեալ եմ, ես, է. Թողեալ եմք, էք, են:

Գերակատար:

Թողեալ էի, էիր, էր. Թողեալ էաք, էիք, էին:

Ապառնի:

եզ. Թողից, Թողցես, Թողցէ.

յոգ. Թողցուք, Թողջիք, Թողցեն:

Հրամայական եղանակի ներկայ:

եզ. . . . Թո՛ղ, մի՛ Թողուր. . . .

յոգ. . . . Թողէ՛ք, մի՛ Թողուք: . . .

Հրամ. ապառնի:

եզ. . . . Թողջի՛ր կամ Թողցես, Թողցէ՛.

յոգ. Թողցո՛ւք, Թողջի՛ք, Թողցե՛ն:

Ստորադասական եղանակի ապառնի։

Եզ. Թողուցում, Թողուցուս, Թողուցու.
Յոգ. Թողուցումք, Թողուցուք, Թողուցուն։

Ստոր. անցեալ։

Թողեալ լիցեմ, լիցես, լիցէ. Թողեալ լիցեմք, լիցէք, լիցեն։

Աներևոյթ եղանակ. Թողուլ, Թողլոյ, Թողլով, 'ի Թողուլ.

Ընդունելութիւն ներկայ. Թողող։ Անցեալ. Թողեալ։ Ապառնի. Թողլոց։

---

Կրաւորականը։

| | |
|---|---|
| Սահմ. եղ. ներկ. | Թողում, ղուս, ղու. ղումք, ևն։ կամ Թողեալ լինիմ, ևն։ |
| Անկատար. | Թողուի, Թողուիր, Թողոյր. ևն։ կամ Թողեալ լինէի, ևն։ |
| Կատարեալ. | Թողայ, ղար, ղաւ. ղաք, ղայք կամ Թողարուք, Թողան։ |
| Յարակ. և Գերակ. | Թողեալ եմ, ևն։ Թողեալ էի, ևն։ |
| Ապառնի. | Թողայց, Թողցիս, Թողցի. Թողցուք, Թողջիք, Թողցին։ |
| Հրամ. եղ. ներկ. | Թողի՛ր, մի՛ Թողուր. Թողարո՛ւք կամ Թողա՛յք, մի՛ Թողուք։ |
| Հրամ. ապառնի. | Թողջի՛ր կամ Թողցի՛ս, Թողցի՛. Թողցո՛ւք, Թողջի՛ք, Թողցի՛ն։ |
| Ստոր. եղ. ապ. | Թողուցում, Թողուցուս, ևն։ կամ Թողեալ լինիցիմ, ևն։ |
| Ստոր. անցեալ. | Թողեալ լիցեմ, ևն։ |
| Աներևոյթ եղ. | Թողուլ կամ Թողեալ լինել։ |
| Ընդունել. ներկ. և անց. | Թողեալ։ Ապառնի. Թողլոց կամ Թողլի։ |

Այսոր պէս կը խոնարհին ամմէն ում վերջացած բայերը, որոնց որ կատարեալը ի կըլայ, զի

| | |
|---|---|
| Արգելում, արգելի . . . . . | արգիլել, չթողուլ: |
| Զենում, զենի . . . . . | մորթել, զոհ ընել: |
| Լիզում, լիզի . . . . . | լըզել. եալամագ: |
| Խնում, խցի . . . . . | թխել. թըգամագ: |
| Ընկենում. ընկեցի, ընկեցեր, ընկեց կամ ընկեաց. | ձգել. պըրագմագ: |

---

Այսոր տակը գնացող բայերէն ոմանց ներգործականին կատարեալն ալ կրաւորականին պէս կըլայ. զի Զգենում, զգեցայ. Հեծնում, հեծայ. Զբօսնում, զբօսայ. են:
Աս նում վերջացած բայերէն անոնք որ չիմ ալ կը վերջանան նէ, գրեթէ ամմէնուն կատարեալը, ապառնին, հրամայականը, ու անցեալ ընդունելութիւնը, անոնց պէս կըլայ. զի Թագնում կամ թագչիմ, թագեայ, թագեայց, թագերուք, թագուցեալ:
Փախնում կամ փախչիմ, փախեայ, փախեայց փախերուք, փախուցեալ:

---

Ասոնցմէ 'ի զատ կան մէկ քանի կանոնէ դուրս բայեր ալ, որ շարքուղի կըսուին. ասոնք կարգաւ դնենք, առաջ կանոնաւոր բայերը դիւրաւ քաղուածք ընելու համար՝ հոս տեղը աղիւսակմը դնելէն ետքը:

| | Սահմանական եղանակի ներկայ: | Անկատար: | Կատարեալ: | Յարակ. և Գերակ: | Ապառնի: |
|---|---|---|---|---|---|
| ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ: | Գործեմ, գործես, գործէ, ևն:<br>Ասեմ, ասես, ասէ:<br>Հանեմ, հանես, հանէ:<br>Հատանեմ, հատանես, հատանէ:<br>Մատուցանեմ, նես, նէ:<br>Աղամ, աղաս, աղայ:<br>Խոստանամ, նաս, նայ:<br>Թողում, թողուս, թողու:<br>Զգենում, զգենուս, զգենու: | Գործէի, գործէիր, գործէր, ևն:<br>Ասէի, ասէիր, ասէր:<br>Հանէի, հանէիր, հանէր:<br>Հատանէի, հատանէիր, հատանէր:<br>Մատուցանէի, նէիր, նէր:<br>Աղայի, աղայիր, աղայր:<br>Խոստանայի, նայիր, նայր:<br>Թողուի, թողուիր, թողոյր:<br>Զգենուի, զգենուիր, զգենոյր, | Գործեցի, ծեցեր, ծեաց. ծեցաք, ծեցիք կամ ցէք, ծեցին:<br>Ասացի, ասացեր, ասաց. ասացաք, ասացիք կամ ցէք, ասացին:<br>Հանի, հաներ, հան կամ եհան. հանաք, հանիք կամ նէք, հանին:<br>Հատի, հատեր, հատ կամ եհատ. հատաք, հատիք կամ տէք, հատին:<br>Մատուցի, մատուցեր, մատոյց. տուցաք, տուցիք կամ ցէք, տուցին:<br>Աղացի, աղացեր, աղաց. աղացաք, աղացիք կամ աղացէք, աղացին:<br>Խոստացայ, ցար, ցաւ. խոստացաք, խոստացայք կամ ցարուք, ցան:<br>Թողի, թողեր, թող կամ եթող. թողաք, թողիք կամ թողէք, թողին:<br>Զգեցայ, ցար, ցաւ. զգեցաք, զգեցայք կամ զգեցարուք, զգեցան: | Գործեալ եմ. էի. ևն:<br>Ասացեալ եմ. էի. ևն:<br>Հանեալ եմ. էի. ևն:<br>Հատեալ եմ. էի. ևն:<br>Մատուցեալ եմ. էի. ևն:<br>Աղացեալ եմ. էի. ևն:<br>Խոստացեալ եմ. էի. ևն:<br>Թողեալ եմ. էի. ևն:<br>Զգեցեալ եմ. էի. ևն: | Գործեցից, գործեսցես, գործեսցէ. գործեսցուք, գործեսջիք, գործեսցեն:<br>Ասացից, ասասցես, ասասցէ. ասասցուք, ասասջիք, ասասցեն:<br>Հանից, հանցես, հանցէ. հանցուք, հանջիք կամ հանիջիք, հանցեն:<br>Հատից, հատցես, հատցէ. հատցուք, հատջիք կամ հատանիջիք, հատցեն:<br>Մատուցից, տուցես, տուցէ. տուցուք, տուջիք կամ տուցանիջիք, տուցեն:<br>Աղացից, աղասցես, աղասցէ. աղասցուք, աղասջիք, աղասցեն:<br>Խոստացայց, խոստասցիս, խոստասցի. խոստասցուք, խոստասջիք, խոստասցին<br>Թողից, թողցես, թողցէ. թողցուք, թողջիք, թողցեն:<br>Զգեցայց, զգեսցիս, զգեսցի. զգեսցուք, զգեսջիք, զգեսցին: |
| ԿՐԱՒՈՐԱԿԱՆ: | Գործիմ, գործիս, գործի. ևն:<br>Ասիմ, ասիս, ասի:<br>Հանիմ, հանիս, հանի:<br>Հատանիմ, հատանիս, հատանի:<br>Մատուցանիմ, նիս, նի:<br>Աղամ. նոյն ընդ ներգործականին:<br>Խոստանամ. նոյն ընդ ներգործ:<br>Թողում. նոյն ընդ ներգ:<br>Զգենում. նոյն ընդ ներգ: | Գործէի, ծէիր, ծէր կամ ծիւր. ևն:<br>Ասէի, ասէիր, ասէր կամ ասիւր:<br>Հանէի, հանէիր, հանէր կամ նիւր:<br>Հատանէի, նէիր, նէր կամ նիւր:<br>Մատուցանէի, նէիր, նէր կամ նիւր:<br>Աղայի. նոյն ընդ ներգ:<br>Խոստանայի. նոյն ընդ ներգ:<br>Թողուի. նոյն ընդ ներգ:<br>Զգենուի. նոյն ընդ ներգ: | Գործեցայ, ցար, ցաւ. գործեցաք, գործեցայք կամ ցարուք, ցան:<br>Ասացայ, ցար, ցաւ. ասացաք, ասացայք կամ ցարուք, ցան:<br>Հանայ, նար, նաւ. հանաք, հանայք կամ հանարուք, հանան:<br>Հատայ, տար, տաւ. հատաք, հատայք կամ հատարուք, հատան:<br>Մատուցայ, ցար, ցաւ. մատուցաք, մատուցայք կամ ցարուք, ցան:<br>Աղացայ, ցար, ցաւ. աղացաք, աղացայք կամ աղացարուք, աղացան:<br>Խոստացայ. ներգործականին դէմ:<br>Թողայ, ղար, ղաւ. թողաք, թողայք կամ թողարուք, թողան:<br>Զգեցայ. ներգործականին դէմ: | Ներգործականին դէմ: | Գործեցայց, գործեսցիս, գործեսցի. ծեսցուք, ծեսջիք կամ ծիջիք, ծեսցին:<br>Ասացայց, ասասցիս, ասասցի. ասասցուք, ասասջիք կամ ասիջիք, ասասցին:<br>Հանայց, հանցիս, հանցի. հանցուք, հանջիք կամ հանիջիք, հանցին:<br>Հատայց, հատցիս, հատցի. հատցուք, հատջիք կամ հատանիջիք, հատցին:<br>Մատուցայց, տուցիս, ցի. տուցուք, տուջիք կամ տուցանիջիք, տուցին:<br>Աղացայց, աղասցիս, աղասցի. աղասցուք, աղասջիք, աղասցին:<br>Խոստացայց. ներգործականին դէմ:<br>Թողայց, թողցիս, թողցի. թողցուք, թողջիք, թողցին:<br>Զգեցայց. ներգործականին դէմ: |

| Հրամայական եղանակի ներկայ : | Հրամայական եղանակի ապառնի : | Ստոր. եղանակի ներկայ : | Ստոր. եղ. անցեալ : | Աներեւոյթ : | Ընդուն. ներկայ : | Ընդուն. անցեալ : | Ընդուն. ապառնի : |
|---|---|---|---|---|---|---|---|
| Գործեա՛, մի՛ գործեր . գործեցէ՛ք, մի՛ գործէք : | Գործեսջի՛ր կամ գործեսցե՛ս, գործեսցէ . եւն : | Գործիցեմ, ցես, ցէ . եւն : | Գործեալ իցեմ, եւն : | Գործել : | Գործող կամ ծեցող : | Գործեալ կամ ծեցեալ : | Գործելոց կամ գործելի : |
| Ասա՛, մի՛ ասեր . ասացէ՛ք, մի՛ ասէք : | Ասասջի՛ր կամ ասասցե՛ս, ասասցէ : | Ասիցեմ, ցես, ցէ : | Ասացեալ իցեմ : | Ասել : | Ասող կամ ասացող : | Ասացեալ : | Ասելոց կամ ասելի : |
| Հա՛ն, մի՛ հաներ . հանէ՛ք, մի՛ հանէք : | Հանջի՛ր կամ հանիջի՛ր, հանցե՛ս, հանցէ : | Հանիցեմ, ցես, ցէ : | Հանեալ իցեմ : | Հանել : | Հանող : | Հանեալ : | Հանելոց կամ հանելի : |
| Հա՛ս, մի՛ հասաներ . հասէ՛ք, մի՛ հասանէք : | Հասջի՛ր կամ հասանիջի՛ր կամ հասցե՛ս, ցէ : | Հասանիցեմ, ցես, ցէ : | Հասեալ իցեմ : | Հասանել : | Հասող կամ հասանող : | Հասեալ : | Հասանելոց կամ նելի : |
| Մատո՛, մի՛ մատուցաներ . մատուցէ՛ք, մի՛ մատուցանէք : | Մատուսջի՛ր կամ տուցանիջի՛ր կամ տուսցե՛ս, ցէ : | Մատուցանիցեմ, ցես, ցէ : | Մատուցեալ իցեմ : | Մատուցանել : | Մատուցող կամ ցանող : | Մատուցեալ : | Մատուցանելոց կամ նելի : |
| Աղա՛, մի՛ աղար . աղացէ՛ք, մի՛ աղայք : | Աղասջի՛ր կամ աղասցե՛ս, աղասցէ : | Աղայցեմ, ցես, ցէ : | Աղացեալ իցեմ : | Աղալ : | Աղացող : | Աղացեալ : | Աղալոց կամ աղալի : |
| Խոստացի՛ր, մի՛ խոստանար . խոստացարո՛ւք կամ ցո՛յք, մի՛ խոստանայք : | Խոստասջի՛ր կամ խոստասցի՛ս, խոստասցի : | Խոստանայցեմ, ցես, ցէ : | Խոստացեալ իցեմ : | Խոստանալ : | Խոստացող : | Խոստացեալ : | Խոստանալոց կամ նալի : |
| Թո՛ղ, մի՛ թողուր . թողէ՛ք, մի՛ թողուք : | Թողջի՛ր կամ թողցե՛ս, թողցէ : | Թողուցում, ցուս, ցու : | Թողեալ իցեմ : | Թողուլ : | Թողող : | Թողեալ : | Թողլոց կամ թողլի : |
| Զգեցի՛ր, մի՛ զգենուր . զգեցարո՛ւք կամ զգեցո՛յք, մի՛ զգենուք : | Զգեցջի՛ր կամ զգեցցի՛ս, զգեցցի : | Զգենուցում, ցուս, ցու : | Զգեցեալ իցեմ : | Զգենուլ : | Զգեցող : | Զգեցեալ : | Զգենլոց կամ զգենլի : |
| — | — | — | — | — | — | — | — |
| Գործեա՛ց կամ ծեցի՛ր . մի՛ գործիր . գործեցարո՛ւք կամ ցո՛յք, մի՛ գործիք : | Գործեսջի՛ր կամ գործեսցի՛ս, գործեսցի . եւն : | Գործիցիմ, ցիս, ցի . եւն : | Ներգործականին չէ : | Գործիլ կամ գործել : | Գործեալ կամ ծեցեալ : | Ներգործականին չէ : | Ներգործականին չէ : |
| Ասացի՛ր, մի՛ ասիր . ասացարո՛ւք կամ ասացո՛յք, մի՛ ասիք : | Ասասջի՛ր կամ ասասցի՛ս . ասասցի : | Ասիցիմ, ցիս, ցի : | | Ասիլ կամ ասել : | Ասացեալ : | | |
| Հանի՛ր, մի՛ հանիր . հանարո՛ւք կամ հանո՛յք, մի՛ հանիք : | Հանջի՛ր կամ հանիջի՛ր կամ հանցի՛ս, հանցի : | Հանիցիմ, ցիս, ցի : | | Հանիլ կամ հանել : | Հանեալ : | | |
| Հասի՛ր, մի՛ հասանիր . հասարո՛ւք կամ հասո՛յք, մի՛ հասանիք : | Հասջի՛ր կամ հասանիջի՛ր կամ հասցի՛ս, ցի : | Հասանիցիմ, ցիս, ցի : | | Հասանիլ կամ նել : | Հասեալ : | | |
| Մատուցի՛ր, մի՛ մատուցանիր . մատուցարո՛ւք կամ ցո՛յք, մի՛ մատուցանիք : | Մատուսջի՛ր կամ տուցանիջի՛ր կամ տուսցի՛ս, ցի : | Մատուցանիցիմ, ցիս : | | Մատուցանիլ կամ նել : | Մատուցեալ : | | |
| Աղացի՛ր, մի՛ աղար . աղացարո՛ւք կամ աղացո՛յք, մի՛ աղայք : | Աղասջի՛ր կամ աղասցի՛ս, աղասցի : | Ներգործականին չէ : | | Նոյն ընդ ներգործ : | Աղացեալ : | | |
| Ներգործականին չէ : | Ներգործականին չէ : | Ներգործականին չէ : | | Նոյն ընդ ներգործ : | Խոստացեալ : | | |
| Թողի՛ր, մի՛ թողուր : թողարո՛ւք կամ թողո՛յք, մի՛ թողուք : | Թողջի՛ր կամ թողցի՛ս, թողցի : | Ներգործականին չէ : | | Նոյն ընդ ներգործ : | Թողեալ : | | |
| Ներգործականին չէ : | Ներգործականին չէ : | Ներգործականին չէ : | | Նոյն ընդ ներգործ : | Զգեցեալ : | | |

## ՋԱՐՏՈՒՂԻ ԲԱՅԵՐԸ:

| | Ներգործական | Կրաւորական |
|---|---|---|
| Սահմ. եղ. ներկ. | Առնեմ, նես, նէ. նեմք, նէք, նեն: | Առնիմ, նիս, նի. նիմք, նիք, նին: |
| Անկատար. | Առնէի, նէիր, նէր. նէաք, ևն: | Ներգործականին պէս: |
| Կատարեալ. | Արարի, արարեր, արար. արարաք, արարիք կամ արարէք, արարին: | Արարայ, արարար, արարաւ. արարաք, արարայք, արարան: |
| Յարակ. և Գերակ. | Արարեալ եմ, ևն: Արարեալ էի, ևն: | Ներգործականին պէս: |
| Ապառնի. | Արարից, արասցես, ցէ. ցուք, արասջիք կամ առնիջիք, արասցեն: | Արարայց, արասցիս, ցի, արասցուք, առնիջիք, արասցին: |
| Հրամ. եղ. ներկ. | Արա՛, մի՛ առներ. արարէ՛ք, մի՛ առնէք: | Մի՛ առնիր. Մի՛ առնիք: |
| Հրամ. ապառնի. | Արասջիր կ՛մ առնիջիր կ՛մ արասցես, արասցէ. ևն: | Արասջի՛ր կամ առնիջի՛ր կամ արասցի՛ս, ևն: |
| Ստոր. եղ. ապ. | Առնիցեմ, ցես, ցէ. ցեմք, ցէք, ցեն: | Առնիցիմ, ցիս, ցի. ցիմք, ևն: |
| Ստոր. անցեալ. | Արարեալ իցեմ, ևն: | Ներգործականին պէս: |
| Աներևոյթ եղ. | Առնել, առնելոյ, առնելով: | Առնել կամ նիլ, նելոյ, նելով: |
| Ընդունել. ներկ. | Արարող կամ առնող: | Արարեալ: |
| Ընդուն. անցեալ. | Արարեալ: | Ներգործականին պէս: |
| Ընդուն. ապառնի. | Առնելոց: | Առնելոց կամ առնելի: |

| | | |
|---|---|---|
| Անկատար. | Տայի, տայիր, տայր. տայաք, ևն: | Տուեալ լինէի, ևն: |
| Կատարեալ. | Ետու, ետուր, ետ. տուաք, ետուք, ետուն: | Տուայ, տուար, տուաւ. տուաք, տուայք, տուան: |
| Յարակ. և Գերակ. | Տուեալ եմ, ևն: Տուեալ էի, ևն: | Նոյն է: |
| Ապառնի. | Տաց, տացես, տացէ. տացուք, տաջիք, տացեն: | Տուայց, տացիս, տացի. տացուք, տաջիք, տացին: |
| Հրամ. եղ. ներկ. | Տո՛ւր, մի՛ տար. տո՛ւք, մի՛ տայք: | Տուեալ լեր. ևն: |
| Հրամ. ապառնի. | Տաջի՛ր կամ տացե՛ս, տացէ՛, ևն: | Տաջի՛ր կամ տացի՛ս, տացի՛, ևն: |
| Ստոր. եղ. ապ. | Տայցեմ, ցես, ցէ. ցեմք, ցէք, ցեն: | Տուեալ լինիցիմ, ևն: |
| Ստոր. անցեալ. | Տուեալ իցեմ, ևն: | Նոյն է: |
| Աներևոյթ եղ. | Տալ, տալոյ, տալով: | Տուեալ լինել: |
| Ընդուն. ներկ: | Տուօղ: | Տուեալ: |
| Ընդուն. անցեալ. | Տուեալ: | Նոյն է: |
| Ընդուն. ապառնի. | Տալոց: | Տալոց կամ տալի: |

---

| | Ներգործական. | Կրաւորական: |
|---|---|---|
| Սահմ. եղ. ներկ. | Բառնամ, նաս, նայ. նամք, ևն: | Նոյն է: կ̃մ Բառնիմ, նիս, ևն: |
| Անկատար. | Բառնայի, յիր, ևն: | Նոյն է: |
| Կատարեալ. | Բարձի, բարձեր, եբարձ կամ բարձ. բարձաք, բարձիք կ̃մ ձէ՛ք, բարձին: | Բարձայ, ձար, ձաւ. ձաք, ձայք կամ ձարուք, ձան: |

| | | |
|---|---|---|
| Յարակ. և Գերակ. | Բարձեալ եմ, են: Բարձեալ էի, են: | Նոյն է: |
| Ապառնի. | Բարձից, բարձցես, բարձցէ. բարձցուք, բարձջիք, բարձցեն: | Բարձայց, բարձցիս, ցի. բարձցուք, բարձջիք, բարձցին: |
| Հրամ. եզ. ներկ. | Բա՛րձ, մի՛ բառնար. բարձէք, մի՛ բառնայք: | Բարձի՛ր, մի՛ բառնար. բարձա՛յք կամ ձարո՛ւք, մի՛ բառնայք: |
| Հրամ. ապառնի. | Բարձջի՛ր կամ բարձցե՛ս, բարձցէ՛, են: | Բարձջի՛ր կամ բարձցի՛ս, ցի. են: |
| Ստոր. եզ. ապ. | Բառնայցեմ, ցես, ցէ. են: | Նոյն է: |
| Ստոր. անցեալ. | Բարձեալ լիցեմ, են: | Նոյն է: |
| Աներևոյթ եղ. | Բառնալ, նալոյ, նալով: | Բառնիլ կամ բառնալ, նալոյ, են: |
| Ընդուն. ներկ. | Բարձօղ: | Բարձեալ: |
| Ընդուն. անցեալ. | Բարձեալ: | Նոյն է: |
| Ընդուն. ապառնի. | Բառնալոց: | Բառնալոց կամ բառնալի: |

---

Չեզոքական:

| | |
|---|---|
| Սահմ. եղ. ներկ. | Մեղանչեմ, չես, չէ. չեմք, չէք, չեն: |
| Անկատար. | Մեղանչէի, չէիր, չէր. են: |
| Կատարեալ. | Մեղայ, մեղար, մեղաւ. մեղաք, մեղայք կամ մեղարուք, մեղան: |
| Յարակ. և Գերակ. | Մեղուցեալ եմ, են: Մեղուցեալ էի, են: |
| Ապառնի. | Մեղայց, մեղիցես, մեղիցէ. մեղիցուք, մեղիջիք, մեղիցեն: |
| Հրամ. եզ. ներկ. | Մեղի՛ր, մի՛ մեղանչեր. մեղա՛յք կամ մեղարո՛ւք, մի՛ մեղանչէք: |

Հրամ. ապառնի. Մեղիջի՛ր կամ մեղիցե՛ս, մեղիցէ՛, ևն։

Ստոր. եղ. ապ. Մեղիցեմ կամ մեղանչիցեմ, ևն։

Ստոր. անցեալ. Մեղուցեալ իցեմ, ևն։

Աներևոյթ եղ. Մեղանչել, չելոյ, չելով։

Ընդուն. ներկ. Մեղանչօղ։ Անցեալ. Մեղուցեալ։ Ապառնի. Մեղանչելոց կամ չելի։

---

Չէզոքական։

Սահմ. եղ. ներկ. Յառնեմ, նես, նէ. նեմք, նէք, նեն։

Անկատար. Յառնէի, էիր, էր. էաք, էիք, էին։

Կատարեալ. Յարեայ, եար, եաւ. եաք, յարեայք կամ յարերուք, յարեան։

Յարակ. և Գերակ. Յարուցեալ եմ, ևն։ Յարուցեալ էի, ևն։

Ապառնի. Յարեայց, յարիցես, յարիցէ. յարիցուք, յարիջիք, յարիցեն։

Հրամ. եղ. ներկ. Արի՛, մի՛ յառներ. արի՛ք կամ յարերու՛ք, մի՛ յառնէք։

Հրամ. ապառնի. Յարիջի՛ր կամ յարիցե՛ս, յարիցէ՛. ևն։

Ստոր. եղ. ապ. Յարիցեմ կամ յառնիցեմ, ևն։

Ստոր. անցեալ. Յարուցեալ իցեմ, ևն։

Աներևոյթ եղ. Յառնել, յառնելոյ, յառնելով։

Ընդունել. ներկ. Յառնօղ։ Անցեալ. Յարուցեալ։ Ապառնի. Յառնելոց կամ յառնելի։

ՉԵԶՈՔԱԿԱՆ:

ՍԱՀՄ. ԵՂ. ՆԵՐԿ. կամ, կաս, կայ. կամք, կայք, կան:
ԱՆԿԱՏԱՐ. կայի, կայիր, կայր. կայաք, կայիք, կային:
ԿԱՏԱՐԵԱԼ. կացի, կացեր, եկաց կամ կաց. կացաք, կացիք կամ կացէք, կացին:
ՅԱՐԱԿ. ԵՒ ԳԵՐԱԿ. կացեալ եմ. ևն: կացեալ էի. ևն:
ԱՊԱՌՆԻ. կացից, կացցես, կացցէ. կացցուք, կացջիք, կացցեն:
ՀՐԱՄ. ԵՂ. ՆԵՐԿ. կա՛ց, մի՛ կար. կացէ՛ք, մի՛ կայք:
ՀՐԱՄ. ԱՊԱՌՆԻ. կացջի՛ր, կացցե՛ս, կացցէ՛. կացցո՛ւք, կացջի՛ք, կացցե՛ն:
ՍՏՈՐ. ԵՂ. ԱՊ. կայցեմ, կայցես, կայցէ. կայցեմք, կայցէք, կայցեն:
ՍՏՈՐ. ԱՆՑԵԱԼ. կացեալ իցեմ. ևն:
ԱՆԵՐԵՒՈՅԹ ԵՂ. կալ, կալոյ, կալով:
ԸՆԴՈՒՆ. ՆԵՐԿ. կացող: ԱՆՑԵԱԼ. կացեալ: ԱՊԱՌՆԻ. կալոց, կալի:

---

ՉԵԶՈՔԱԿԱՆ:

ՍԱՀՄ. ԵՂ. ՆԵՐԿ. կեամ, կեաս, կեայ. կեամք, կեայք, կեան:
ԱՆԿԱՏԱՐ. կէի, կէիր, կեայր. կէաք, կէիք, կէին:
ԿԱՏԱՐԵԱԼ. կեցի, կեցեր, եկեաց կամ կեաց. կեցաք, կեցիք կամ կեցէք, կեցին:
ՅԱՐԱԿ. ԵՒ ԳԵՐԱԿ. կեցեալ եմ. ևն: կեցեալ էի. ևն:
ԱՊԱՌՆԻ. կեցից, կեցցես, կեցցէ. կեցցուք, կեցջիք, կեցցեն:
ՀՐԱՄ. ԵՂ. ՆԵՐԿ. կեա՛ց, մի՛ կեար. կեցէ՛ք, մի՛ կեայք:

Հրամ. ապառնի. կեցջի՛ր, կեցցե՛ս, կեցցէ՛. կեցցո՛ւք, կեցջի՛ք. կեցցե՛ն:
Ստոր. եղ. ապ. կեայցեմ կամ կեցցեմ, ցես, ցէ. ցեմք, ցէք, ցեն:
Ստոր. անցեալ. կեցեալ լիցեմ, ե՛ն:
Աներևոյթ. կեալ, կելոյ, կելով:
Ընդուն. ներկ. կեցող: Անցեալ. կեցեալ: Ապառնի. կելոց:

---

Զեղծական:

Սահմ. եղ. ներկ. Գամ, գաս, գայ. գամք, գայք, գան:
Անկատար. Գայի, գայիր, գայր. գայաք, գայիք, գային:
Կատարեալ. Եկի. եկիր, եկն. եկաք, եկայք կամ եկիք, եկին:
Յարակ. և Գերակ. Եկեալ եմ, ե՛ն: Եկեալ էի, ե՛ն:
Ապառնի. Եկից, եկեսցես, եկեսցէ. եկեսցուք, եկեսջիք, եկեսցեն:
Հրամ. եղ. ներկ. Ե՛կ, մի՛ գար. եկա՛յք, մի՛ գայք:
Հրամ. ապառնի. Եկեսջի՛ր, եկեսցե՛ս, եկեսցէ՛. ե՛ն.
Ստոր. եղ. ապ. Գայցեմ, ցես, ցէ. ցեմք, ցէք, ցեն:
Ստոր. անցեալ: Եկեալ լիցեմ, լիցես, ե՛ն:
Աներևոյթ եղ. Գալ, գալոյ, գալով:
Ընդուն. ներկ. Եկող: Անցեալ. Եկեալ: Ապառնի. Գալոց, գալի:

Ուրիշ բայեր ալ կան որ ամէն ժամանակները չունենալով, ուրիշ պակասաւոր կա՛մ ամբողջ բայերէ փոխ կառնեն. ասոնք ալ գտնենք կարգաւ:

| | Ներգործական. | Կրաւորական. |
|---|---|---|
| Սահմ. եղ. ներկ. | Ուտեմ, ես, է. եմք, էք, են: | Ուտիմ, իս, ի. իմք, իք, ին: |
| Անկատար. | Ուտէի, էիր, էր, էաք, էին: | Նոյն է: |
| Կատարեալ. | Կերի, կերեր, կեր կամ եկեր. կերաք, կերիք, կերին: կամ կերայ, ար, աւ. կերաք, կերայք, կերան: | Կերեալ եղէ, են: |
| Յարակ. և Գերակ. | Կերեալ եմ, են. Կերեալ էի, էին: | Նոյն է: |
| Ապառնի. | Կերից կամ կերայց, կերիցես, րիցէ. կե_ րիցուք, րիջիք կամ ուտիջիք, կերիցեն: | Կերեալ եղէց, են: |
| Հրամ. եղ. ներկ. | Կեր, մի՛ ուտեր. կերայք կամ կերէք, մի՛ ուտէք: | Կերեալ լեր, են: |
| Հրամ. ապառնի. | Կերիջիր կամ ուտիջիր, կերիցես, են: | Կերեալ լիջիր, են: |
| Ստոր. եղ. ապ. | Կերիցեմ կամ ուտիցեմ, են: | Կերիցիմ կամ ուտիցիմ, են: |
| Ստոր. անցեալ. | Կերեալ իցեմ, իցես, են: | Նոյն է: |
| Աներևոյթ եղ. | Ուտել, ուտելոյ, ուտելով: | Ուտիլ կամ ուտել, տելոյ, են: |
| Ընդուն. ներկ. | Կերող: | Կերեալ: |
| Ընդուն. անցեալ. | Կերեալ: | Նոյն է: |
| Ընդուն. ապառնի. | Ուտելոց: | Ուտելոց կամ ուտելի կամ կերելի: |

| | Ներգործական. | Կրաւորական. |
|---|---|---|
| Սահմ. եղ. ներկ. | Ճանաչեմ, չես, չէ. չեմք, են: | Ճանաչիմ, չիս, չի. չիմք, ին: |
| Անկատար. | Ճանաչէի, չէիր, չէր, էին: | Նոյն է: |
| Կատարեալ. | Ծանեայ, եար, եաւ. եաք, ծանեայք, կամ ծաներուք, ծանեան: | Ծանուցայ կամ ծանուցեալ եղէ, են: |
| Յարակ. և Գերակ. | Ծանուցեալ եմ. Ծանուցեալ էի, են: | Նոյն է: |
| Ապառնի. | Ծանեայց, ծանիցես, ծանիցէ. ծանիցուք, ծանիջիք, ծանիցեն: | Ծանուցայց կամ ծանուցեալ եղէց, են: |
| Հրամ. եղ. ներկ. | Ծանի՛ր, մի՛ ճանաչեր. ծաներո՛ւք կամ ծանի՛ք, մի՛ ճանաչէք: | Ծանուցեալ լեր. են: Ծանուցեալ լիջիր. են: |
| Հրամ. ապառնի. | Ծանիջի՛ր կամ ծանիցես, ծանիցէ՛, են: | |
| Ստոր. եղ. ապ. | Ծանիցեմ կամ ճանաչիցեմ, ցես, ցէ. ցեմք, ցէք, ցեն. | Ծանիցիմ կամ ճանաչիցիմ, ցիս, ցի. են: |
| Ստոր. անցեալ. | Ծանուցեալ լիցեմ, լիցես, են: | Նոյն է: |
| Աներևոյթ եղ. | Ճանաչել, ճանաչելոյ, չելով: | Ճանաչիլ կամ չել, չելոյ, չելով: |
| Ընդուն. ներկ. | Ճանաչօղ: | Ծանուցեալ: |
| Ընդուն. անցեալ. | Ծանուցեալ: | Նոյն է: |
| Ընդուն. ապառնի. | Ճանաչելոց: | Ճանաչելոց կամ ճանաչելի: |

Ներգործական.

Սահմ. եղ. ներկ. Ըմպեմ, ըմպես, ըմպէ. ըմպեմք, ըմպէք, ըմպեն:
Անկատար. Ըմպէի, պէիր, ըմպէր. ըմպէաք, ըմպէիք, ըմպէին:
Կատարեալ. Արբի, արբեր, արբ կամ էարբ. արբաք, արբիք կամ արբէք, արբին:
Ցորդ. և Գերակ. Արբեալ կամ ըմպեալ եմ, են: Արբեալ կամ ըմպեալ էի են:
Ապառնի. Արբից, արբցես, արբցէ. արբցուք, արբջիք, արբցեն:
Հրամ. եղ. ներկ. Ա՛րբ, մի՛ ըմպեր. արբէ՛ք, մի՛ ըմպէք:
Հրամ. ապառնի: Արբջի՛ր կամ արբցե՛ս, արբցէ, են:
Ստոր. եղ. առ. Ըմպիցեմ, ցես, ցէ. ցեմք, ցէք, ցեն.
Ստոր. անցեալ. Արբեալ կամ ըմպեալ իցեմ, իցես, են:
Աներևոյթ եղ. Ըմպել, ըմպելոյ, ըմպելով:
Ընդուն. ներկ. Արբօղ կամըմպօղ: Անցեալ. Արբեալ կամըմպեալ:
Ընդուն. ապառնի. Ըմպելոց: Կրաւորականը. Ըմպելի:

Այսր կրաւորականը ամբողջ կըլլայ էական բայով, Արբեալ լինիմ. արբեալ եղէ. են:

---

Ներգործական.

Սահմ. եղ. ներկ. Ունիմ, ունիս, ունի. ունիմք, ունիք, ունին:
Անկատար. Ունէի, ունէիր, ունէր, ունէաք, ունէիք, ունէին:
Կատարեալ. Կալայ, կալար, կալաւ. կալաք, կալայք կամ կալարուք, կալան:
Ցորդ. և Գերակ. Կալեալ եմ, են: Կալեալ էի, են:

Ապառնի . Կալայց , կալցիս կամ կալցես , կալցի կամ կալցէ . կալցուք , կալջիք , կալցին կամ կալցեն :

Հրամ . եզ . ներկ . Կա՛լ կամ կա՛, մի՛ ունիր . կալարո՛ւք կամ կալա՛յք կամ կալէ՛ք , մի՛ ունիք:

Հրամ . ապառնի . Կալջի՛ր կամ ունիջի՛ր կամ կալցի՛ս , կալցի՛ , ևն :

Ստոր . եզ . ապ . Ունիցիմ, ցիս , ցի . ցիմք , ցիք , ցին .

Ստոր . անցեալ . Կալեալ իցեմ , իցես , ևն :

Աներևոյթ եղ . Ունել , ունելոյ , ունելով :

Ընդուն . ներկ . Ունող . Անցեալ . Կալեալ : Ապառնի . Ունելոց : Կրաւ . Ունելի :

Այսանկ կըլլան ասոնցմէն բարդած ուրիշ բայերնալ . զի Ընդունիմ , ընկալայ . Ակնունիմ , ակնկալայ . ևն : Ու ամմենուն կրաւորականն ալ ըլնիմ բայովը կըլլայ :

---

Չեզոքական .

Սահմ . եզ . ներկ . Երթամ, երթաս , երթայ . երթամք , երթայք , երթան :

Անկատար . Երթայի , երթայիր , երթայր . երթայաք , ևն :

Կատարեալ . Չոքայ կամ չոգայ , չոգար , չոգաւ . չոգաք , չոգայք , չոգան :

Յարակ . և Գերակ . Երթեալ եմ, ևն : Երթեալ էի , ևն :

Ապառնի . Երթայց , երթիցես , երթիցէ . երթիցուք , երթիջիք , երթիցեն :

Հրամ . եզ . ներկ . Ե՛րթ , մի՛ երթար . երթա՛յք , մի՛ երթայք :

Հրամ . ապառնի . Երթիջի՛ր կամ երթիցե՛ս , երթիցէ՛ , ևն :

Ստոր . եզ . ապ . Երթայցեմ կամ երթիցեմ , ցես , ցէ . ցեմք , ցէք , ցեն :

Ստոր. անցեալ. Երթեալ իցեմ, իցես, ե՛ն:
Աներեւոյթ եղ. Երթալ, երթալոյ, երթալով:
Ընդուն. ներկ. Երթօղ: Անցեալ. Երթեալ: Ապառնի. Երթալոց կամ երթալի:

---

Չեզոքական.

Սահմ. եղ. ներկ. Պարտիմ, տիս, տի. տիմք, տիք. տին:
Անկատար. Պարտէի, տէիր, տէր. տէաք, տէիք, տէին:
Ստոր. եղ. ապ. Պարտիցիմ, ցիս, ցի. ցիմք, ցիք, ցին:
Աներեւոյթ. Պարտել կամ պարտիլ:

---

Չեզոքական.

Սահմ. եղ. ներկ. Մարթիմ, թիս, թի. թիմք, թիք, թին: կամ Մարթեմ, թես, ե՛ն:
Անկատար. Մարթէի, մարթէիր, մարթէր. մարթէաք, թէիք, թէին:
Ստոր. եղ. ներկ. Մարթիցիմ, ցիս, ցի. ցիմք, ցիք, ցին:
Աներեւոյթ. Մարթել:

---

Ներգործական.

Հրամ. եղ. ներկ. Գո՛գ, ըսէ՛. գոգէ՛ք, ըսէ՛ք:
Հրամ. ապառնի. Գոգջի՛ր կամ գոգցես, գոգցէ՛. գոգցո՛ւք, գոգջի՛ք, գոգցե՛ն:

---

Մէկ ուրիշ պակասաւոր բայմընալ կայ նա, որուն բացասականը չնա շատ կըբանեցուի՝ ու գնայ ըսելուն տեղը ։

Ասոնցմէ 'ի զատ ուրիշ շատ բայեր ալ կան, որոնց կատարեալը ու հրամայականն ալ սովորականէն դուրս կըլլայ. Օր. Դառնամ, դարձայ, դա՛րձ կամ դարձի՛ր ։ Ընթեռնում, ընթերցայ, ընթերցի՛ր ։ Հարկանեմ, հարի, հա՛ր ։ Տանիմ, տարայ, տա՛ր ։ Զգենում, զգեցայ. եւն ։ Ասոր պատճառն ան է որ, աս եղանակները բայերուն արմատէն կըշինուին. իսկ արմատները մակաբերելը դժար է. անոր համար կէսը վարժութ., կէս մընալ բառգիրք նայելով կըսորվըլուին աս բաները, ինչպէս անուններուն սեռականին վրայ ալ ըսինք ։

---

## ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ.

### Ընդունելութեան վրայ ։

Հր. Ի՞նչ է ընդունելութիւնը.

Պտ. Է մասն բանի՝ որ կըցուցընէ իրը ժամանակովը ։ Անոր համար երեք կըբաժնըւի, Ներկայ, Անցեալ, ու Ապառնի. ինչպէս ամմէն բայերուն տակը ըսինք. ու թէ՛ բայի, թէ՛ անունի ուժ ունի ։

Ներկայ ընդունելութիւնները՝ որ օղ կվերջանան. երկրորդ հոլովմանը պէս կը հոլովվին.
Օր. Գործօղ, գործօղի, գործօղաց: Ասացօղ, ասացօղի, ասացօղաց. և՛ն:
Անցեալ ընդունելութիւնները՝ որ եալ կվերջանան, երրորդ հոլովմանը պէս կը հոլովվին.
Օր. Գործեալ, գործելոյ, գործելոց: Ասացեալ, ասացելոյ, ասացելոց. և՛ն:
Ապառնի ընդունելութիւնները՝ որ լոց կվերջանան, նախդրով մինակ կը հոլովվին. Օր. զգործելոցն. զգալոցն. և՛ն: Ասիկայ յարակատար ու գերակատար ժամանակնե-րուն պէս էական բայով ապառնիի տեղ կը բանեցուի. Օր. գործելոց եմ, գործելոց ես, և՛ն. գործելոց էի, գործելոց էիր, և՛ն:
Իսկ Նի վերջացած ապառնի ընդունելութիւնները երրորդ հոլովման պէս կը հոլովվին.
Առնելի, առնելւոյ, առնելեաց: Շարժելի, շարժելւոյ, շարժելեաց. և՛ն:

---

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

### Նախադրութեանց վրայ:

Հր. Ի՞նչ է նախադրութիւնը.

Պտ. Է մասն բանի, որ բառերուն քովը դրուելով կամ հոլովները կփոխէ, կամ վրա-նին նշանակութիւնը կաւելցնէ: Անոր համար երկու կը բաժնուի, հոլովակերտ ու հո-լովառու: Հոլովակերտ կըսուին նախադրութիւնները 'ի, յ, 'ի ց, առ, առ 'ի, ց, ընդ.

ըստ, զ. որոնցմով չէ թէ միայն տեսակ տեսակ հոլովներ կըշինուին, հապա կերպ կերպ հոլովներու հետ՝ այլևայլ նշանակութին կունենան ։ Իսկ հոլովառու կըսուին, որոնք որ տեսակ տեսակ հոլովներ իրենց խնդիր կառնեն ։

Հոլովակերտ նախադրութիւնները՝ գրեթէ բոլորը առոնք են ·

| | |
|---|---|
| Առ աչի · | վախուն համար ։ |
| Առ սէր ընչից · | ընչքի սիրուն համար ։ |
| Առ տաւակէ · | խաղք ըլլալու համար ։ |
| Առ 'ի չգոյէ · | չըլլալուն համար ։ |
| Առ դատողին · | դատաւորին առջևը ։ |
| Առ Աբրահամաւ · | Աբրահամին ատենը ։ |
| Ակն ընդ ական · | աչք աչքի տեղ ։ |
| Ընդ նմա · | անոր հետ ։ |
| Ընդ ծառով · | ծառին տակը ։ |
| Ընդ արևելս · | արևելքի կողմը ։ |
| Ընդ իս և ընդ քեզ · | իմ ու քու մէջը ։ |
| Ընդ ամս տասն · | տասը տարի ամբողջ ։ |
| Ընդ նորա · | անոր տեղը ։ |
| Ընդ անցանելն · | անցնելուն պէս ։ |
| Ըստ բանի քում · | քու խօսքիդ կէօրէ ։ |
| Ըստ անձին · | իրեն պէս · իր վրայ ։ |
| Ըստ Ճանապարհին · | ճամբուն վրայ ։ |
| Ըստ չափ · | չափէ դուրս ։ |
| Ըստ նոցանէ · | անոնց ետևէն ։ |
| Ամ ըստ ամէ · | տարուէ տարի ։ |
| Ըստ վրանս · | ամէն մէկ չատրին ։ |
| Ցյագ · | կուշտըմը ։ |
| 'Ի խրատ · | խրատելու համար ։ |
| 'Ի ձայն · | անոր ձայնով ։ |
| Զտիւ և զգիշեր · | գիշեր ցորեկ ։ |
| Զայս օրինակ · | աս կերպով ։ |
| Զգետնի հարկանել · | գետինը զարնել ։ |
| Զքարի հարկանել · | քարին վրայ զարնել ։ |
| Առաքել զջրոյ · | ջուր բերելու խրկել ։ |
| Շրջել 'ի ցպոյ · | գաւազանով քալել ։ |
| Փոքր յանձնէ · | մարմնով պզտիկ ։ |
| Ցամէ ևս · | տարիէ մը ։ |

Իսկ սովորական հոլովառու նախադրութիւնները ասոնք են , ու աս խնդիրները կուզեն .

Վասն սիրոյ · սիրոյ համար :
Սակս մեր · մեզի համար :
Յաղագս մեղաց · մեղքի համար :
Զկնի յաղթութեն · յաղթութէն ետքը:
Զհետ արդարութե · արդարութե ետևէն :
Յետ մահու · մահուընէ ետև :
Առաջի աչաց · աչքին առջևը :
Ընդ առաջ իշխանին · իշխանին դէմը :
Հանդէպ տան · տանը դիմացը :
'Ի ներքոյ երկնից · երկընքին տակը :
Արտաքոյ ժամանակի · ժամանակէ դուրս :
'Ի վերայ երկրի · երկրի վրայ :
'Ի մէջ ծառոց · ծառերու մէջ :
Ընդդէմ կամաց · կամքին դէմ :
'Ի ձեռն նորա · անոր ձեռքովը :
Յայնկոյս ծովու · ծովուն անդին :
Մերձ այսոցիկ · ասոնց քովը :
Մօտ այնոցիկ · անոնց քովը :
Հուպ 'ի վառարանն · կրակարանին քովը :

Փոխանակ բերանոյ · բերնի տեղ :
Զօրէն անասնոյ · անբանի պէս :
Առանց պահոց · առանց պաքի :
Մինչև 'ի մահ · մինչուան մահը :
Իբրև զհող · հողու պէս ·
Որպէս զփոշի · թօզի պէս :
Քան զքեզ · քեզմէ աւել :
'Ի վեր քան զմիտս · մտքէ վեր :
Առաւել քան զարև · արևէն աւել :
Մեկուսի 'ի բանակէն · բանակէն դուրս :
Հեռի 'ի տանէ · տունէն հեռու :
Գաղտ 'ի մօրէ · մօրմէն գաղտուկ :
Բաց յինէն · ինծմէ 'ի զատ :
Հանդերձ ծառայիւք · ծառաներուն հետ ·
ասիկայ երբեմն սեռական ալ կառնէ :
Ամօք յառաջ · տարիներով առաջ :
Շուրջ զքև · քու քովերդ :
Շուրջանակի զնոքօք · անոնց քովերը :

## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

### Մակբային վրայ:

Հ. Ի՞նչ է մակբայը.

Պ. Է մասն բանի, որ բայերուն քովը դրուելով՝ վրանին նշանակութիւնը կաւելցընէ, կամ ընելուն կերպը, կամ ժամանակը, կամ տեղը, կամ չափը, &c. ինչ Բարւոք ընթանալ. աղէկ երթալ: Սակաւ ուտել. քիչ ուտել: Ճգնել հանապազ. միշտ ճգնութիւն ընել: Աստ տանջել. հոս տանջել: Նախ մտանել. առաջ մտնել: Ո՞ւր գնաս. ո՞ւր կերթաս: Այո՛ տեսի. հա տեսայ: Մի՛ բամբասեր. չի բամբասես: Ահա եհաս. Էշ-տէ հասաւ: Առաւել կամիմ. Էւելի կուզեմ:

Աս տեսակ տեսակ նշանակութիւններուն զատ զատ անուն կուտան վարպետ քերականութեան գիտցողները:

Ամէն ածական անուն մակբայի տեղ ալ կըբանեցուի, բայց գործածական ու բուն մակբայները՝ վերի դրածներս ու ասոնք են.

| | | | |
|---|---|---|---|
| Այսպէս. | ասանկ: | Յանկարծակի. | չինկարծած ապէնտէ: |
| Ձրի. | առանց ըստըկին. ճապա: | Հազիւ. | ճարով. կիւճիլէ: |
| Ցոյժ. | խիստ շատ. բէք: | Գաղտ. | ծածուկ. կիզլի: |
| Երագ. | շուտով. չապուճախ: | Ակամայ. | չուզելով: |

| | |
|---|---|
| Զուր · | ճուած տեղը · նաֆիլէ : |
| Այլազգ | ուրիշ կերպ : |
| Յունարէն · | հոռոմերէն : |
| Ինքնին · | ինքիրմէ : |
| Այսչափ · | ասչափ · պուքըտար : |
| Այսքան · | ասչափ · պուքըտար : |
| Ստէպ · | ետևէ ետև · շուտմը : |
| Միայնակ · | մինակ · եալնըզ : |
| 'ի միասին · | մէկտեղ · պէրապէր : |
| Վերըստին · | նորէն · թէքրար · |
| Այժմ · | հիմայ · շիմտի : |
| Այսօր · | ասօր · պէօյիւն : |
| Երբեմն · | քիչ հեղ · շատոնց : |
| Տակաւին · | դեռ · տահա : |
| Անդ · | հոն · օրատա : |
| Աստանօր · | հոս տեղը · պուրատա : |
| Աստի · | ասկէց · պուրատան : |
| Ընդէ՞ր · | ինչո՞ւ : |
| Զիա՞րդ · | ի՞նչպէս : |
| Ո՞րքան · | ո՞րչափ · նէ՞քատար : |

| | |
|---|---|
| Միթէ · | չըլլայ որ : |
| Յիրաւի · | իրաւ : |
| Արդարև · | իրաւ որ : |
| Որպէս · | ինչպէս որ : |
| Ոչ · | չէ : |
| Չև · | դեռ չէ · տահա : |
| Մինչչև · | քանի որ չէ : |
| Մի երբէք · | ամենևին չէ · հիչ : |
| Ահաւասիկ · | նահա · իշտէ : |
| Մանաւանդ · | էւէլօք : |
| Այլուր · | ուրիշ տեղ : |
| Բարւոք · | աղէկ կերպով : |
| Վայելչապէս · | շնորքով : |
| Անամաչաբար · | անամօթի պէս : |
| Կամովին · | ուզելով : |
| Իւրովի · | ինքիրէն , |
| Ինձէն · | ինքիրմէս : |
| Գիշերայն · | գիշեր ատեն : |
| Կենդանւոյն · | ողջ ողջ : |
| Երկիցս · | երկու հեղ : |

## ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

### Շաղկապին վրայ ։

Հց. Շաղկապը ի՞նչ է.

Պտ. Ի մասն բանի, որ բառ բառի հետ, կամ խօսք խօսքի հետ կըկապէ. Թր. Բաղլի կամ չար. աղէկ կամ գէշ ։ Առնել և ուսուցանել. ընել ու սորվեցընել ։ Սուղ՝ այլ զօրաւոր. քիչ՝ բայց ուժով ։ Թէպէտ և մարմնով հեռի եմ, այլ հոգւով մերձ եմ. մարմնով հեռու ալ եմ նէ, բայց հոգւով մօտ եմ ։ Գործով և ոչ բանիւ. գործքով ըլլայ ոչ խօսքով ։ Եթէ ոչ զմեծն, գոնէ զփոքրն արասցուք. մեծը չէ նէ, պզտիկը ըլլայ՝ ընենք. են ։

Ասոնք ալ մակբայներուն պէս տեսակ տեսակ բաժնելով, ամմէն մէկ տեսակին զատ անուն կուտան վարպետները ։

Գործածական շաղկապները՝ վերի դրածներս ու ասոնք են.

| | | | |
|---|---|---|---|
| Եւս. Իսկ. | ալ. Թր. էւ. ալ. | Թէ. Եթէ. | Բէ որ. էյէր ։ |
| Այլև. | | Թէ. զի. քայ. | որ. քի ։ |
| Դարձեալ. | | Իսկ եթէ. | հալա Բէ որ ։ |
| Բայց. | բայց. լաքին ։ | Գոնեա. գէթ. | գէնէ. պարի ։ |
| Սակայն. | | Արդ. և արդ. | իմտի. շիմտի ։ |

| | |
|---|---|
| Ուստի · | անոր համար : |
| Որովհետև · / Փոխանակ զի · | չիւնքի : |
| Կամ · և կամ · / Կամ թէ · | եամ · եախօտ : |
| Զի · վասն զի · / Քանզի · | ինչու որ · զէրէ : |
| Ուրեմն · ապա · / Ապա ուրեմն · | անանկ է նէ · էօյլէ իսէ : |
| Ապաքէն · | իրաւ որ · հագիգէթ : |
| Այն զի · | իլլէ քի · |
| Այս ինքն : | բոէլ չոուղէմ · եանի : |
| Իբր ոչ եթէ · | չէ մէ : |
| Իբր թէ · | կարծես որ · սանքի : |
| Թող թէ · | չէ որ · տէյիլ քի : |
| Բայց եթէ · / Բայց միայն · | անճաք · մէյէր : |
| Մինչև · մինչ զի · | ինչուան · տիւլէ : |

## ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

### ՄԻՋԱՐԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ :

Հր · Միջարկութիւնը ինչ է ·

Պա · Է մասն բանի, որ մարդուս սիրտը կյայտնէ · ուստի ինչ տեսակ կիրք որ կցուցընէ՝ անկէց կառնէ իր անունը · Ա

Ըղձական, Ա փափաքը յայտնող միջարկութիւնները սոնք են · Երանի՜ թէ, Իցէ՜ թէ · երանի՜ թէ, ո՜ւր էր որ :

Զարմացական կամ հրաշական , որ զարմանքը ցուցընօղները . Ո՜հ , Է՜հէ . զարմա՛նք , զարմանալու բան :
Աւաղական , որ ցաւելու . Եղո՜ւկ , վա՜յ , աւա՜ղ . խե՜ղճ , վա՜խ , մե՜ղք :
Հեշտական , որ ախորժելու . Վա՜շ վաշ . օ՛խ . հախ է :
Հեգնական , որ ծաղր ընելու . Վա՜հ , է՜ . ո՛ւր է հէ՜ :
Յորդորական , որ սիրտ տալու . Աղէ՜ , հա՛պա , օ՛ն . տէ՛ննա , եալլահ , քեզ տեսնամ :
Գովողական , որ գովելու . Ապրի՜ , պրաւօ՜ , կեցցէ , ապրիս , ձեռքդ դալար . աֆերիմ :
Բացագանչական . որ ամուր կանչելու . ա՜յ , ո՜հ . հէ՜յ , հէ՛շտ :
Ասոնք կերպ կերպ հոլովներու ու բայերու հետ կըբանեցուին . որ հին հեղինակներու գիրքերը ուշադրութեամբ կարդալով աղէկ կըսորվուի :



# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## Անունները շարադրութեան մէջ բանեցնելու կանոնները ։

Հր. Ութը մասունք բանի որ ըսիր նէ, հի՛մայ ատոնց մէկզմէկու հետ համաձայնութեը վրայ ըսէ. Նախ անունը անունի հետ ի՞նչպէս կըբանեցուի ։

Պտ. Մէյմը բացայայտիչ կըլլայ, մէյմը յատկացուցիչ, մէյմըն ալ խնդիր ։

Հր. Ո՞րն է բացայայտիչը.

Պտ. Երբոր պէտք կըլլայ իմացընել որ՝ ի՛նչ մտքով կամ ի՛նչ բանի տեղ գրուած է մէկ բառմը, անոր ետևէն կաւելցըրուի ուրիշ բառմը առանց շաղկապի, թըւով ու հոլովով նման առջինին, ու կըլլայ ան երկրորդ բառը առջինին բացայայտիչը. Օր. * Որ շինեցեր զտուն քո Եկեղեցի, իմաստութիւն Հօր Յս։ Հոս տունին բացայայտիչն է Եկեղեցին, իմաստութենին բացայայտիչն է Յսը ։

Երբեմն բացայայտիչը ուղղական կամ հայցական կըդրըուի, թէ և բացայայտեալը ուրիշ հոլով ըլլայ. Օր. * Այսօր ժողովեալ մեզ 'ի միասին, երանեմք զառաքեալսն և զՏր հովուսանք ։ * Երկու մասամբք, զմարմին և զհոգին ։ Ասոնց մէջը զօրութբ կիմացուի մեկնական բառմը, այսինքն կմ ասեմ. որ երբեմն ներգործութբ ալ կըդրուին ։

Երբոր տեղւոյ յատուկ անունները բացայայտիչ կըլլան նէ, բացայայտեալէն առաջ շատ անգամ ուղղական կըդրըւին առանց բացայայտեալին համաձայնելու. Գր․ * Քոբար գետոյ: *յԱնտիոք քաղաքէ: Երբեմն մարդու անուններնալ ասանկ կըլլան. Գր․ *յԱւգոստոս կայսերէ:

---

Հր. Ո՞րն է յատկացուցիչը.

Պտ. Երբոր պէտք կըլլայ իմացունել որ՝ գրած անունդ որո՞ւնն է, կամ որո՞ւն կըյարմարի, ուրիշ անունմը կամ դերանունմընալ վրան կաւելցըւի սեռական հոլովով, ու ան կըլլայ առջինին յատկացուցիչը. Գր․ * Լուսաւորք մանկունք զխրատ հօր: Հոս հօր բառը յատկացուցիչ է խրատին:

Թէ որ յատկացեալ անունը նախդիր ունենայ նէ, երբեմն յատկացուցիչին վրայ ալ նոյն նախդիրը կըդրըւի, մանաւանդ երբոր յատկացուցիչը առաջ դրած է. Գր․ * Զէննայն ետուր զհաց:

Երբոր յատկացեալը բացառական կամ գործիական հոլով ըլլայ նէ, շատ անգամ յատկացուցիչը սեռականին տեղը՝ համաձայն յատկացեալին բացառական կամ գործիական հոլովով կըդրըւի. Գր․ *Յօրէ ծննդենէ իւրմէ: *Հաստատեա զսիրտ քո պատառով միով հացիւ: Թ․ յօրէ ծննդեան իւրոյ. պատառով միով հացի:

Երբեմն ալ յատկացուցիչին հոլովը յատկացեալը կառնէ, ու իր հոլովը անոր կուտայ. Գր․ * Օժանդակեա թեւոցդ աղօթիւք: Թ․ թեւօք աղօթիցդ: * Յանդըգնեցայ շրթամբք խօսից: Թ․ խօսիւք շրթանց:

Շատ անգամ յատկացուցիչը ածական անունի ուժ կունենայ. Գր․ * Հարուա-

ծովք անէծիշխութէ․ Թ՛ անբժշկելի հարուածովք ։ * Լաօղ ժառայութէ․ Թ՛ մոռացկոտ լաօղ ։ * Տաբախուսանայ է բանս․ Թ՛ տարակուսելի է , տարակուսանաց արժանի է ։

Երբեմն ալ յատկացուցիչ կըկարծես , բայց յատկացուցիչ չէ՝ հապա բացայայտիչ է․ ինչու որ շատ անգամ բացայայտիչը սեռական կըդրըւի , բացայայտեալը ինչ հոլով ըլլայ՝ ըլլայ․ Թ՛ * Որ 'ի ծով այս աշխարհի չինեաց տապան զեկեղեցի․ Թ՛ յայսմ աշխարհի՝ որ է ծով ։

---

Հշ․ Անունները ի՞նչպէս խնդիր կառնեն․

Պխ․ Կան անուններ , որ բայի ուժը ունենալով բայանուն կըսուին , ու բայերուն պէս խնդիր կառնեն ։ Ասոր վրայ գլխաւոր երեք կանոն կայ գիտնալու ․

Ա․ Որոնք որ ներգործական բայի ուժ ունին նէ , կամ սեռական կամ հայցական խնդիր սեռի կառնեն․ Թ՛ * Ձգմամբ ջէօքին ։ * Փչմամբ ւհոգին ։ Իսկ խնդիր ընդունելութեան կառնեն ան հոլովը , ինչ որ իրենց բայը կուզէ․ Թ՛ * Ձգմամբ ձեւին 'ի ծառն ։ * Փչմամբ 'ի նմա զհոգին ։

Բ․ Կրաւորական բայի ուժ ունեցողները՝ խնդիր սեռի կառնեն բացառական․ Թ՛ * Առաքմամբ 'ի հօրէ ։ Իսկ խնդիր ընդունելութեան՝ իրենց բային ուզածը կառնեն․ Թ՛ * Առաքմամբ 'ի հօրէ յաշխարհ ։

Գ․ Իսկ որոնք որ չէզոքական բայի ուժ ունին նէ , իրենց բային ուզած խընդիրները կառնեն․ Թ՛ * Գալստեամբ 'ի պաճառն ։ * Հրաժարումն յաշխարհէ ։

Հշ․ Ուրիշ անուններ ալ կա՞ն՝ ասոնց պէս խնդիր առնող․

Պխ․ Ինչպէս որ բայանուններուն վրայ ըսինք , ասանկ ալ ածական անունները բայի ուժ ունենալով անոնց պէս երեք

կերպով գոյական անունները իրենց խըն-դիր կառնեն. որ. * Գտիչք չարեաց, զծնօղս անարգուք : * Դիւրաշարժ 'ի հողմոյ : * Անփոյթք զհոգէկան խնդրոյն :

---

Հշ. Ածականը գոյականին հետ ի՞նչպէս կըվարուի.

Պխ. Աս բանիս վրայ գլխաւոր վեց կանոն կայ գիտնալու.

Ա. Ածականը երբոր գոյականէն ետև գրած է, սովորաբար կըհամաձայնի թըւով ու հոլովով. որ. * Ծառայք ի-մաստունք տիրեսցեն տերանց անմտաց :

Բ. Ածականը երբոր գոյականէն առաջ գրած է՝ սովորաբար չըհամաձայնիր, ոչ թըւով, ոչ հոլովով. որ. * Կենդանի և մշտնջենաւոր բանիւն այ : * Յամենա-գէտ յամենակալ դատաստանացն այ :

Գ. Բայց երբոր մէջերնին բայ կամ ընդ-ունելութեն մըտնայ նէ, ածականը թէև առաջ գըրուած ըլլայ՝ հասարակօրէն կը-համաձայնի. որ. * Ասպառածայնով զի-նեալ զօրութք : Թէպէտ կըրնայ չըհա-մաձայնիլ ալ. որ. * Բազում լցաք ար-համարհանօք :

Դ. Թէ որ ածականը առաջ գրած ըլլայ՝ բայց դիմորոշ յօդ ունենայ նէ, կրնայ միակերպ համաձայնիլ ու չըհամաձայ-նիլ. որ. * Գոհացարուք զմարդասիրէն այ : * Որ փրկական իշխանութե՛ հա-ղորդս արարեր զմեզ զառաքեալսն :

Ե. Թէ որ առաջ գըրուած գոյականները շատ ըլլան նէ, ածականը յոգնակի կը-գըրուի, ու համաձայն հոլովով. որ. * Ող-ջոյն տաջիք Անդրոնիկեայ և Յունեայ՝ ազգականաց իմոց :

Զ. Թէ որ ածականը առաջ գըրած է, նախդիրը անոր վրայ մինակ կըդըրուի. իսկ թէ որ գոյականը առաջ գրած է, անոր վրայ կըդըրուի. որ. * Դարձո՛ զիս

'ի չար սովորութենց խմոց 'ի բարի սովորութիւն ։ *Ապականեն զբարս քաղցունս բանք չարք ։

Բայց երբեմն երկուքին վրայ ալ կըկըրկնըւի նախդիրը ։ Որ * Աւէ ցարմն զյարուցեալս 'ի վերայ նորա ։ Մանաւանդ երբոր մէջերնին ուրիշ բան մըտնայ նէ ։ Որ * Յանապատէ եկեալ յերկրէ ։ * Ըզսառնակերպ զդիւրահալ զազգ անուշակ կերակրոյն ։

Իսկ թէ որ և շաղկապով կըպած շատ ածականներ կամ գոյականներ ըլլան նէ , նախդիրը հասարակօրէն ամմենուն վըր ալ կըկըրկնըւի ։ Որ * Յանբաւ և յանկոխ և յանջուր և յանպտուղ երկրին ։ * 'Ի յայրս և 'ի փապարս խաւարայինս բնակէր ։

---

Հց ։ Ածական անունը քանի՞ կերպ կըլլայ ։

Պխ ։ Իրեք կերպ ։ Դրական , Բաղդատական , Գերադրական ։ Դրականը կըցուցընէ մինակ մէկ բանիմը ինչպէս ըլլալը ։ Որ Մեծ , չար , ևն ։ Բաղդատականը մէկ բանմը ուրիշ բանի մը հետ համեմատելով աւելի անանկ ըլլալը կըցուցընէ ։ Որ Մեծագոյն , չարագոյն ։ Իսկ գերադրականը մէկ բանիմը ամմենէն աւել անանկ ըլլալը կըցուցընէ ։ Որ ամենամեծ , ամենաչար ։

Հց ։ Ուրիշ կերպով ալ բաղդատական կամ գերադրական չըլլա՞ր ։

Պխ ։ Բաղդատական առաւել կամ նա մակբայը դրականին վրայ աւելցնելով ալ կըլլայ ։ Որ առաւել մեծ , մեծ նա ։ կամ մինակ քան նախադրութով ։ Որ Մեծ քան զՍողոմոն ։ Իսկ գերադրականը շատ կերպով կըլլայ ։ Մէյմը՝ աս բառերը կըդըննելով դրականին ու բաղդատականին առջևը , ամեն , գեր , մեծ , երէք , եռ ։ Որ ամենամեծ , գերամաքուր , երէքալեան , եռամեծ ։ Մէյմըն ալ աւելցնելով չարի ,

յօյծ, էշէշօ, կմ ասոնց նման սաստկացընօղ բառեր. Օր. չաշէ դժուարին, յօյծ ծանր, էշէշօ երանեալ. կամ նոյն վերի էն մակբայը բաղդատականին վրայ դնելով. Օր. էն մեծագոյն: Երբեմն ալ ածականին կամ գոյականին սեռականն ալ մէկտեղ դնելով, գերադրական կըլլայ. Օր. օփօյ օօսփ, աաաաղէլաօ աաաաղէն, ևն:

Բաղդատական ածականներուն խնդիրը կըլլայ սեռական, բացառական, ներգոյական, կամ նախադրութիւնով. Օր. * Գերագոյն ծէշօշէէօ: * Ծերագոյնք 'ի նոյանէ: * Տկարագոյն յանաաաանօ: * Բարձրագոյն ծան ղէշէէնօ:

---

Հր. Ածանցական ըսուած անունները որո՞նք են:

Պխ. Շատ անուններու վրայ առջեւնին կմ ետեւնին մասնիկ մը կըպցընելով նշանակութիւնին կը փոխուի, ու կըլլին ածանցական. Օր. Կամայ՝ ըսել է էշ օղէշաէշ. իսկ ակամայ՝ օղածին ղէմ: Նմանապէս ծէփ՝ մըղշախ ըսել է, իսկ ծէփաօշ՝ մըղշախ բանէօըմօղ:

Աս կերպ մասնիկներէն մէկն է օահի կմ անոյշ մասնիկը, որ անուններուն ծարը կըպչելով իգականի նշանակութիւն կաւելցընէ. Օր. քուրմ՝ ըսել է կօաածէշօօ ծահանայ, իսկ քրմուհի՝ կամ քրմանոյշ՝ էէն ծահանայ կօաածէշօա: Վկայ՝ մաշծէշօօ ըսել է. իսկ վկայուհի՝ մաշծէշօօ էէն: Արքայ, Թագաւոր. արքայուհի, էէն Բաժաաօշ, Բաժաաօշէ էէն:

Հր. Հապա բարդ ըսուած բառերը որո՞նք են.

Պխ. Երբոր այլեւայլ մասունք բանի մէկըզմէկու կըպչելով, ու մէկ բառ ըլլալով, նոր նշանակութիւն մը կառնեն, կմ առջի նշանակութիւնին կը սաստկացընեն նէ, կըսուին բարդ. Օր.

Անունով բարդածը, ոսկեձանի. բաղձատուր.
դեղադեղ:
Դերանունով, ինքնագոյ :
Բայով, երկրպագէ. նախընտրեաց :
Ընդունելութիւնով, ներողամիտ :
Նախադրութիւնով, շրջապարիսպ :
Մակբայով, նախաժամանն. այժմածին :
Շաղկապով, Ընդպէտ. լնուլի :
Միջարկութիւնով, աւաղաձայն. աւաղեմ :

---

Հշ. Քանի՞ կերպով յոգնակի կընայ ըլլալ

Պխ. Բաց 'ի սեռական սեռական հոլովմունք-
ներուն յոգնակիներէն՝ որ ըսինք, շատ
անգամ բառը կըրկնելով միայն՝ յոգնակի
կըլլայ. Օր * Ժողովեցին դէզս դէզս
յամենայն. Օր բանս ընտիրը :

Շատ անգամ՝ ալ բառին վրայ մասնիկ մը
աւելցնելով՝ յոգնակի կըլլայ. Օր որ,
որեար. ներդ, ներդեր. վանք, վանօ-
րայք. գիւղ, գիւղօրէք. ճրագ, ճրա-
գունք. գրուատ, գրուատնք. մարդ,
մարդիկ. բաշխ, բաշխայք. մեղք, մե-
ղանք. խող, խողեան. աւագ, աւագա-
նի. ոսկր, ոսկերոտի. ծակ, ծակոտի :

Երբեմն ալ վերացեալ անունները յոգնա-
կի տեղ կըդրուին. Օր * Նոր քահանայու-
թե. Օր նոր օրէնքի քահանաները : Ա-
սոր պէս նաև հաւաքական անունները
յոգնակիի տեղ կըբանին. Օր * Ո՞վ են
ժողովուրդս այս :

Իսկ կանոնաւոր յոքնակիներուն ուղղա-
կանը՝ որ միշտ ք գիրով կըլլայ, եր-
բեմն պէտք, կեանք, երախտիք, ըսե-
լու տեղը, ս գիրով ալ կըսուի՝ պէտս,
կեանս, երախտիս :

Ասոր ներհակը տրականը ու հայցականը՝
որ միշտ ս տառով կըլլայ, երբեմն ու-
նէին գլուխս ըսելու տեղը, կըսուի *Ու-
նէին գլուխք : Մանաւանդ երբոր դի-
մորոշական յօդ ունենան նէ, շատ

անգամ կըփոխուի . օր. 'ի նիւթ+ն , ըղ-տխպ+ն , զըխծ+ն ։ Իսկ թէ որ գիմորոշական յօդը » ըլլայ նէ , գրեթէ միշտ յօդնակի » տառը կըփոխուի՝ + կըլլայ . օր. զմեղուցեալ+ս , զկերօղ+ս . ևն ։

---

Հ . Ո՞ր հոլովներուն նախդիրը կըձըգուի .

Պ . Մէյմը հայցականինը , երբոր ներգործական բայերուն խնդիր կըլլայ , ու անորոշ բան մը կըցուցընէ նէ . օր. * Ծնողըդ կըսուի , բայց չըսուիր ծնողըդ . ինչու որ որոշեալ է ։ Անոր համար յատուկ անունները , միջական անունները ու դերանունները , անորոշ հայցական չեն կըրնար ունենալ , բաց 'ի միջական անունէն ոչինչ , ու մի թուականէն . ուստի չըսուիր՝ Առաքեաց ոմն , կամ ինչ , կամ Պետրոս . հապա՝ Առաքեաց զոմն , զինչ , զՊետրոս ։

Մէյմընալ տրականին ու բացառականին 'ի կամ յ նախդիրը կըձըգուի , երբոր քովէ քով նոյն անունը երկու հոլովով ալ պէտք կըլլայ դնել նէ . օր. Դրանէ 'ի դուռն . Քաղաքէ 'ի քաղաքէ . Ամ յամէ . Կենաց 'ի կեանս . 'Ի ժամանակէ ժամանակ , ևն . որ ըզ ընքեան պիտոր ըսուէր 'ի դրանէ 'ի դուռն . 'ի քաղաքէ 'ի քաղաքէ . յամ յամէ . 'ի կենաց 'ի կեանս . 'ի ժամանակէ 'ի ժամանակ ։

Երբեմն ալ և շաղկապով ետևէ ետև դըրուած բառերուն առջինին միայն կըդըրուի նախդիրը . օր. 'ի սովէ և ծարաւոյ ընդ Պետրոս և Յովհաննէս ։

Իսկ երբեմն ալ զ կամ » տառով սկըսած բառերը՝ առանց ուրիշ զ մընալ առնելու՝ հայցականի տեղ կըբանեցուին . օր. * Զգուշի զայս աշխարհ . օր. զզգուշի ։ * Սիրեսցէ զած 'ի բնութէ ունելն մարդիկ . օր. զսիրեսցէ ։

Ասոր նման , կամ հ տառով սկըսած բա-

ուերն ալ՝ առանց նախդիրի բացառական ու տրական կըլլան . օր * Եթէ չնի յոսկերան յօդիմ : * Յաւիտենից յաւիտեանս : * Կայ հարաւոյ կողմանէ : * Զխոցուած կողիցս հաւատ նմին ետու շօշափել :

Շատ անգամ ալ մէկ բառին նախդիրը իրմէ առջի եղած՝ իրեն հետ վերաբերութիւնը ունեցող բառին վրայ կըդրըւի . օր զմեղօք մեռեալս , որ զմեռեալս մեղօք . զարեամբ զարդարեալն , որ զզարդարեալն արեամբ . զի կուսէն մարմնացեալ բանն , որ զբանն մարմնացեալ 'ի կուսէն :

Երբեմն ալ մէկ նախդիր մը երկուքի տեղ կըբռնէ . օր * Եւ 'ի քուն լինել մարդկան . որ և 'ի լինել մարդկան 'ի քուն : * Յանչափն ձգտիլ . որ 'ի ձգտիլ յանչափն :

Ասոնց նման երբեմն ալ երկու ձայնաւոր , մանաւանդ նոյն գիրը քովէքով կուգան նէ , մէկը կըձըգուի . օր Գրե՛ թէ . որ Գրեա՛ թէ : Ապ՛ եթէ . որ ապա եթէ : Ահ՛ աւանիկ . որ ահա աւանիկ : * Զ՛ 'ի բազում ժամանակաց պաշարեալ էին . որ զի 'ի բազում ժամանակաց .

---

Միջական անունները բանեցնելու կանոնները:

Հր . Թուական անունները ինչպէս կըբանեցուին .

Պտ . Թուական , մասնական ու հարցական անունները երբոր գոյականի տեղ դըրւին նէ , բացառական խնդիր կառնեն . օր * Երկու 'ի նոցանէ : * Ոմն 'ի հարց : * Ո՞վ 'ի մարդկանէ : Երբեմն սեռական ալ կառնեն . օր *'Ի միում աւուրց : * 'Ի վերայ միոյ մերանց * Եւ 'ի մի նաւուցն : Բայց երբոր ածականի մըտքով վարուին

նէ, գոյականէն առաջ ուղղական կը դրուին առանց համաձայնելու. բայց մի, երեք, չորք թիւերը սովորաբար կը համաձայնին. օր. Միով վկայիւ կ'ըսուի, չէ թէ մի վկայիւ:

Իսկ երբոր գոյականէն ետև դրուին նէ, հասարակօրէն կը համաձայնին ածականի պէս. օր. * Ձկամբք հարիւր յիսուն և երիւք:

Երբոր թիւը առաջ է՝ գոյականը սովորաբար եզակի կը դրուի, թէ որ վերջն է՝ յոգնակի. օր. * Քառասուն և միոյ ամի: * Ամաց քառասուն և միոյ:

Թուական անունները յոգնականացուցիչ ք ու ս տառերը չեն առնուր, բաց 'ի երկու, երեք, ու չորք, թիւերէն. ուստի զամս չորս կ'ըսուի, բայց զամս հինգս չըսուիր:

Դասական բուած Թուականները, ինչպէս են՝ առաջին, երկրորդ, երրորդ, ևն. ամենևին ածական անուններուն պէս կը բանեցուին:

Մակբաշխ բուած Թուականները՝ ինչպէս են՝ երկոքեան, ամենեքին, ևն. թէ առաջ և թէ ետև դրուին նէ՝ կը համաձայնին. օր. * Յերկոցունց 'ի ձէնջ. * 'Ի սոցանէ երկոցունց:

Զատական բուած Թուականները, ինչպէս են՝ միակ, երկեակ, ևն. սովորաբար գոյականէն առաջ՝ կը դրուին ուղղական հոլովով. օր. * Եօթնեակ զաւակօք:

Հր. Հանրական անունները ինչպէս կը բանեցուին.

Պխ. Հանրական անունը ոչ ոք՝ մարդու վրայ կ'ըսուի, ու գոյական է. բայց երբեմն ածականի պէս ալ կը բանի. օր. * Ոչ ոք ծառայ կարէ երկուց տերանց ծառայել: Սովորաբար նախդիրը ոքին վրայ կը դրուի, ոչ զոք, ոչ յումեքէ. չէ թէ զոչ ոք, յոչ ումեքէ:

Բայց ոչ ինչը ոչինին վրայ կառնէ նախդիրը. Օր. յոչ ինչ պիտանացու. յոչ ինչ պէտս:

Հր. Մասնական անուններն ի՞նչպէս կը բանեցուին.

Պտ. Ոմն, ոք, ածականի պէս կը համաձայնին. բայց երբեմն գոյականի տեղ վարուելով, առջևի ածականին նախդիրը իրենց վրայ մինակ կը դրուի. Օր. Շատ ոք. Թագաւոր ոմն:

Իմն, ինչ, միշտ գոյականէն կամ ածականէն ետքը կը դրուին. Օր. * Զբան ինչ մեծ. * Ընդ կրկնք իմն. ուստի չըսուիր իմն բան, ինչ գործ, ևն:

Յոգնակի գոյականին հետ ալ եզակի կը վարուին. Օր. * Օտարոտի իմն գիրս.

Ինչ ինչ սովորաբար գոյական է, ու չի հոլովիր. Օր. * Յորս գտանին ինչ ինչ դժուարիմաց.

Իմն իմն սովորաբար ածականի տեղ կը բանի, ու կը հոլովուի ալ. Օր. * Վասն իրիք իրիք տեսչութեանց:

Իմնը շատ անգամ Գրէքէի մտքով ալ կը բանի մակբայի պէս. Օր. * Կամէին իմն: * Սորջացաւ իմն:

Հր. Հարցական անուններն ի՞նչպէս կը բանեցուին.

Պտ. Ո՞ ոքը ոին վրայ մինակ կառնէ նախդիրը. Օր. ցո՞ ոք. յումմէ՞ ումեքէ, ևն:

Ո՞ր հարցականը ածականի տեղ կը բանի, ու հասարակօրէն կը համաձայնի գոյականին՝ առաջ դրուելով. Օր. * Յորմէ՞ աշխարհէ, որո՞ց խնդրոց. ևն: Բայց յոգնակին նախդիր ունեցող հոլովներուն մէջը չի համաձայնիր. մինակ՝ թէ որ մէջերնին ուրիշ մասն բանի մտանայ նէ, ան ատենը կը համաձայնի. ուստի չըսուիր զո՞րս փեղես, բայց կըսուի * Զո՞րս հիւսեցից զորս:

---

### Դերանուններուն բանեցընելու կանոնները:

Հր. Էական դերանունները ի՞նչպէս կը բանեցուին.

Պտ. Ես, դու, ինքն, իւր էականները. ինչպէս սա, դա, նա, ցուցականներնալ, գոյականի պէս կը վարուին. ու կըլլան նախ յատկացուցիչ. Օր. զկեանս իմ, ըզտուն քո, ըստ հաճոյս իւր, քորք սորա, ևն:

Երկրորդ կըլլան խնդիր անուններու, ը̃ունելու̃ններու, նախադրութիւններու, ևն. Օր. անմոռաց յիշեսջէ, խնամող ինքեան, վասն նորա, ևն:

Երրորդ կըլլան բացայայտիչ կամ բացայայտեալ. Օր. * Ես տէրս խօսեցայ: * Յաշակերտաց Քի 'ի մէնջ:

Ինքն դերանունը շատ անգամ ուրիշ դերանուններու ու անուններու հետ ածականի պէս կը բանեցուի, ու կընըշանակէ բուն, ասըլ:

Թէ որ մինակ է նէ, միշտ գոյականէն ետև կը դրուի. Օր. * Ես ինքն: * Քեզ ինքեան: * 'Ի քէն ինքենէ: * Տեղին ինքն:

Բայց թէ որ իսկ շաղկապը հետը ըլլայ նէ, առաջ կը դրուի. Օր. * Զոր և ինքն իսկ տէր մեր ասաց:

Հր. Ցուցական դերանուններուն համաձայնու̃եը կանոնները որո՞նք են.

Պտ. Սա, դա, նա, ցուցականները թէ հոլովով թէ թըւով կը համաձայնին իրենց ածականին հետ, առաջ ալ դըրուին, ետև ալ դրուին նէ. Օր. * Դոքա յետինքդ. * Յետ նոցդ այդոցիկ:

Այս, այդ, այն, ցուցականները ածականի տեղ կը դըրուին, ու կը համաձայնին գոյականին հետ թըւով ալ, հոլովով ալ. գոյականին նախադիրն ալ գրեթէ միշտ կըկրկնըւի իրենց վրայ. Օր. * Յաշխարհին

յայնմիկ. 'ի նեղուէ յայսմանէ. Զբանդղայդ. Ընդ աւուրսն ընդ այնոսիկ:

Սոյն, տոյն, նոյն ցուցականները ածականի պէս կըվարուին, ու պատ են համաձայնելու կամ չհամաձայնելու. ուստի 'ի նոյն տուոր ալ կըսուի, 'ի նմին տուոր ալ. բայց հասարակօրէն հոլովով կըհամաձայնին, թըւով չհամաձայնին ալ նէ. օր. * Ըստ նմին բանից:

Ուրիշ դերանուններուն հետ ալ կըկըրպչին՝ անոնց նշանակութիւնը սաստկացնելու համար, ու հասարակօրէն կըհամաձայնին անոնց հետ. օր. *Սմին այսմիկ. 'ի նմին յայսմ ժամանակի. Նոքին ինքեանք:

Հր. Ստացական դերանունները ինչպէս կըբանեցուին.

Պտ. Իմ, քո, մեր, ձեր, նոր, ստացականները ածականի տեղ կըբանին. ու առջ ալ դըրուին, ետև ալ դըրուին նէ, թըւով ու հոլովով կըհամաձայնին գոյականին հետ. բայց նախդիրը սովորաբար առջինին վրայ մինակ կըդըրուի. օր. * Որ 'ի մերում մտի և 'ի խորհրդեան մերում էք: Բայց յոգնակի ուղղականը ու նախդիրով շինուած հոլովները չեն համաձայնիր. օր. ծառայք իմ կըսուի, չէ թէ իմք. զվաստակս քո, չէ թէ քոյս. Ը դրունս ձեր, չէ թէ ձերս:

Իսկ թէ որ առջևը դըրուին նէ՝ կըրնան համաձայնիլ. օր. պէսոյն խօսերս:

Ըս ցուցական ու ստացական դերանուններուն հոլովները երբեմն մէկզմէկու տեղ կըդըրուին. օր. * Այոր երախտեօք. օր. այսորքնուք: * Որ այնմ ամիս խոնջեալն իցէ. օր. այնոր ամիս: * 'ի քումդ լոյսութէ. օր. 'ի քումդ լրուէ: * Իմոյ իմաստութէ անսա. օր. իմում իմաստութէ:

Հր. Յարաբերական դերանունները ինչպէս կըբանեցուին.

Պտ. Որ յարաբերականը իր յարաբերեալ

անուններն կամ դերանուններն հետ սովորաբար կըհամաձայնի թըւով, իսկ հոլովը ետեւի բառին կամ բային ուղղածին պէս կըփոխուի. Օր. * Սակաւ ողորմութ̃ք՝ զոր արարեր: * Ոչ կարէ կրել նա յոգի իւր զբանս աննիւթս, որոյ միտք ծանրացեալ իցէ 'ի նիւթոյ երկրի: Բայց երբեմն հոլովով ալ կըհամաձայնի. Օր. *'Ի վերայ սեղանոյ ողջակիզացն, որոյ նոր արարին:

Շատ անգամ յարաբերեալը զօրութ̃ կիմացուի, ու յարաբերականը կըդրուի ան հոլովը՝ ինչ հոլով որ պիտի դրուէր յարաբերեալը. Օր. * Երեւի որոյ ոչ թերահաւատէն 'ի նմանէ. Փ̃ այնոցիկ՝ որոց:

Երբեմն ալ յարաբերականը զօրութեամբ կիմացուի. Օր. * Անցաւորք են եւ թագաւորքն, եւ 'ի նոցանէ սպառնալիքն. Փ̃ սպառնալիքն՝ որ 'ի նոցանէ:

Յարաբերականը սովորաբար յարաբերեալէն ետեւ կըդրուի, բայց շատ անգամ առաջ ալ կըրնայ դրուիլ. Օր. *Զի եթէ որ 'ի ձեռն հրեշտակաց խօսեցաւ բանն՝ հաստատուն եղեւ. Փ̃ բանն՝ որ 'ի ձեռն հրեշտակաց խօսեցաւ կամ խօսեցեալ եղեւ: Բայց թէ որ յարաբերականը կամ յատկացուցիչ կամ տէր բայի կ̃մ խնդիր ըլլայ նէ՝ միշտ իր բայէն ու իր յատկացեալ բառէն առաջ կըդրուի. Օր. որոյ իմաստութ̃ին, զոր տեսեալ, յորմէ հեռի. ուստի չըսուիր՝ իմաստութ̃ին որոյ, տեսեալ զոր, հեռի յորմէ:

Շատ անգամ անուն մը կ̃մ դերանուն մը յարաբերականին վրայ կաւելցուի բացայայտիչի պէս՝ համաձայն թըւով ու հոլովով. Օր. * Ա̃ որ մատուցեալ 'ի Հ̃չ̃ կենդանի: * Տեղիդ՝ յորում դուդ կաս 'ի դմա:

Երբեմն որ յարաբերականը ուղղական հոլովով այլեւայլ հոլովներու տեղ կը֊

գըրուի, չփոխելու չէ. Օր. * Այնու ՈՐ պակաս գտար. Օր. ՈՐՈՆՔ: * Տեսեալ զայն՝ ՈՐ յառաջն ուրանային. Օր. ԶՈՐ:

Երբեմն ալ գործիականը ՈՐՈՎՀԵՏԵՒ մըտաքով կըբանեցուի. Օր. * ՈՐՈՎ 'ի սակաւուդ հաւատարիմ եղէք, 'ի վերայ բազմին կացուցից:

Երբեմն ալ յարաբերական ՈՐԸ կրկնելով, կընշանակէ ՈՄԱՆՔ. Օր. * Ժողովեցին ՈՐ շատ, և ՈՐ սակաւ:

---

Հթ. Դիմորոշական դերանունները ի՞նչպէս կըբանեցուին.

Պ. Ս, Դ, Ն, յօդերը՝ անուններու, դերանուններու, բայերու, ընդունելութիւններու, երբեմն ուրիշ մասանց ետևն ալ կըկըպչին. Օր. * Զորդիդ քո սիրելի: * Զոր հայն առնէ: * Որ ընտրեացն զմեզ: * Որ գալոցն է: * Զոր կանխաւն առնէի:

Ասոնք շատ կերպով կըբանեցուին.

Ա. Բառերուն վրայ դըրուելով՝ մէկ բանմը ուրիշներէն կորոշեն. Օր. Հոգի՝ մարդուս հոգին ալ կըսուի. իսկ Հոգին՝ Հոգին սուրբ ըսել է, սուրբ Երրորդուե անձանց մէկը:

Բ. Բառերուն վրայ կըդըրուին էական ԵՍ, ԴՈՒ, ՆԱ, դերանուններուն տեղը. Օր. * Աղքատ խօսեցելն. Օր. ԴՈՒ ԱՐՔԱՅ ԻՆԷ: * Տէրդ և վարդապետդ. Օր. ԴՈՒ ՈՐ ՏԷՐ ԵՍ, ԴՈՒ ՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՍ:

Գ. Բառերուն վրայ կըդըրուին՝ ԻՄ, ՔՈ, ԻՒՐ, ստացական դերանուններուն տեղը. Օր. * Առնու տէր ըզտէրդ 'ի գլխոյ քումմէ. Օր. ՏԷՐ ՔՈ:

Դ. Բառերուն վրայ կըդըրուին՝ ԱՅՍ, ԱՅԴ, ԱՅՆ, ցուցական դերանուններուն տեղը. Օր. * Երկիրդ՝ զոր կոխես. Օր. ԱՅԴ ԵՐԿԻՐ:

Ե. Յարաբերական ՈՐ դերանունին դէմ

քը կամ տեղը որոշելու համար, անոր ետևէն եկած բային կմ՟ ինչ բառի վր՟ ալ ըլլայ՝ կըդրուին. գր * Զոր գրեցիր. թր ղայտ՝ ղըր Գըէյի: * Յոր եստ իջանեմ. թր այտ՝ յոր էս ԷՋանէՍ: * Որ զկնիտ գայ. թր այտ՝ որ ղՆՆէ Գայ: * Ընդ որում և համարձակեալ խօսիմ. թր տոն՝ ընտ որում համարձակէալ խօսէՍ: * Զոր եստ սիրեմ. թր տոն՝ ղըր էս սէրէՍ: * Որում գուն վկայեցեր. թր նա՝ որում տոն վկայէցէր:

Ղ. Նաև որ դերանունէն շինուած բառերուն ետևի բայերն ալ աս կերպով դիմորոշական յօդ կառնեն. գր * Որպէս էքտ անխմոր. * Որպէս աստցուք. * Ոչ որպիսիս կամիցիմն գըտանիցեմ զձեզ:

Ճ. Ուր որ ալ զօրութ՟ կնմայլի այս, այտ, այն, դերանուններուն մէկը, կամ ոք յարաբերական դերանունը, կամ ուր որ յարաբերականի նշանակութի ունեցող միջակյան անունմը կայ նէ, ետևի բայը յօդ կառնէ. գր * Գիտէք զինչ արարիտ ձեզ. թր ղայտ՝ ղըր ինչ արարի: * Այլ զի յղեցէքտ առ իս. թր ղայտ՝ ղտ որոյ յղէյէք: * Զի՞ կայ մեր և քո՝ զի եկիրտ այսր տանջել զմեզ. թր քո՝ որ էկիր, կամ ղտան որոյ էկիր: * Պահեալ լիցի՛ ըղգալուստ որդւոյն իւրոյ մինչև 'ի վախճան աշխարհի, քան փութացաւն և առաքեաց 'ի կէս դարին. թր քան ղայն՝ զի ֆուրթայտ: * Այն քո չար է՝ զի ես առատս եմ. թր ղան այսորէն՝ զի էս առաք էՍ:

Ը. Ասոնցմէ կըհետևի որ՝ տեղմը կամ ժամանակմը ցուցընող մակբայներուն ալ ետևի բայը կամ բառը յօդ կառնէ. գր * Ուր ես եմ, և նոքա լիցին ընդ իս. թր անտ ուր էս էՍ: * Եւ ուր երթամն գիտիցէք. թր ղտեղին ուր էրթաՍ: * Ուր քոն նստի. թր անտ՝ ուր քո նսսի:

* Մինչ հայքն մարմնով. Թր. յաշընտած իքէն
էտ+: * Մինչ առ ձեզ եմ. Թր. սիզտէ իքէն
ատ յէզ էն:
ժ. Նաև որպէսի նշանակութիւն ունեցօղ
հարցական մակբայներն ալ աս կանոնին
տակը կերթան. Օր. * Զիմ՞րդ այժմ
տեսանէ՝ ոչ գիտեմք. Թր. ստ ինչպէս իմ-
դիտէ կօր՝ պէնք պիլմէզ: * Զիմ՞րդ կամս
հիացեալ. Թր. սա ինչպէս շաշտէր էն:
ձ. Ըստ անգամ ալ հական դերանուն-
ներու վրայ կդրըրւին, անոնց նշանակու-
թեն սաստկացընելու համար. Օր. * Իբրև
զձեզ եւ. Թր. իբր սիզին կիպի:* Դու
ինքնդ. * Ես ինքնս. ևն:
ծա. Երբեմն ալ էս, դու, նա, հական
դերանուններուն տեղը կդրըրւի բային
վրայ, Օր. * Անուցանել զպատանեակն
զԱրտաւազդ, զի կացցէ 'ի տեղի հօր
իւրոյ, և զնորուն գործ քաջութե անուա-
նի զօրավարութեն յաջորդեսցէն. Թր.
յաջորդէոցէ նա:
ծբ. Ըստ անգամ ալ աս յօդերը կդրըր-
ւին՝ առջի դրրած բառը չիկրկնելու
համար. Օր. * Եթէ Ա փայտ գտլար զայս
առնեն, Բ չորն զի՞նչ լինիցի. Թր. ուր
ծայր:
Ստացական դերանունը գոյականէն ա-
ռաջ դրըւած ըլլայ նէ, յօդը ինքը կառ-
նէ. բայց թէ որ ետև դրըւի նէ, չի-
կըրնար առնուլ. ուստի բանից խմոց
չիկըրնար ըսուիլ, հապա՝ բանից խմոց:
Նախադրութիւնները, շաղկապները, միջար-
կութիւնները, յարաբերական դերա-
նունը որ, միջական անունները՝ ով, ո,
ինչ, ոք, ոմն, իմն, ու բայերուն հրա-
մայական եղանակները դիմորոշական
յօդ չեն առներ: Բայց միայն երբոր
անունի պէս բանեցւին նէ, կառնեն.
Օր. * Եւն այլ է, և ևևան այլ:
Երբոր ա կամ ո ձայնաւորներով վերջա-

ցած բառերուն ետևը դիմորոշական յօդերը կըպցընել պէտք ըլլայ նէ, մէջը յ տառմ՛ինալ պէտք է ևելցընել. օր. Եղև-այն . 'ի Նմայն . քոյդ . սայս . ևն ։

---

### Բայերը բանեցընելու կանոնները ։

Հց. Բայերը անուններուն հետ ի՛նչպէս կըվարուին ·

Պխ. Մէյմը իրրև իրենց տէր կառնին անունները, որ անուն բայի կըսուի. մէյմընալ իրրև իրենց հպատակ, որ խնդիր բայի կըսուի ։

Հց. Անուն բային ի՛նչ հոլով կըդըրուի ·

Պխ. Թէ որ բայը դիմաւոր է, անուն բային ուղղական կըդըրուի. օր. * Տրդատ յաղթեաց Հռչէի ։

Իսկ թէ որ բայը անդէմ է, հասարակօրէն սեռական կըդըրուի. օր. * Յաղթահարեալ Տրդատայ զՀռչէ, պսակեցաւ ։ * Մինչև Բաղձայ իսկ ասել՝ թէ մեռաւ ։

Բայց աներևոյթ բայերուն անուն բային դերանուն ըլլայ նէ, շատ անգամ տրական կըդըրուի. օր. * Լսել ինձ զձայն օրհնութեն քո ։ * Փառանդել նմա զանպատում զկեանս ։

Նմանապէս յարակատար, դերակատար, ու ստորադասական անցեալ ժամանակներուն եզակի երրորդ դէմքը՝ սովորաբար սեռական անուն բայի կառնեն. ու եզակի ըլլայ, յոգնակի ըլլայ, ու ի՛նչ դէմք ըլլայ նէ ալ, իրենք չեն փոխուիր. օր. Տեսեալ է իմ, տեսեալ է քո, տեսեալ է նորա ։ Տեսեալ էր մեր, ձեր, նոցա ։ Տեսեալ իցէ իմ, մեր, ևն ։

Ուստի երբեմն անցեալը դիմաւոր բայ ալ մէկ տեղ ունենայ նէ, անուն բային նոյնպէս սեռական կառնէ. օր. * Զչարն չար ասէ, որոյ զնոյն ստացեալ ունիցի ։

Բայց երբեմն ալ սա անդէմ բայերը դի֊մաւորին պէս ուղղական անուն բայի կառնեն. օր. Մի՛ ևս ըլնել՚ի նմա բնակիչ: * Ծառայք հանդերձ տերամբք փանջէաւ, և ամենքն թագաւորաւն զնոյն չարչարէաւ:

Թէ որ բայը դիմաւոր է նէ, անուն բային կըհամաձայնի թըւով ու դէմքով. օր. * Ճոխս աղքատացայ:

Թէ որ նոյն դէմքով շատ անուն բայի֊ներ ըլլան նէ, բայը հասարակօրէն յոգ֊նակի կըդըրուի. օր. * Անդրէաս և փի֊լիպպոս ասէին ցՅս: Իսկ թէ որ այլևայլ դէմքով անուն բայիներ ըլլան նէ, ա֊ւելի պատուական դէմքովը կըդըրուի բայը: Աւելի պատուական դէմք կը֊համարուի առջինը քան զերկրորդը, ու երկրորդը քան զերրորդը. օր. * Ես և դու գնացաք 'ի միասին:

Թէ որ անուն բային յոգնակիի ուժ ու֊նենայ նէ, ինչպէս թուական անուն֊ները երկու, երեք, և՛ն, թէ՛ և ինքը ե֊զակի ըլլայ, բայը յոգնակի կըդըրուի. օր. * Լաւ են երկու քան զմի: Բայց ուրիշ հաւաքական անունները թէ՛ ե֊զակի թէ՛ յոգնակի կըրնան առնուր. օր. * Գունդ զօրացն դարձան: * Ցրուեցաւ գունդն:

Շատ անգամ անուն բային կամ բայը զօ֊րութեամբ կիմացուի. օր. * Եթէ կամիս մտանել 'ի կեանս, պահեա՛ զպատուի֊րանս: օր. եթէ կամիս դու, և՛ն: * Կեր֊պարանօք բազում խոնարհ.ք, իսկ ար֊դեամբք դուն ուրեք: օր. Կերպարանօք բազում էին խոնարհ.ք, և՛ն:

Երբեմն անուն բային ուրիշ բայիմը խըն֊դիր ըլլալով, հայցական կըդըրուի. օր. * Ասաց զինքն լինել քաւիչ մեղաւորաց:

---

Հր. Բայերը ի՞նչ հոլովով խնդիր կառնեն.

Պխ. Խնդիր բային երկու կերպ կըլլայ.

մէյմը սեռի խնդիր, մէյմընալ՝ խնդիր բնութ̅ե :

Ներգործական բայերուն խնդիր սեռին հայցական կըլլայ. զ̅ր * Մեզ ծածկէ զճառագայթս արեգական : Բայց ինչ-պէս որ վերը ըսինք, երբոր խնդիրը ան-որոշութիւն մը կունենայ նէ, հայցակա-նը առանց զ նախդիրին կըդրուի, որ կըսուի անորոշ հայցական. զ̅ր * Ճառա-գայթս արձակել :

Կրաւորական բայերուն խնդիր սեռին կըլլայ բացառական. զ̅ր * 'Ի Տ՟նէ ուղ-ղին գնացք առն :

Այս երկու տեսակ բայերն ալ սեռի խըն-դիրէն զատ՝ խնդիր բնութ̅ե ալ կառ-նեն այլեւայլ հոլով, որ վարժութ̅ե կը-սորվըւի. ինչպէս չէզոքական բայերուն-նալ, որ մինակ խնդիր բնութ̅ե կառնեն :

Բայց ընդհանրապէս ամէն բայ իր ար-մատը՝ ուսկից ինքը կելլէ, կամ անոր նման նշանակութիւն ունեցող բառերը, գործիականի տեղ՝ հայցական կառնէ զայով կամ առանց զայի. զ̅ր զսէր սի-րել. ամաչել զամօթ. ախտանալ ախտս սաս-տիկ. կորնչել ապականութ̅ի. ննջել զքուն.

Այն բայերը, որ գնելու կամ աժէքի նշա-նակութիւն մը ունին, սեռական խնդիր կառնեն. զ̅ր Գնել արծաթոյ. տալ կամ վաճառել արծաթոյ. գնոց ստանալ. եւն: Բայց երբեմն գործիական ալ կառնեն :

Շատ անգամ գործիական խնդիրին տե-ղը տրական կըդրուի ինչ և իցէ բայե-րու. զ̅ր * Ասել 'ի ձայն. փ̅խ ձայնիւ: * Կո-տորել 'ի սուր, փ̅խ սրով: * Վառեալ 'ի զէն. փ̅խ զինու :

Երբեմն կրաւորական բայերը չէզոքակա-նի մըտքով հայցական խնդիր կառնեն. զ̅ր * Եդաւ զթագ : * Գօտի ընդ մէջ իւր ածաւ :

Ներգործական բայերն ալ, որ էական

բայով կրաւորական կըլլան, երբեմն ներգործականի նշանակութիւնին կըպահեն. Գր * Սա պծ գուշակեալ լինի : * Եղեն զգեցեալք զՔս :

---

Էական բայը էմ, հայցական խնդիրով կընշանակէ՝ տեղմը կենալը. Գր * Եղէ անդ. Թր դուրուրս էրէմ. Թր Իրէ՞ օր կէչայ հան : Տրականով կընշանակէ բանի մը տեղ ըլլալը. Գր * Լեր դու ինձ յորդի. Թր օրտայա փէղ էղէր ինծի :

Երբեմն ալ էմ էական բայը, պէտք ըլլալը կամ արժան ըլլալը կըցուցընէ. Գր * Զի՞նչ ինչ առնել էր, և ոչ արարի. Թր Ինչ բան պէտք էր ընէլ, ու էս չըրի : Այս նշանակութիւնը գոմ բայն ալ ունի : Էմը կրկնըելով խօսքին ուժը կուտայ. Գր * Եմ էմ և ես մարդ :

Էն որ կամէ որ, կընըշանակեն ոմանք :

---

Հ. Աներևոյթ բայերը ի՞նչպէս կըբանեցւին .

Պ. Կրաւորականնին ալ, ներգործականնին ալ երրորդ հոլովմանը պէս կըհոլովին, բայց յոգնակի չունին : Շատ անգամ անունի տեղ դըրուելով կըլլան անուն բայի, խնդիր բայի, խնդիր անուան, ևն։ Շատ անգամ ալ բայի տեղ կըդըրուին, ու կըսուին արգէլէլէ խնդրոյ՝ բային խնդիրը իրենք առնելով. Գր * Ուսոն մեզ առնէլ զարգարուն : Թր Ուսոն մեզ դարդարոն : Շատ անգամ ալ ուղղական կըդըրուի, ու տրականի ուժ ունի. Գր * Ժողովէին ժողովուրդք բազում լսել և բժշկել՝ի հիւանդութէ իւրեանց : Թր 'ի լսել և 'ի բժշկել:

Շատ անգամ նախդրիւ տրական կամ գործիական դըրուելով, կընշանակէ երբոր. Գր * Յերթալ քո և 'ի դառնալ յԵգիպտոս : Թր երթալու ատենդ ու դառ-

նալըու ատէնը : * Անելով Նոյա զայս . օր. Երբոր աս բանը ըրին :

Երբեմն ալ իր բային հետ կրկնուելով, կըսաստկացընէ նշանակութիը. օր. *Տալ ետու կնիք. օր. Իրաւ ղրկէցի: *Ունել ունէր պարծանս. օր. Իրաւ որ կրնար պարծել: * Օրհնելով օրհնեցից . օր. Մշտ օրհնեմ: *Հարկանելով հարեր . օր. աղէկ մը զարկեր:

Աս կերպով անուններն ալ կըբանեցուին. օր. * Ապականելով ապականեսցի երկիր, և յափշտակութեամբ յափշտակեսցի երկիր . օր. Բոլորովին աւրըւեցին, ու բոլորովին թաւալեցաւ :

Երբեմն ալ եալ ընդունելութիւններու ուժ ունի . օր. * Վաղվաղակի լինելոյ որդւոյ խորոյ արար պատկեր . օր. եղելոյ : * Հայցեն խնդրելով յերկնից . օր. խնդրելով:

Աներևոյթը շատ անգամ նախադրութիւններու հետ՝ սեռականի ու տրականի տեղ ուղղական կըդըրուի . օր. * Վա՛ն մարդի կորուսանել : * Առանց խօսել: * Յետ զերկիւղն թող հայցել : * Փոխանակ համառօտիւ ասել:

Աս հոլոված աներևոյթները կըսուին դէրբայ :

---

Ընդունելութիւնները բանեցնելու կանոնները:

Հց. Ներկայ ընդունելութիւնները ի՛նչպէս կըբանեցուին.

Պխ. Ներկայ ընդունելութիւնները որովհետև ածականի տեղ կըդըրուին, անոնց համաձայնութենը կանոններով կերթան : Բայց բայի ուժ ալ ունենալով, իրենց բային ուզած սեռի ու բնութե խնդիրները իրենք ալ կառնեն . օր. * Քեզ որդւոյ, շնորհողիդ մեզ զկեանս, փառք: * Հայեցող յօձն պղնձի :

Բայց ներգործական բայերուն ընդունե-

լուններըն՝ իրենց հայցական սեռի խընդիրին տեղը շատ անգամ սեռական կառնեն. գր. խնամօղ արարածոց կըսուի սովորաբար, խնամօղ զարարածս ըսելու տեղը։ Հասարակօրէն ներգործականի կամ չէզոքականի նշանակութիւն ունին, բայց տեղ կըլլայ որ կրաւորականի միջոցով կըբանեցուին. գր. * Անանձնապետ 'ի քէն վարժողաց. փխ. վարժելոց։

Շատ անգամ ալ կարծես որ ընդունելութիւն է, բայց ընդունելութիւն չէ, հապա ող մասնիկը սաստկութեան նշանակութիւն մը կուտայ. գր. * Կերողն և արբեցող, փխ. ըմպօղող, պէտօն։ * Չեմ խօսող ոք. փխ. ճարտասան։

---

Հ. Անցեալ ընդունելութիւնները ինչպէս կըբանեցուին.

Պ. Անցեալ ընդունելութիւններն ալ թէ ածականի ու թէ բայի տեղ վարուելով, անոնց համաձայնութեանը կանոնները ունին։

Բայց երբեմն ներգործական էալ ընդունելութիւններնալ՝ օղ ներկայ ընդունելութիւններուն ուժը կունենան. գր. * Կանանց զմծապաշտութեն յանձն առելոց։ փխ. յանձն առողաց։ * Ունի յինքեան զանձս ընծայելոյ պարտուցմ մահու։ փխ. ընծայօղս։

Երբեմն ալ աներևոյթի ուժ ունին. գր. * Յետ զառանին իւրեանց յարմարելոյ իրս։ փխ. յարմարել։ * Կարօղ գոլով զանտեսութեն տարփելոյ խորհուրդ։ փխ. աւարտել։ * Գերչաց կորուստ եղելով. փխ. ըլլելով։

Աս անցեալ ընդունելութիւնները մասնաւոր կերպովմընալ բայցառականին տեղը սեռական խնդիր կառնեն. գր. * Կաշկանդեալք երկաթեայ գնչերոյ. փխ. երկաթեայ գնչերոյ։ * Կոչեցեալք պատուականութեն,

քուեցեալք հնարաւորէդ . Օր. 'ի պաշտպանողէդ , 'ի հնարաւորէդ :

---

Հց. Ապառնի ընդունելութիւնները ի՞նչպէս կըբանեցուին .

Պտ. Ապառնի ընդունելութիւնները , որ լոց կըվերջանան , գրեթէ միշտ էական բայի հետ՝ բայի տեղ կըվարուին . բայց երբեմն մինակ վարուելով կըհօլովուին ալ , նախդիրով միայն . Օր. * Զգալոցն պատմեսցէ , ևն :

Իսկ ւծ վերջացածները երբոր բայի տեղ դըրուին նէ՝ բայերուն համաձայնութեանը կանոնները կըպահեն :

Հասարակօրէն կրաւորական ու չէզոքական նշանակութի ունին , բայց շատ անգամ ներգործականի տեղ ալ կըբանեցուին . Օր. * Հայցելի է մեզ զհրեշտակացն պահպանութիւն։ Մանաւանդ երբոր ներկայ ընդունելութիւնի տեղ վարուին նէ . Օր. * Որ եղև առաջնորդ ունելեացն Յ͞սի : Օր. ունողացն Յ͞սի :

Աս ւծ վերջացած ընդունելութիւններին ալ մասնաւոր կանոն մը ունին , որ շատ անգամ տրական խնդիր կառնեն բացառականի տեղ . Օր. * Գովելիք աշխարհի , և բաղձալիք վերնոցն պետութեանց :

Իսկ ուրիշ տեղուանք ածականի պէս կըբանեցուին Օր. * Ջնջելի բնութ͞ : * Անճառելւոյն հասիք երանութ͞ե :

---

Նախադրութիւններուն գործածութեանը վրայ :

Հց. Նախադրութիւնները ի՞նչպէս կըբանեցուին .

Պտ. Բուն յատուկ Նախադրութիւնները՝ որ հոլովակերտ կըսուին , առ , առ 'ի , ընդ , ըստ , 'ի , յ , ց , զ , միշտ բառէն առաջ կըդըրուին , ու այլևայլ հոլովներու հետ՝

այլեւայլ նշանակութիւն կունենան, ինչպէս օրինակները առջի մասին մէջը գրինք ։ Իսկ հոլովառու նախադրութիւնները ետեւ ալ կը դրուին. ու կան ոմանք, որ այլեւայլ հոլովով ալ խնդիր կառնեն. ասոնք վարժութ. կը սորվուի ։ Բայց որպէսը, ներքոյը, ու ըստը, որ հասարակօրէն հայցական խնդիր կառնեն ու երբեմն ալ սեռական, շատ անգամ իրենց քովի եղած բային ուզած խնդիրն ալ կառնեն. օր. *Խորշի ՚ի ճանապարհաց մերոց ներքոյ ՚ի պղծութեանց ։ *Փախչէ ՚ի մահ ըստ ՚ի կենաց ։ *Որպէս յածայն սեղան ՚ի սոյն մերձենայ ։ *Ծխանալի զնովաւ որպէս զանձափաւ ։

---

Մակբայներուն գործածութեանը վրայ ։

Հր. Մակբայները ինչպէս կը բանեցուին ․

Պխ. Մակբայներուն մէջն ալ պարզը կայ նախադրութեանց պէս, օր. այժմ, ապ, դեռ, մերթ, երբ, միշտ, եւն. ու ուրիշ բառերէ շինածները կան, օր. ինքնին, բիւրիցս. եւն ։

Ուստի որ եւիցէ ածականմընալ բային վրայ դրուելով կը փոխուի մակբայ կըլայ, մանաւանդ թէ որ « տառ մը եւելցընես եանէնին. օր. մեծապէս կարդալ. մեծ նա մխիթարել. երագն ընթանալ. խաղաղուն մեռանել, եւն ։

Շատ անգամ մակբայներն ալ ածականի պէս կը վարուին. օր. արջառ յոյժ. յերբեմնի ժամանակի. եւն ։

Մակբայները երբեմն բայէն առաջ երբեմըն ալ բայէն ետքը կը դրուին. օր. *Միշտ ուսանիմ, և երբէք ՚ի գիտութեան ճշմարտութեան ոչ հասանեմ ։ *Կցորդակից լեր բժշկապէս ։

Երբեմն ալ մակբային ու բային մէջը ուրիշ բան կըլլայ. օր. *Նա դու մի զանբանիցն կենդանութեան ինձ ՚ի դէմս ածէր ։

Երբեմն ալ սաստկութեան համար կկրկնուի նոյն մակբայը . օր * Այո այո՝ և ես մի եմ 'ի նոցանէ ։

Մակբայը չէ թէ մինակ բայի վրայ, այլ ընդունելութիւներու, բայանուններու, ու բայի ուժ ունեցող ածականներու վրայ ալ կըդրուի . օր *Լռեցոյց զմուշեգ-նաճար գոչումն ։ * Մեծ է փառք քա-հանայութեան յարժանապէս ունօղացն ։ *Անե-նուէն անշարժք 'ի բարիս ։

Մակբայները աստի, այտի, անտի, աստ, անդ, այսր, այդր, անդր, շատ անգամ ցուցական դերանունի կամ դիմորոշա-կան յօդի տեղ կըդրուին . օր * Տարա-բնակ լինել 'ի բնակութեան աստի ։ օր յայսմա-նէ ։ * Յս գնաց 'ի գերեզման անդր ։ օր 'ի գերեզմանն ։ * Սասանեցաւ աշխարհս մեր 'ի մերոյ աստի ։ օր 'ի մերոյս ։ * Ուր էին անդ ծառք . օր ուր էինն ։

---

Շաղկապներուն գործածութեանը վրայ ։

Հ. Շաղկապները ի՞նչպէս կըբանեցուին .
Պա, Աս բանը աւելի վարժութեամբ ու հին հեղինակներու գիրքերը կարդալով կըսորվուի, դիտելով որ մէկ բանին սկիզ-բը ի՞նչ շաղկապ կըդրնեն . օր արդ, եւ, ևն. պատճառ մը բերելու ըլլան նէ՝ ի՞նչ շաղկապով կըկապեն . օր զի, քանզի, վասն զի, ևն. բանմը մակաբերելու ըլ-լան նէ՝ ի՞նչ շաղկապ կըգործածեն . օր ապա, ապա ուրեմն . ևն ։ Ասոնց պէս ու-րիշ շաղկապներն ալ դիտելով, կըսոր-վուի որը ո՞ւր կըդրուին ։

Երբեմն զօրութեամբ կիմացուի շաղկապը . օր * Թէպէտ փակեաց զդրունս եկեղե-ցեացն, նոքա զծմ տուն եկեղեցի արա-րին . օր բայց նոքա ։ Երբեմն ալ աւելորդ տեղը կըդրուի . օր * Առ երկիւղի անկանե-լոյն զարհուրեալ և թմրեցի . օր զար-

հոուրեաւ թնմրեոջէ ։

Երբեմն ալ կըկըրճատուի. օր. * Թէղէք յառաջ, և Թէ յետոյ. փխ. Թէղէք յետոյ։

Շաղկապը հասարակօրէն բանին սկիզբը կը դրուի, բայց երբեմն ետև ալ կը դրը-ւին աս շաղկապները՝ նթէ, ապա, ուրեմն, ապաքէն, ոոխայն. օր. * Սպաներ ուրեմն ։ * Այս ցուցանէ ապա, զի են ։ * Ընդ իս նթէ ոք մտանիցէ ։ * Տես ոոխայն նմին միաբան ։

Այսր ներհակը անգամ շաղկապը, որ հա-սարակօրէն գոյականէն ետքը կը դրուի, երբեմն առաջ կանցնի. օր. * Որ անգամ և հետք մի՛ երևեսցին։ փխ. հետք անգամ։

---

## Ուղղագրութեն վրայ ։

Հր. Ուղիղ շարադրելու կանոնները ըսիր, հապա ուղիղ գրելու քանի՞ բան պէտք է.

Պխ. Բաց 'ի գիտնալէն թէ որ բառը որ տառով պիտի գրուի, երկու բան ալ պէտք է. մէյմը տողադարձներուն բա-ժանմունքը գիտնալ, մէյմըն ալ կէտերը։

Հր. Բաժանմունքին կանոնները որո՞նք են.

Պխ. Առանց բաղաձայնի ձայնաւոր մը վա-րի տողը չանցնիր. բայց թէ որ բաղա-ձայնը վերի մնացած վանկին բնական է նէ, ան ատենը կանցնի։ օր. ան — արար կը-լայ, չէ թէ ա — նարար. կամ թէ որ եր-կու ձայնաւոր քովէ քով ըլլան նէ, ան ատենն ալ կանցնի. օր. մարի — ամ։ Թէ որ երկու բաղաձայն են նէ, մէկը վերի տո-ղին ծայրը պէտք է թողուլ, մէկալը վար անցընել. օր. խորք — կածաղ։

Երկբարբառները, փխ. երկու ձայնաւորէ մէկ եղած վանկերը, պէտք չէ բաժնել. օր. աւ — ետիս պէտք է գրել, չէ թէ ա — ւետիս ։

Բարդ բառերը սովորաբար բարդած տե-ղացը կը բաժնուին. օր. նոր — ընծայ, չէ

Թէ նա – ընծայ . օրէնս – տուողաց , չէ թէ օրէնս – տուողաց :

Տողին ծայրը , իմացընելու համար որ դեռ բառը չէ լըմընցած , մէկ ասանկ (‿) նշանմը կըդըրուի , որ ԵՆԹԱՄՆԱՅ կըսուի :

Հ . Կէտերը որո՞նք են , ու ի՞նչ բանի համար կըդըրուին .

Պ . Կէտը նշան մընէ , որ կարդալու ատենը կենալու տեղուանքը գիտնալու համար կըդըրուի : Զորս են աս կէտերը . ԲՈՒԹ՝ որ է աս (`) , ՍՏՈՐԱԿԷՏ՝ որ է աս (,), ՄԻՋԱԿԷՏ՝ որ է աս (.) , ու ՎԵՐՋԱԿԷՏ՝ որ է աս (:) : Երբոր ձայնդ քիչմը բարձրացընելով կուզես մէկ բառմը ետեւինէն զատել առանց կենալունէ , բութը կըդըրուի . երբոր դեռ խօսքը նոր ըսկսած է , ու ետեւինին կըպչիլ կուզէ , ան ատենը կըդըրուի ստորակէտը . երբոր բանը ինքիրեն կըհասկըցուի , ու չուզեր ետեւինին կըպչիլ , կըդըրուի միջակէտը . իսկ երբոր կըլըմըննայ միտք բանին , կըդըրուի վերջակէտը : Օ̃ր . Իբրեւ այգ եղեւ , կոչեաց Յ̃ն զաշակերտսն իւր . և ընտրեաց ’ի նոցանէ երկոտասանս՝ զորս և առաքեալս անուանեաց :

Կայ նշան մընալ ասանկ ( ) , որ փակագիծ կըսուի . ասիկայ կըգործածուի մէկ բառմը կամ խօսքմը զատելու համար , որ չի խառնըուի քովի եղածներուն հետ:

Հ . Հապա ձայնը վերվար ինջեցնելու նշանները որո՞նք են .

Պ . Ասոնք են . ՇԵՇՏ՝ որ է աս (՛), ՊԱՐՈՅԿ՝ որ է աս (՞), ու ԵՐԿԱՐ՝ որ է աս (՜): Երբոր զարնել կուզես վանկի մը վրայ , կըդըրուի շեշտը . երբոր հարցընել կուզես , կըդըրուի պարոյկը . իսկ երբոր երկընցընել կուզես , կըդըրուի երկարը : Իրեքին օրինակն ալ գըտնենք հոս . Մ՛Ի հայիր : Զ՞Ի հարկանես զիս: ԵՐԱՆԻ՜ որ սուրբ են սըրտիւք :

Լուծմունք ընթեռլու օրինակի :

Ինձ լուր , որդեակ , հօր քո խրատիս ,
Եւ յուսմանէ մի՛ ծուլասցիս .
Եթէ 'ի յայս սէր բորբոքիս ,
Անանց կենաց ժառանգ լինիս :

---

Լուծումն ըստ մասանց բանի :

Ինձ տրական է , ուղղականը կըլլայ ես , որ էական դերանուն է :

Լուր հրամայական է , սահմանականը կըլլայ լսեմ , զարտուղի բայ է :

Որդեակ կոչական անուն է , սեռականը կըլլայ որդեկի :

Հօր սեռական անուն է, ուղղականը հայր կըլլայ :

Քո սեռական դերանուն է , ուղղականը դու կըլլայ :

Խրատիս սեռական անուն է , ուղղականը խրատ կըլլայ , սեռականը խրատու . հոս ստանաւորին վերջը բերելու համար խրատի գրեր է . ս գիրն ալ դիմորոշական է :

Եւ շաղկապ է :

Յուսմանէ բացառական անուն է , ուղղականը ուսումն կըլլայ :

Մի՛ մակբայ է :

Ծուլասցիս հրամայական ապառնի է . սահմանականը ծուլանամ կըլլայ :

Եթէ շաղկապ է :

'Ի յայս նախդրիւ տրական է . ուղղականը կըլլայ այս , որ ցուցական դերանուն է :

Սէր ուղղական անուն է , սեռականը կըլլայ սիրոյ . նախդրիւ տրականի տեղ դըրած է , այսին նախդիրը իրեն ալ կօգնէ :

Բորբոքիս սահմանական ներկային եզակի երկրորդ դէմքն է :

Անանց ածական անուն է , ուղղական հոլով :

Կենաց սեռական անուն է , ուղղականը կըլլայ կեանք . եզակի չունի :

Ժառանգ ուղղական անուն է :

Լինիս էական բային սահմանական ներկային եզակի երկրորդ դէմքն է ։

---

Լուծումն ըստ համաձայնութեան ։

Ինչ խնդիր է չէզոքական բային լո՛ւր ։
Լո՛ւր բայն է որդեակին ։
Որդեակ անուն բային է լուրին ։
Հօր յատկացուցիչ է խրատուին ։
Քո յատկացուցիչ է հօրին ։
Խրատու խնդիր է լո՛ւր բային ։
Եւ շաղկապ է, որ ետեւի ըսելուքը կըկապէ առջի ըսածին հետ ։
Ցուցմանէ խնդիր է չէզոք բային մի ծուլասցիս ։
Մի ծուլասցիս բայն է որդեակին, որ զօրութիւն կըկրկնուի ։
Եթէ շաղկապ է, որ թէութիւն մը կըցուցընէ ։
'Ի յայս ուէր․ այսը ածական է ուէր բառին, բոլորը մէյտեղ խնդիր ընուն է կրաւորական բային բորբոքիս ։
Բորբոքիս կրաւորական բայ է, անուն բային զօրութիւն կիմացուի դու ։
Անանց կենաց․ անանցը ածական է կենացին․ բոլորը մէյտեղ խնդիր է բային ժառանգ լինիս ։
Ժառանգ լինիս էական բայով շինած չէզոք է՝ ժառանգես ըսելու տեղը ։

Ուստի միտք բանին աս է․
Մտիկ ըրէ ինծի, տղաս, հօրըդ խրատին․
Ու բան սորվելու ծուլութիւն մ' ըներ ։
Թէ որ աս ջանքով վաստկիս նէ,
Չիվերջանալու կեանքի մը կըհասնիս ։

Աղէկ հասկընալու ու աղէկ թարգմանելու համար օրինակ :

Գրաբառ .

Ցանկամ ելանել՝ի մարմնոյ աստի, և լինել ընդ Քնի :

Եկա՛յք օրհնեալք հօր ի-մոյ, ժառանգեցէ՛ք զպատ-րաստեալ ձեզ զփառս :

Ինձ մերձենալ առ Ած բա-րի է :

Ցո՛յց ինձ ճանապարհ, յոր գնացից :

Երկայնամիտ լեր առ իս, և զամ հատուցից քեզ :

Որպէս փափագէ եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափագէ անձն իմ առ քեզ Աստուած :

Տէր, և դու գիտես՝ զի սի-րեմ զքեզ :

Աշխարհաբառ .

Կուզեմ մեռնիլ՝ որ Քնի հետ ըլլամ :

Հօրս օրհնենքը առնօղներ, եկէ՛ք ձեզի համար պատրաս-տըւած փառքը վայելեցէ՛ք :

Ինծի աղէկ է որ Այ մօտիկ ըլլամ :

Ցուցո՛ւր ինծի ճամբան՝ ուր որ պիտի երթամ :

Ինծի ժամանա՛կ տուր, ամ-մէն պարտքս կըվճարեմ :

Ինչպէս ծարւած եղջերու-մը աղբիւրը կըվազէ, անոր պէս իմ սիրտս ալ քեզ կը-բընորըւէ Աստուած իմ :

Տէր, դուն ալ գիտես որ քեզ կըսիրեմ :

Տաճկերէն :

Ցիսուսումուլա եաշամաք իչին՝ էօլմէմի արզուլէրիմ :

Փէտէրիմին խայր տուասըն ալանլար, կէ՛լին, սիզէ հազըր-լանան իզզէթէ նայիլ օլուն :

Ալլահա եագըն վարմաք պանա խայըրլը տըր :

Եիւրիւյէճէյիմ եօլու պա-նա կէօսթէր եա՛ րապպի :

Պանա վագըթ վէր, սանա հէփսինի էօտէյիմ :

Սուսամըշ կէյիք սու փու-նարլարընը արզուլէտիյի կի-պի, պէնիմ տէ ճանըմ սէնի արզուլէր եա՛ րապպի :

Սէնի սէվտիյիմի պիլիրսին եա՛ րապպի :

Խնայեա՛ 'ի ժողովուրդս քո։
Հայր, թո՛ղ դոցա. զի ոչ գի-
տեն զինչ գործեն ։

Պահեա՛ զիս, ա՜ծ իմ, զի ես
'ի քեզ յուսացայ ։
Յիշեա՛ զվախճանս քո, և յաւ-
իտեան ոչ մեղիցես ։
'Ի տուէ պատահիցէ նոցա
խաւար, և 'ի միջօրէի իբրև 'ի
գիշերի խարխափեսցեն ։

Առաքեաց Թագաւորն, և
եղոյծ զնա. կացոյց զնա տէր
տան իւրոյ, իշխան 'ի վերայ
ամենայն ստացուածոց իւ-
րոց ։

Ժողովրդեանդ վրայ խղճա՛։
Հայր, ներէ՛ ասոնց. ինչ որ
կընեն կոր նէ՝ չեն գիտեր ։

Պահէ զիս տէր իմ, յոյսս
քու վրադ դրեր եմ։
Վերջդ միտմիտա, ամենեւին
մեղք չես գործեր ։
Ցորեկուան ատենը մութը կը-
պըտըտին, ու օհարըսըկին գի-
շերուան պէս ձեռքով բըռնտը-
ռելով ճամբան՝ կըքալեն ։
Թագաւորը խրկեց, քակել
տըւաւ պանիկայ. իր տանը
տէր ըրաւ, ու ամմէն ունե-
ցածին չունեցածին վրակե-
ցու ըրաւ ։

Ճէմաաթընա քը՛յմա ։
Եա՛ փէտէր, շունլարա աֆվ
էյլէ, զիրա նէ էթտիքլէրինի
պիլմէզլէր ։
Պէնի հըֆզ էյլէ եա՛ րապպի,
զիրա իւմիտիմ սէնտէ տիր ։
Ագըպէթինի տիւշիւն տէ,
հիչ կիւնահ իշլէմէզսին ։
Կիւնտիւզիւն քարանլըղտա
տիւշէրլէր, վէ կիւնիւն էօյ-
լէսինտէ՝ կէճէ կիպի էլ իլէ
եօգլայարագ եիւրիւրլէր ։
Փատիշահ կէօնտէրիպ օնու
չէօզտիւրտիւ. օնու էվինէ
սահիպ, վէ պիւթիւն մամէ-
լէքինէ սուլթան նասպ էթ-
տի ։

ՎԵՐՋ

# Ց Ա Ն Կ


Ածական անուն 6 . 101–103 :
Ածանցական անուն 104 :
Աներեւոյթ 116 . 119 :
Անորոշ հայցական 106 :
Անուն 6 . 99 :
Անուն բայի 116 :
Անցողական բայ 38 . 58 :
Արգելելի խնդրոյ 119 :
Բաղդատական ածական 103 :
Բայ 46 . 116 :
Բայանուն 101 :
Բան և Բառ 5 :
Բարդ բառք 104 :
Բացայայտիչ 99 :
Բութ 126 :
Գերադրական ածական 103 :
Գոյական անուն 6 . 102 :
Դասական անուանք 36 . 108 :
Դերանուն 38 . 100 :
Դիմորոշական յօդք 38 . 45 . 105 . 113 . 116 :
Դէմք դերանուանց 38 . 45 :
Դրական ածական 103 :
Դէմք բայից 46 . 47 :
Եղանակ բայից 46 . 47 :
Ենթամնայ 126 :
Երկար 126 :
Զատական անուանք 36 . 108 :
Զարտուղի բայք 77 :
Զարտուղի հոլովք 24 . 29 :
Էական բայ 46 . 47 . 119 :
Էական դերանուն 38 . 110 . 115 :
Ընդունելութ̅ի *եալ* 90 . 91 . 121 :
Ընդունելութ̅ի *ող, լի* . 91 . 122 :
Ընդունելութ̅ի *օղ* 91 . 120 :
Թիւք անուանց 6 :
Թիւք բայից 46 . 47 :
Թուական անուանք 36 . 107 :
Ժամանակք բայից 46 . 47 :
Իգական անուն 104 :
Լուծմունք շարադրութ̅ե 127 :
Խնդիր անուանց 101 :
Խնդիր բայից 117 :
Խոնարհմունք բայից 46 . 47 :
Կէտադրութ̅ի 126 :
Կոչական հոլով 9 :
Կրաւորական բայ 46 . 56 . 118 :
Կրկնական անուանք 36 . 37 :
Համրական անուանք 35 . 108 :
Հասարակ բայ 46 :
Հայցական հոլով 105 . 106 :
Հարցական անուանք 32 . 108 :
Հաւաքական անուանք 117 :
Հոլովառու նախադրութ̅ի 93 :
Հոլովակերպ նախադրութ̅ի 92 :
Հոլովք անուանց 6 :
Մակբայ 94 . 114 . 123 :

Մակբաղի անուանք 36.37. 108։
Մասունք բանի 5։
Միջական անուանք 30. 107։
Միջակէտ 126։
Միջարկութիւն 97։
Յատկացուցիչ 99։
Յատուկ անուն 21. 24։
Յարաբերական դերանուն 38. 45. 111. 113։
Յոգնականք 105։
Նախադրութիւն 91. 122։
Նախդիր 8. 106. 107։
Ներգործական բայ 46. 53. 117։
Շաղկապ 96. 124։
Շեշտ 126։
Ոլորակ 126։
Ուղղագրութիւն 125։
Չէզոքական բայ 46։
Պարագայք անուանց 6։
Պարագայք բայից 46։
Պարոյկ 126։
Սեռք բայից 46։
Ստացական դերանուն 38. 42. 111. 113. 115։
Ստորակէտ 126։
Վանկ 5։
Վերբերական անուանք 34։
Վերջակէտ 126։
Տողադարձ 125։
Ցուցական դերանուն 38. 40. 110. 111. 113։
Փակագիծ 126։
Օրինակ Թարգմանութեան 129։



34